



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82
n-54

8

511

10676

13 APR 2011

13 APR 2011

A U S H U

ՀԱՅ ԿՈՆԱՑ ԺԱՂԱՎԱԾՈՒ

9. ՀԱՅԵՑՑՈՒԹԻՒՆ ՅԻՇՎԱՏԻՒԹԻՒՆ

9. 11. 1922.

Հայության կողմէից գործադրութեան մասին

ԱԼԵՔՏՈՎԵԳՐԱԳՈՅՆ.

АЛЕКСАНДРОПОЛЬ
Типографія О. Аникіяна

1904

ՀԱ-Հայկ յանդիք բարեգործություն

891.99-82

Դ-54

Հայոց պատմություն


մը

Ա Ս Տ Ւ Կ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

Դ. ԶԱՆՇԵԱՆԻ ՅԻՇԱՑԱԿԻՆ

1002
8081



Հայությանից՝ Խ. Ասրամեան
Գ. Զանշեան

ՀՅԱՆ. 98
28-Ն

Ա. Ե. Ք. Ա. Գ. Պ. Ա. Պ.
Տպարան Յովի. Ա. Փ. Բ. Ե. Ա. Բ.

АЛЕКСАНДРОПОЛЬ
Типографія О. Апинянца

1904

(6)

Պ Գ Տ Ա Ա

ԱՌՈՅՈՒԹՅՈՒՆ ՑՐԱՅՄԸ 802

Дозволено Цензурою С.-Петербургъ, 21 Ноября 1902 г.

Առաջնային գործադրություն
Համար 1000000

Տ062



ԱՌՈՅՈՒԹՅՈՒՆ ՑՐԱՅՄԸ 802



Ամեն գարերու և ամեն ժամանակներու մէջ՝ միշտ ապատ,
միշտ ընդարձակ ասպարէզ ունեցեր ևն այր
մարգիկ, ասպարէզ՝ խօսելու, խօրհելու, գրելու
և գործելու, մինչդեռ կանանց համար—մասնաւորապէս հայ կա-
նանց ըսկել կուղեմ—ստեծուեր է շատ սահմանափակ վիճակ
մը, շատ կաշկանդուած կեանք մը:

Հայ կինը ապատ չէ գրելու անխստիր ամեն նիւթերու
վրայ. «Փի՞չ պիտի ըսկեն» ի մտածաւմը շատ անզամներ կը խեղ-
պէ իր մտքին ու սրտին խօրերէն թռչող ամենէն վեհ ձայնը,
կը զատէ իր հոգւոյն ամենէն բարձր ձգտումները, և հետեարար
կը կաշկանդէ իր գրիչն ալ

Եթէ գրէ իսկ, որոշ նիւթերու վրայ կը գրէ, զորս գրէ-
թէ կը նշանակէ իրեն համար հանրային կարծիքը, և այդ
պատճառու, բռնազատուած, սողմուած բան մը, որոշ շա-
փէն գուրս չելնելու ջանք մը կտմ աւելի ճիշտը, վախ մը կայ
առ հասարակ իր բոլոր գրուածքներուն մէջ:

Ազատ չէ կարծիք յայտնելու համարձակ և անկեղծ այն
ամեն հարցերու մասին, որոց խառնուիլի՝ անպատշաճ նկա-
տեր է իրէն համար հանրային կարծիքը

Զատ անզամներ ընկերութեան մէջ՝ երբ խօսակցութիւնը
կը զառնայ ընկերային և հանրային խնդիրներու առանցքին

վրայ և կը ծեծուին այնպիսի հարցեր, որոնք կենսական կր նկատուին, զգուշաւոր ու երկշոտ կը տեսնես զինքը միշտ. սակայն նա կ'զգայ. համակ զգացում՝ է ինքը արդէն, Մէր և Գութ է միանգաման. անոր սիրտը վառուող կրակ մ'է, ուր կը տաքնան ու բննկին ամենէն նույրական ու սուրբ զգացումները, սակայն ատոնք իրենց մէջ կ'այրուին, մոխիր կը դառնան, որովհետեւ հայ կինը ազատ չէ ազատ հոսանք մը տալով իր զգացումներուն, վառել ու մաքրել նաև սիրտերն ամոնց՝ որոնք իրեն շուրջը կը գտնուին, այդ բանը կ'արգելէ իրեն հանրային կարծիքը . . . : Եւ ոչ միայն հայ ազգին, ամեն ազգերու մէջ ալ առ հասարակ կինը մինոյն տխուր ու կաշկանդուած կեանքն ունի, հազիւ ուրեմն իրրի բացառութիւն կինանք յիշել մէկ քանի ցանցառ ազգեր՝ ուր կինը քիչ թէ շատ կ'ապրի իրրի ազատ խղճի, ազատ համոզման և ազատ զաղափարի տէր էակ:

Չատ անգամ խորհեր եմ ինքնին թէ՝ երբ մեր երկիրը դուրս եկեր է վերջապէս անձանօթ խաւարներէ, թօթափեր է իր դարաւոր քոնը, և ծներ՝ մարդկութիւնը, ով արդեօք առաջին անգամ յղացեր է գծել կնոջ համար կեանքի այսրան նեղ սահման մը. նա ինչով է պակաս «Հզօր» կոչուած սեռն . . . : Առարկուի գուցէ թէ նա պակաս է խելքով, խորհելու և զործելու կարողութիւններով, թէ զուրկ է այն որոշ տրամադրութիւններէն՝ որոնք բացարձակ ազատութեան իրաւունքը կուտան այր մարզոն. և սակայն ու՞ր է ապացոյցը:

Միթէ օր մը ուղեցին քննել կնոջ մային ու բարյական ընդունակութիւնները: Չատ հեղինակներ կնոջ մազերնութիւնն ըրին, բաց խնդիր է թէ յաջողեցան արդեօք, դարձան ու դարձան անոր հոգւոյն ու սրտին շուրջը, իսկ մինչեւ խորերը կամ չկրցին, կամ աւելորդ համարեցին թափանցել: Ե՞րբ արդեօք տրուեցաւ կնոջ այն պայմանները կամ այն տեղը՝ ուր նա մերկապարանոց ցոյց պիտի տար իր բոլոր կարողութիւններն և տրամադրութիւնները, ըլլայ հանրային, ըլլայ ընկերային, ըլլայ նոյն իսկ ազգային ինդիրներու մէջ:

Կնոջ ըսին. «Պուն պիտի ծնիս, ամուսնանաս, քո կարգիդ ծնուդ պիտի տաս զաւակներու, ու պիտի մեռնես խոտի պէս, բոյսի պէս, աննշան և անշշուկ անցնելով աշխարհի վրային: Ուրիշ կոչում չունիս գուն. ընտանեկան յարկի մէջ է քեզի համար բացուած ասպարէզը, հոն ալ սակայն ազատ չես ուզածիդ պէս զործելու, հրամաններ պիտի ընդունիս և անոնց համեմատ շարժիս. զուն իրաւունք չունիս քեզի աւելի լաւ ու նպատաւոր երկցած կերպով զործելու»:

Ահա այսպէս որոշեցին, գատեցին ու վճռեցին: Տեսակ մը մերենայ, տեսակ մը զործիք, տեսակ մը խաղալիք դարձուցին կինը, առանց նկատողութեան առնելու թէ նա ևս կը ձգտի դէպի աւելի լայն ու աւելի բարձր զործունելութիւն մը իր խորհելու, զգալու, սիրելու, տառապելու, յուսալու բոլոր տրամադրութիւններովը, պիտի բանմ նաև բոլոր իրաւունքներովը . . . :

Անուրանալի է թէ՝ կինը ունի իր նկարագրին մէջ զոհուելու բնական ընդունակութիւնն մը ունի նպատակի համար. միայն թէ այդ նպատակը կատ ունենայ աւելի իր սրտին հետ: Նա պատրաստ է զոհուելու իր ծնողքին, իր ամուսնոյն, իր զաւակներուն համար, և այդ խիստ մօտիկ ըրջանէն զուրս ալ—վկայ մեր յեղափոխական կեանքին պատմութիւնը—դէպի չալրենիքի ազատութեան Ս. Գործը, նա ցոյց տուաւ անհուն անձնութիւնն, վսեմ բաշարատութիւն և հերսոսական զոհուգութիւններ . . . :

Եւ ոչ միայն վերջերս, ներկային, այլ և անցեալին մէջ, եթէ ուղենք ակնարկ մը նետել դէպի եռեն, դէպի հեռաւոր մնցեալը, մտնել չայտատան ճիշտ այն ժամանակներուն մէջ՝ յորս Վարդանանք իրենց դիւցազնի կուրծքերը թշնամւոյն սուրին տուած առիւծի պէս կը կուռին, պիտի տեսնենք «փափկասուն Ցիկնայք չայց աշխարհին» որ իշխանական փառքը, պերճաները ու հանգիստն արհամարելով կը թողուն որ սարգերը հանդարտորէն ոստայններ կախեն իրենց շրեղ ապարանաց պա-

տերէն վար, աղաստեն պերճ ունեալներուն կահն ու կարտսին և իրենք չոր գետմին վրայ ծնրադիր՝ կազօթեն առ Աստուածն պատերազմին յաջողութեանն համար:

Արի կիներ որսնք կը քաջալերեն, կ'ողեսրեն, կռուի կը պատրաստեն իրենց ամուսինները, զաւակները եղբայրները . . . մէկ կողմէն արիւոտ կուրծքերու վրայ վիրակասեր կը զնեն, միւս կողմէն հոգեարներու վերջին շունչը կնդունին, անդին իրենց ձեռքերով պատերազմի, այսինքն մահուան կը զրկեն իրենց սիրելիները, և արտասուր չունին, վասնզի անոնք մեզնէ շատ աւելի քաջ ըմբռնած են մահուան զիտակցութիւնը, և համոզուած են թէ՝ զիտակցօրէն ընդունուած մահը՝ խոստացուած Ընմահութիւնն է արդէն . . . :

Քսել է ուրեմն թէ՝ ամեն դարերու և ամեն ժամանակներու մէջ երբ առիթը ներկայացեր է, կամ աւելի ճիշտը ներկայացուցեր են, կինը ունեցեր է որոշ և նշանակիչ դեր, ոչ միայն ընտանեկան կեանքի սահմանին մէջ, այլ և գուրանը . . . կրօնական, պատերազմական, քաղաքական, ընկերութեան, յեղափոխական, մէկ խօսքով այն ամեն ինձուոտ, դժուարին, խորհրդաւոր հարցերու, խնդիրներու և գործերու առթիւ, որոնք շատ անգամ ամրոց ազգերու և ժողովուրդներու ճակատագիրը կը վճռեն . . . :

Դարձեալ եթէ թզտատենք հին և նոր ժամանակներու պատմութիւնները, պիտի տեսնենք որ ամեն անգամ երբ կինը ունէ կերպով դեր ունեցեր է աշխարհի վրայ անցած դարցած դէպերու և պարտգաներու մէջ, անոր մամնակցութիւնը և զործունելութիւնը միշտ վիրաբար աղզինք մը դուրս բերած է:

Հրէից պատմութիւնը ի միջի այլոց մեզ կը ներկայացնէ Եսթեր մը, որ Ասուերոսի վրայ իր աղղեցութեամբ՝ ժայռէ սիրտ մը և գութ շարժած, հանուր աղզը անիլաւ ու սալսափելի մահուանէ մը ֆրկած, և չարին՝ իր արժանաւոր պատիւթը կը ել տուած է: Կը տեսնենք Յուղիթ մը, որ զարձեալ իր աղզին սիրոյն, չողեփեռնէս մը իր աղղեցութեան տակ տուած,

ապա իր ձեռքերով զլխատած է զայն, և իրեն չնորհիւ չըէալ ժողովուրդը անգամ մալ աղաստած է բռնաւորներու ճանկերէն . . .

Մեր Ազգ. Պատմութեան մէջ Սանատրկոյ օրերը մզուած կրօնական ամենախիստ հալածանքներու ատեն, կը տեսնենք տկար կոյս մը, Սանդուխտը, որ ինքը միս մինակ իր փառաւոր նահատակութեամբ բրաւ թերեա, ինչ որ հարիւրաւոր նահատակներ չկրցան ընել, այսինքն հիմնիվեր յեղաշրջել հանուր չայսատանի կրօնական զաղափարները և միայն իր զաւանած Քրիստոնէական կրօնը յաղթող հանգիսացնել երկրին վրայ: Տրդատի օրերը գարձեալ կը տեսնենք տկար կոյս մը, Հոփիսիմէն, որ իր անմեղութենէն ուրիշ զէնք չունէր, և սակայն, խորտակեց փշեց անպարտելի թագաւորին կամքը . . . փճացուց, ոչնչացուց, մինչեւ անտանութեան կարգը իջեցուց այն զիւցազնը՝ որը չոչէի ոլէս հոկաներ իր ոտքերուն տակ տապալեր էր . . . Օրինակները այնքան շատ են, զորս մի առ մի հոս թուելլ երկար կը լլայ:

Մէկդի թողով տրեմն ժան ա՛ Առքերը, Ջառլօթ Քուտայները, սիրտի յիշեմ միայն Ամերկացի Տիկին չիսրի Պիչըր Սթօն, որը իր Ազգար Թովմասի տնակով գութէ ու ցաւէ գողացուց ամբոց քաղաքակրթեալ մարդկութիւնը և գերեվաճառութիւնը վերցուց: Արդեօք քանինէր իրմէ տռաջ տշխատած, զրած, խօսած էին այդ հրէշային արարքին դէմ, և սակայն ինոչ մը զգայուն գրիշը յաղթանակը տարաւ վերջապէս . . . և ով կրնայ ուրանալ . . . կինը այն հրաշալի զսպանակն է, որը կը զնէ զմարդիկի բարոյական այնպիսի բարձրութեան վրայ, զոր չեն համարձակիլ յուսալ իսկ . . . :

Այս վերև յիշուած օրինակները հին են, սակայն կնոշ հզօր աղղեցութիւնը չերեցաւ միթէ նոյն իսկ վերջին ժամանակներու մէջ: Կիւլիւզարի մը զիւցազնական զիմաղբութիւնը և կրած սարսափելի չարշարանքները աղդ, յեղափոխութեան տուացին կայծը եղան, որը տակաւ տռ տակաւ վառեց հրդեհց հանուր

ազգը։ Սամայ մէջ զարէ մը իր հերոսական մահուամբ իր՝ և իրեններու արեան վրէմը կտակեց հայ ժողովուրդին . . . պողին՝ Վասպուրականի մէջ, Սերոր բաշայի մը կինը, իր կորինները չորս կողմը առած՝ առիւծ էրկանը կողքին զէն ի ձեռին կոռեցաւ . . . Սերոր ինկաւ, ինքը շարունակեց զիւցաղի կուր միշե վերջը . . . : Չատե՞ր մեռան, շատե՞ր սպաննուեցան փառաւոր կրիւներու մէջ, սակայն ատոնց մահը չունեցաւ այն ազգեցութիւնը ինչ որ, Չարեներու մահը, Կիւլիւզարներու և Սոսիներու զիւցաղնութիւնը ըրաւ հայ ժողովորդին մոքին ու որոին վրայ . . . :

Սակայն եթէ կնոջ բացարձակ ազգեցութիւնը կը ընդունինք, անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանինք նաև թէ, ինչքան բարի, նոյնքան ալ վնասակար հետեւթիւններ կրնայ ունենալ ատիկայ եթէ ի չարն զործածուի . . . :

Ամուր բարոյական մը, առողջ դաստիարակութիւն մը բաւ է տալու կնոջ ազգեցութեան այն բարի և ազնիւ յատկութիւնները, որոնք մարդկային ընկերութեան վրայ պիտի ունենան բարերար ներգործութիւն . . . : Այսու հանդերձ եթէ զարձեալ երբեմն թուլութիւններ կերեան իր վրայ, եթէ զուրկ է ամուր նկարագրէ և առողջ կամքէ, ատոր մէջ ինքը, իր խառնուածքը կամ իր բնաւորութիւնը չէ յանցաւոր . . . :

Ստեղծելով կնոջ համար զերութեան ստորևացնող կեանքը, կոյր հպատակութեան և բռնի հնազանդութեան փճացնող վիճակի, և նկատելով զանիկայ իբրև չնշաւոր առարկայ մը, սոսկ մարզոց հաճոյքին ու պէտքերուն համար ստեղծուած, անոր հոգւոյն մէջ մեացուցին ինքնաճանաշութեան, իր անձի զիտակցութեան և արժանապատութեան վսիմ զզացումները. և կինը միշտ նեթակայ զարաւոր ճնշումներու, սկսաւ, ինքն ալ կամաց կամաց հաւատալ թէ՝ բնութիւնը կամ արարչութիւնը զինքը ստրուկ է ստեղծեր, թէ՝ ինքը դատապարտուած է յաւիտեան ստրուկ ապրելու:

Հին, անծանօթ ժամանակներէ ի վեր տրիներուն կամ-

քին ու քմահաճոյլըներուն տեղի տալու վարժուած՝ իր հոգւոյն մէջ չէ կրցեր բոյն գնել կամքի այն սքանչելի ուժը՝ որ վսիմ նկարագրի մը խմորը կը կազմէ, և որոյ գէմ ամենէն անյաղթելի կարծուած արգելվները և ամենէն ամուր ենթագրուած ուժերը ապակիի պէս կը փշտուին. այդ է ահա խկական պատճառը որ նա յոլգովզ, վարանոտ, փոփոխամիտ կըլլայ շատ անգամ զանազան խնդիրներու մէջ:

Ուրիշներու կարծիքները ու գաղափարները ընդունելու և իւրացնելու սովորած՝ ինքը անկախ միտք, ազատ մտածումներ, և ինքնուրոյն գաղափարներ չէ ունեցեր մինչև ցարդ, և այսպէս հանրային կարծիքը կաշկանդելով կինը իր մտածումներուն և զգացումներուն մէջ՝ անոր բարոյական կեանքի մակարդակը զգալի կերպով ցածցուց: Նա՝ սովորեցաւ կեղծել, և սրանչելապէս յաջողեցաւ: Եթէ կը սիրեր՝ այդ սէրը թաղեց իր հոգւոյն ու սրտին ամենէն խորունկ ծալքերուն տակ իբրի արատ մը բարոյականի գէմ, իբրև զաւածանութիւն մը պատռոյ սկզբունքներուն զէմ, իբրև ընզունուած սրբազդութիւն մը, ոճիր մը վերջապէս:

«Ինչ պիտի ըսկեն» ի մտածումը կնոջ ամենէն մեծ սարսափին ու արհաւիրքը եղած է միշտ. նա կը սոսկայ հանրային կարծիքն, ինչպէս մարդ կը սոսկայ կախաղանէն:

Երբեմն կը ահսնես աշքերը կը փայլին, սիրաը կը բարախէ, բերանը կէս մը կը բացուի խօսելու, ազատ ասպարէզ տալու իր ներքին հոգեկան աշխարհին մէջ յուղուղ ու եռացող զգացումներուն բուռն հոսանքին, և սակայն ինքզինքը կը զրապէ, հնի է հանրութիւնը որ լարուած ուշազրութեամբ մէկիկ մէկիկ կը կշռէ, կը փերլուծէ իր խրաբանշիր խօսքը, աշքերը չորս բացած կը քննէ իր ամեն մէկ արարքը, ամեն մէկ շարժումը, գէմքին խաղերն իսկ կը զննէ, կուզէ թափանցել՝ անոր մածումներուն մինչև խորելը, և շատ անգամ ինչ որ չտեսներ՝ կը կարծէ գուշակել, և այդ՝ տուանց կարմրելու իբրև ճշշմարտութիւն հրապարակ կը հանէ, Անպատկառ հետաքրքրու-

թեամբ կուզէ, կամ աւելի ճիշտը, կը տեսչայ անոր՝ հոգւոյն ու սրտին ամենէն զաղտուկ խորշերն ալ քրքրել, զննել. և վայ այն ինոչ որ անխոհեմ քայլ մը առնելով կասկածանքի տեղի կուտայ. նա՝ դատապարտուած է արդէն՝ անողոք ու սարսափելի վճռով:

Հանրութեան կարծիքը Տամոլլէսի սուրն է, որ սպառ-
նալից կախուած է միշտ իր գլխուն վերև։ Սակայն պիտի ծա-
գի ցանկալի օրը՝ յորում կինը վերջապէս առողջ և հիմնական
կաստիաբակութեամբ լուսաւորուած ու զօրացած, պիտի կո-
տրստէ այն անտանելի շղթաները՝ որով նախապաշարեալ հան-
րութիւն մը կը կաշկանդէ իր ամեն նուիրական ու սուրբ
իրաւունքները, այն ատեն ցոյց պիտի տայ իր մտքի, սրտի,
հոգւոյ բոլոր թագուն գանձերը . . . :

Փլամմարիօն կըսէ թէ՛ մեր երկրին զբացի «Մարս» մոլորակին մէջ ապրող մարդկութիւնը, ամեն բանի մէջ նախապատռութիւնը տուած է կնոջ, թէ՛ հոս՝ կինը շատ աւելի գերազանց կը նկատուի այր մարդէն ամեն տեսակէտներով; Իհարկէ չգիտենք թէ՛ որ աստիճան ստոյգ է այդ ենթապրութիւնը, միայն մեզ համար ուրախալի է որ Փլամմարիօնի պէս մարդ մը արդէն համոզում գոյացուցեր է կնոջ կոչման բարձրութեանը վրայ, ճանչցեր ու զնահատեր է անոր արժանիքները, և «Մարս»ի երեակայական մարդկութեան մէջ տուեր է անոր այն տեղը՝ զոր շոնի հոս՝ երկրի վրալ . . .:

Սակայն «Մարտ»ը մեր երկրին շատ աւելի ծեր, փորձառու, զարգացած ու նրբացած կ'ենթադրուի. ով գիտէ, երբ մեր երկիրն ալ համեմ անոր տարիքին, թնչ ճակատագիր կը վիճակուի մեզ՝ կանանցս համար. բայց այդ ապագան որքան յանկուցիչ՝ այնքան ալ հեռաւոր է զժբաղդաբար, ատիկայ՝ մեզի յաջորդադ բազգաւոր սերունդներուն վերապահուած է: Մենք ջանանք ցորչափ կապրինք՝ մեր ներկայ այս անտանելի գրութիւնը բարւոքելու, որը շատ ալ գժուար չէ:

Հաներ միայն մեր խղճի ձայնին, նոյն խակ եթէ աշխարհ

մը բամբասանք ու մեղադրանք թափեն մեր վրայ. արհամարենք չարամիտ պարսաւանքները՝ որ մեր ականջները կը վիրաւորեն. խիզճը միշտ ճշմարիտը, գեղեցիկը, բարին կը թելագրէ մարդուս: Բարոյականի որոշ ու ճշմարիտ օրէնքները, սկզբունքները ծանօթ են մեզի. ատոնք նուիրական են ու սուրբ պէտք է մնան յաւէտ մեզի համար: Բարձրացնենք մեր սեռը այն ստոր լիճակին՝ որոյ ենթարկուած է դարերէ ի վեր, հզօր զարկ մը տալով մասնաւորապէս մեր սեռին դաստիարակութեան, որը դժբաղդաբար շատ թերի է, և աւելի երեսութական քան իրական բնութիւն մը ունի: Ճանչնանք մեր արժանապատութիւնը. քաջ լմբունենեք մեր բարձր կոչման գիտակցութիւնը, զորձենք առողջ և ամուր համոզումներէ առաջնորդուած միայն, և մոռնանք հանրութեան կարծիքը:

ՏԱՆՀԻԱԾԻ ԲՈՂՈՔԸ

(Հոգեւանական էտիլու)

工

«Հարկաւոր է հիւանդապահ կին, չասցէ փողոց Զ. № 15. դիմել Խ»: Կարգում եմ տեղական թերթերից մէկում: Խսկոյն շտապում եմ մատուցանել իմ ծառայութիւնը, որովհետեւ դա էր կազմում իմ ասլրուստիս միակ ազբիւրը, և գիմում եմ վերոյիշեալ հասցեին: Դրան տախտակի վրայ գրւած էր՝ «Գարեգին Աշոտեան», և զանգահարում եմ: Դուռը բացող հաստիկ ու կարճահասակ աղախինը կապոյտ աշերք հարցական կերպով յառեց վրաս ու կանգնեց. հարկաւոր էր սրան այցելութեանս պատճառը բացատրել:

—Կարծեմ այս տանը հիւանդ կայ, որի համար հիւանդապահ են սրբնութ. Հարզը իս:

— 2'զիտեմ, անբաւական կերպով փնթփնթացնա, — սպասեցէք, զնամ տիկնոցը հարցնեմ. և այս ասելով կողքի զննովը ներս գնայ: Մի քանի բովէից յետոյ բացուեց գիմացի դուռը և նոյն ազախինը ինձ ներս հրաւիրեց: Նախ անցանք մի բաւական ընդարձակ սենեակ: մէջ տեղում կար մի մեծ կլոր սեպան, չորս կողմը աթոռներ շարած. պատերից կախած պտուղների և թռչունների պատկերները ախորժակ էին զրգում: Խոյն երկում էր որ սեղանատան ենք: Ամենուրեք տիրում էր խորին լոռութիւն: Առաջնորդող ազախինը ոտների մատերի

վրայ մօտեցաւ դիմացի գրանը և նշանով հասկացրեց որ ներս
մտնեմ: Սա աւելի փոքր սենեակ էր քան առաջինը, բայց ա-
ւելի շքեղ զարդարուած: պատուանի կողքին, պատի առաջ
դրած, թախտը ծածկուած էր թանկապին գորգերով, մութա-
գաներով և ձեռագործ բարձերով: Նրա դիմացը վրած էր կա-
նացի շքեղ գլասելպան, որի վերիի պատճին կացրած էր ձեռա-
գործ չայաստանի քարտէզը, իսկ նրա վերևից կախած էր դար-
ձեալ ձեռագործ «Ոսկի չայաստանի» պատկերը: Երկում էր որ
այս տանտիկինը ձեռագործել սիրում է: Ազախինը դարձեալ
ձեռով նշան արաւ, որ նստեմ սպասիմ: բայց ես աւելի հետաքր-
քրութեամբ մօտեցայ գրասեղանին և ձեռագործ քարտէզն էի
դիտում: Երբ կողքի գուռը կամաց բացուեց և դրան մէջ երեաց
տանտիկինը ամառուայ թեթե տնային հասարակ պենուարով: Նա
բաւական երիտասարդ էր, հազիւ երեսուն տարեկան, միջահա-
սակ, վայելչակազմ՝ և գրաւիչ, բայց դէմքի մի տեսակ սառ-
ցային անտարեքը արտայայտութեամբ: Նա գլուխ թեթե շար-
ժումով բարեեց ինձ և հանգարտ ու հաստատ քայլերով մօ-
տեցաւ, նստեց թախտի ծայրին ու ինձ էլ աթոռը ցոյց տա-
յով՝ հարցրեց.

— Ուզնում էք հիւանդապահի պաշտօն ստանձնել:

—Այս, պատասխանեցի ես, —կարծիմ դուք յայտաբարել էիք:

— Ամուսինո հիւանդ է, ասաց տիկինը, — և նրա խնդրանոք յայտաբարել եմ, բայց ձեր պաշտօնը շատ թիթի է լինելու, որովհետեւ ես ևմ նրա գեղեցին հոկում և իրան ինամում, սակայն զիշերները երբ չեմ կարողանում վեր կենալ՝ այն ժամանակ ձեր ծառայութիւնը պէտք է գալու և այս էլ պէտք է առեմ, որ նա շատ հանդարտ հիւանդ է, և չի սիրում զըստ-պատողներին ներութիւն տալ: Խակ պայմանների մասին ինք-ներդ տաէք: Ես ասացի իմ պայմանը, այսինքն աշխատանքին գարձի շափը, որին տիկինը խսկոյն համաձայնեց և տեսից վեր կենալով ասաց,

—Այժմ դեռ նա քնած է, գնանք ճաշենք, իսկ յետոյ կը ծանօթացնեմ ձեզ ձեր պաշտօնի և հիւանդի հետ:

Այդ րոպէին բացուեց դէպի սեղանատուն տանող դուռը և ներս մտաւ մի տաս տարեկան սիրուն, ոև աչքերով ու երկար մազերով աղջիկ, որ շատ նման էր տիկնոջը. երեսում էր որ զբունքից է վերադառնում, դէմքը արեից շառագունել էր ու արագ արագ չնշում էր:

—Լաւ. ինչի էիր այլքան արագ վազում, որ շունչդ կտրը-ւում է, նկատեց տիկինը նրա շորերը ուզգելով:

—Ախր գու չես իմանում, շուտ շուտ վրայ տուեց երեխան, Պօլեան էլ հետս էր, նա ինձ հաւատացնում էր, որ ինքը աւելի շուտ կրարձրանայ սանդուխքներովը, իսկ ես ասում էի, որ ես նրանից շուտ կրարձրանամ. չէ՞ որ միշտ քեզ հետ բարձրանալիս ես առաջ եմ անցնում: Բայց ես քաղցած եմ,—խօսքը փոխեց աղջիկը և տիկնոջ ձեռքից բռնած քաշում էր սեղանատուն: Ես կարծեցի թէ նա տիկնոջ աղջիկն է ու հարցրի.

—Սիրուն երեխայ է, այս մէկն ունէք:

—Ոչ, պատասխանեց տիկինը հոգոց հանելով, իմ աղջիկս չէ, այլ քոյրս է, ես որդի չունիմ, բայց շատ փոքր եմ վերցրել մօրս մօտիցը և ես եմ մեծացրել:

Ճաշը անցաւ բոլորովին խաղաղ: Առհասարակ ինչպէս լինում է հիւանդ եղած տներում, որ մէկ վազում են հիւանդին դեղ տալու, բարձը ուղղելու կամ հիւանդի մի որնէ քմահաճոյքը կատարելու, այդ բոլորից ոչ մէկը չ'եղաւ: Երբ ճաշը վերջացաւ, տիկինը մօտեցաւ ննջարանի դրանը ու կանգ առնելով ականջ դրեց:

—Դեռ չի զարթնել, ասաց ու զարձեալ եկաւ նստեց թախափ ծային: Նրա աչքերի փայլը ու դէմքի լուրջ ու սառն արտայայտութիւնը բոլորովին համապատասխան չէին միմիանց: Նա երեսը դարձել էր դէպի լուսամուտը և հայեցքը յառել հեռու դէպի անվերջ տարածութիւնը. այդ րոպէին նա կարծէր ոչ մի բանի մասին չէր մտածում, բայց չպիտիմ ինչու,

ինձ թւում էր թէ զա մի դիմակ է նրա երեսին, որը տալիս էր անտարբեր սառն ու լուրջ արտայայտութիւն, և եթէ վերցնէիք այս դիմակը, նա կ'սկսէր ուրախանալ, հանարներ անել, փոքր աղջկայ պէս թռչկոտալ, երգել, և նրա դէմքը փոխանակ սառն ու անտարբեր արտայայտութեան՝ կփայլէր արախ ու անհոգ ժպիտով:

Ես այդ գատողութիւնների հետ էի, երբ յանկարծ ներսից լուեց գանգահարութիւն. տիկինը սիժափուեց ու ինձ դառնալով ցած ձայնով ասաց.

—Ամուսինս գարթնել է, գնանք ներս:

Ննջարանը, ուր պառկած էր հիւանդը, բաւական լինդարձակ սենեակ էր, մութ կարմիր ներկած պատերով: Հիւանդը պարկած էր երեսը դէպի պատուհանը դարձրցած. նրա մահճակալ դիմաց դրւած էր աւելի չքեզ զարդարւած մահճակալ, որի վերսից կախուած էր տիկնոջ մէծագիր պատկերը: Թէ տիկնոջ և թէ ամուսնոյ մահճակալների մօտի պատերը ծածկւած էին թանկագին գորգերով, առաստաղի մէջտեղից կախուած էր չինական չքեզ զարդարոյն լապտեր, որի վրայ լուսամուտից ուղղակի ընկել էին արեի ճառագայթները և սենեակին վարդի զոյն տեհը: Տիկինը մօտեցաւ ամուսնու սնկողնուն և կամաց ասաց.

—Գարեգին, քո ուզած հիւանդապահը եկել է:

—Հա, ուրախացաւ հիւանդը, —նւր է, կանչիր տեմնեմ: Տիկինը գլխով արաւ, ես մօտեցայ: Ինձ տեմնելով հիւանդը՝ դարձաւ կողքի վրայ և բոլորովին հիւանդի չնմանող առոյզ կերպով ասաց:

—Բարե ձեզ: Բայց ես ձեզ կ'չարշարեմ, ոհ ես շատ քմահաճոյ եմ:

—Բայց տիկինը այդպէս չասաց, պատասխանեցի ես:

—Երեի նա ինձ գոված կլինի, թէ Աստծոյ գառն եմ չէ, բայց և այնպէս ինքը չարշարւում է, ասաց հիւանդը և մասնուն դէմք ընդունելով լուեց: Այդ խօսակցութեան միջոցին տիկինը հեռուն կանգնած անտարբեր ուրիշ կողմն էր նայում.

յիտոյ մօտեցաւ ամուսնու մահճակալի մօտ պրած փոքրիկ մարմարապատ պահարանին, որի վրայ շարուած էին դեղերի սրաւակները, վերցրեց նրանցից մէկը, կարդաց դեղատոմոը և դառնալով ամուսնուն՝ առաց.

—Գարեգին, մի բան ուտես լու կլինի, շուտով դեղիդ ժամանակինէ, որի ընդունելուց յիտոյ իսկոյն բան ուտել չի կարելի:

—Է՞ն, տրանջաց հիւանդիր,—կերած—չկերած միւնոյն է, մի բան որ իսկոյն յետ է գալու. և մի փոքր մտածելուց աւելացրեց,—ես էլ եմ ուտել ուզում, հրամայիր, թող բերեն: Տիկինը զանգահարեց, իսկոյն երեաց նոյն հաստիկ կապուտաշեայ աղախինը և ճաշ բերելու պատէրը ստանալով՝ դուրս գնաց իր յետեց գուռը կամաց փակելով:

Հիւանդը զառնալով դէպի ինձ, հարցրեց.

—Ներողութիւն, տիկին էք թէ օրիորդ, ինչպէս կանչեմ ձեզ:

—Զնայելով որ տիկին եմ, բայց դուք ուզգակի անունովս կանչեցէք: Անոնս Անոն է. պատասխանեցի ես:

—Լաւ, համաձայնեց նա, և զառնալով կնոջը տաց, —Զարուհի, ցոյց տուր Աննային զեղերը, թէ որը երբ է հարկաւոր տալ:

—Այժմ ես բանի մօտդ եմ՝ ես կտամ, պատասխանեց կինը, բայց երբ պարկած կինիմ կտամ ման զալու կգնամ, այն ժամանակ նրան ցոյց կտամ:

—Նա, զարձաւ յանկարծ հիւանդը ներս մտնող աղախնին, որը ճաշ էր բերում.—Նունին ուրէ չի երեւում:

—Գահիճումն է, պատասխանեց աղախինը,—Պօլեան էլ այն տեղ է, խաղում են:

Տիկինը օգնեց ամուսնուն նստելու, մէջը յիտի բարձեր յարմարեցրեց, ուսերին մի տաք շալ զցեց, ու ինքն էլ նստելով մահճակալի եղբին, մատուցարանը դրեց փոքրիկ սեղանի վրայ, վերցրեց այն տեղից ափուկով սպասը, զգալը տեց հի-

ւանդին ու այսպէս բռնած մնաց մինչի որ ամուսինը կերաւ, յիտոյ միսը կտրտեց և մէկ մէկ պատառաքազով տւեց ամուսնուն: Ես մօտեցայ և խնդրեցի, որ տիկինը գնայ հանգստանալու, ինձ թողնի կերակրելու հոգսը, բայց նա մերժեց ասելով

—Ես ձեզ սկզբից ասացի որ քանի ես ննջարանումը կինեմ, ինքս կինամեմ: Ես էլ հեռանալով նստեցի մի անկիւն, հանեցի ձեռքի պայուսակի միջից ձեռագործս և սկսեցի գործել: Ապախինը եկաւ հաւաքեց, մատուցարանը դուրս տարաւ: Տիկինը գեղը տւեց, գարձեալ օգնեց ամուսնուն պարկելու և ինքըն էլ գիրքն առաւ ու նստեց մահճակալի մօտ կարգալու. բայց շուտ շուտ աշըք զցում էր ամուսնու գէմքին, որից ուզում էր գուշակել թէ ինչ է կատարուամ ներսը: Մի փոքր անցնելուց յիտոյ վեր թուաւ տեղից, շտապով մօտեցաւ պահարանին, այնտեղից հանեց թասը և զնելով, մահճակալի առաջ հարցրեց ամուսնուն:

—Մրտիդ իսպնեխն սկսւեց:

—Ճուտ թասը տնելը, տաց հիւանդը և շտապով գլուխը մահճակալից կախեց թասի վրայ ու սկսեց կերածը թափել: Սարսափեկի տանջւում էր, այնպէս էր սրձկում, որ ամեն մասից մի քրտինը էր կախել: Ես դանձեալ մօտեցայ, որ օգնեմ, բայց էլի ծառայութիւնս պէտք չեկաւ: Տիկինը մի ձեռքով բռնել էր ամուսնու գլուխը, միւս ձեռքով ջուր էր ածում ձեռներին, հիւանդը լւաց երեսը, որբեց ու գլուխը դրեց բարձերի վրայ: Ազախինը երկի ձայնից էր հասկացել, որ ինքը հարկաւոր է, մի մաքուր թաս և յատակի սրբիչը ձեռին ներս մտաւ. թասը դրեց մահճակալի տակ, կեզտոտը դուրս տարաւ, մի բանի կաթիլ ջուր էր թուել յատակի վրայ, այն էլ սրբեց ու գուլս գնաց: Հիւանդը նորից գլուխը կախեց թասի վրայ ու սկսեց դարձեալ շարչարեկ և մերժ ընդ մերթ կրկնում էր:

—Ախ երանի չէի կերել:

Այդ բողէին դուռը յանկարծ յետ բացւեց և փոքրիկ նունին ներս վագեց, բայց տեսնելով քրոջ և հիւանդի զրու-

1002
8
8

թիւնը՝ կանգ առաւ սենեակի մէջ տեղը և կարեկցաբար վիզը ծուց ու սկսեց նրանց վրայ նայել. երեսում էր որ նա մի բան էր մտածում, յետոյ դառնալով դէպի ինձ շնչալով հարցրեց.

—Ասացէք խնդրեմ, առանց ուտելու մարդ կարմղ է ապրել: Ես գլխով բացասական նշան արի:

—Բայց որ Գարեգինին ուտելը այլպէս տանջում է, թնչ պէտք է անել: Ես մի բան պատասխանած լինելու համար ասացի:

—Բժիշկները կրժշկեն նրան որ այլիս չտանջուի:

—Դուք կարծում էք, ասաց երեխան հեգնելով, —իսկ ես ձնզ կասեմ որ բժիշկները ոչինչ չեն համանում, թէ որ ես բժիշկ լինէի՝ Գարեգինին խսկոյն այնպիսի մի դեղ կտայի, որ էլ բոլորովին սիրաը չ'թափէր, և հաստատ քայլերով դուրս կ'աց:

Տիկինը մի բանի գեղեր տւեց հիւանդին, որոնք մի փոքր դադարեցնում էին ու էլի սկսում էր խառնելը և չարշարելը: Այդ տեսեց երկու ժամից աւելի: Վերջապէս դալկացած, տանջած ընկաւ բարձերի վրայ ու աշքերը խփեց: Նա մօտ երեսունեօթ տարեկան, ըստ երեսյթին բարձրահասակ, թուխ գոյնով, խորն ընկած աշքերով ու գունդ քթով մարդ էր: Բայց ինչպէս երեսում էր, հիւանդութիւնը նրան սաստիկ մաշել էր, որովհետեւ դէմքի այդ ոսկորները դուրս էին ցցւել: Տիկինը վերջի անգամ էլի հայեացը զցեց նրա վրայ և գիրքը վերցնելով դուրս գնաց, ինձ էլ գլխով նշան արաւ որ հետեւմ իրան: Նեղարանին կից տիկնոջ գրասենեակն էր, ուր մտանք. տիկինը դուսը շծածկեց, որ եթէ ամուսինը շարժւելու լինի ինքը իմանայ, և աթոռը դնելով դրան մօտ նստեց:

—Պարոնը վազմւց է հիւանդ, հարցրի ես:

—Վաղմաց, հարցական կերպով կրկնեց նա, և մի փոքր մտածելուց յետոյ աւելացրեց: —ինչպէս ասեմ, պարկած հիւանդ ահա երկու ամիս է, իսկ թէ առաջ այդ հիւանդութիւնը երբ է սկսուել՝ ես չգիտեմ. ասաց ու գլուխը կախեց գրքի

վրայ. բայց վրա անշարժ աչքերից երեսում էր, որ չի կարդում:

—Ի՞նչ հիւանդութիւն է, հարցրի ես, —կերածը չի մարտում:

—Այս, նրան պարկեցնողը այդ է, չնայելով որ ոչ մի տեղը չի ցաւում, բայց այդ էլ սարսափելի տանջանք է:

Յանկարծ լուեց դրաից դանդի ձայն, տիկինը նայեց ժամացոյցին և ասաց.

—Երեխ բժիշկն է:

Եւ իսկապէս, ներս մտաւ բժիշկը հիւանդի եղբօր հետ: Տիկինը նոյն սառն անտարբերութեամբ յայտնեց բժշկին, որ ամուսինը նոր է հանգստացել և լաւ է մի փոքր սպասեն այս սենեակում և յետոյ ներս վնան. այլապէս հիւանդը կոկոի խօսել, շարժւել, որը կարող է նորից ստամոքսի գրգռում առաջացնել: Բժիշկը հաւանագութիւն տւեց և նստեց թախտի վրայ: Հիւանդի եղբայրը հարցրեց եղբօր հիւանդութիւնից, որին տիկինը ճիշտ ու կարծ պատասխաններ էր տալիս: Յետոյ բժիշկը սկսեց տիկնոջ հետ խորհրդակցել առաջիկայում բժշկելու մասին: Բաւական ժամանակ անցնելուց յետոյ տիկինը բժշկին և եղբօրը հրաւիրեց ներս: Հիւանդը քնած չէր, բժիշկը չափեց տարութիւնը, նայեց զեղերին, մի քանիսը ասաց որ այլիս կործ չածեն և մի քանի նորերը գրելով դուրս գնաց հիւանդի եղբօր հետ:

Երեկոյեան եկան տիկնոջ և հիւանդի ազգականներից հիւանդին այցելութեան, մտան նրա սենեակը, հարցրին առողջութիւնից, որոնց նա տժզո՞ն կերպով էր պատասխանում: Տիկինը բոլորի հետ միատեսակ սիրալիր էր, նոյն անտարբեր արտայայտութիւնը դէմքին: Նրա աշքերը միան փայլում էին երբ խօսում էր իր բրոջ հետ, երեսում էր, որ հիւանդն էլ է այս երեխային պաշտում. օրինակ՝ երբ տանջւած բոպէներում գժւարանում էր, չէր ուզում զեղ խմել, երեխան գալիս էր խնդրով հայեացը զայում ու աղերսալից ձայնով ասում. «գէհ, խմիր, հօ երեխայ չես»: Հիւանդը ժամում էր ու զեղը մօտե-

ցնելով զրբունքներին ասում էր՝ «Նունիկ, ջան քու խաթրու եմ խմում»:

Հիւրերի գնալոց յետոյ էլի սկսեց ուտելու հոգար. հիւանդը տրտնջաց և որովհետև քաղցած էր, կերաւ, գարձեալ, սկրսեց սիրտը թափելը և երկուսն էլ տանջուեցին մինչև ժամի մէկը. Վերջապէս ուժասպառ հիւանդը ընկաւ բարձերի վրայ. Տիկինը կանչեց աղախնին և կարգազրեց որ մեծ բազկաթռութերն ննջարանը, որի վրայ ես պիտի պարկէի և գիշերը հիւանդին հսկէի. Տիկինը մի սրւակ տւեց և պատիրեց որ պարկեմ քնելու, բայց չորս ժամից յետոյ պէտք է այդ գեղը տայի. Ես պարկեցի և դեռ երկու ժամից զանցած զարթնեցի, վախենալով թէ մի գուցէ գեղի ժամանակը անցկացնեմ, բայց հիւանդը ասաց, որ անհանգստանալու կարիք չկայ, որովհետև իր քունը չի տանում, և առանց իմ օգնութեանս ինքը գեղը կիսմի, այնպէս որ երբ միւս առաւօտը զարթնեցի՝ մտածեցի որ դեռ պէտք չեմ եկել. Տիկինը արդէն ոտքի վրայ էր, օգնեց հիւանդին լւացւելու, աղախնը եկաւ սենեակը սրբելու. Եւ այդ օրն էլ անցաւ ինչպէս նախորդ օրը. Իմ ծառայութիւնը քիչ կամ բոլորովին պէտք չեկաւ. տան մէջ մի քիչ կինդանութիւն մտցնողը փարբիկ նունին էր, սակայն նա էլ առաւօտը թէյ խմելուց յետոյ գնում էր պարապելու մի ծանօթ տիկնոջ մօտ և վերադառնում էր միայն ճաշի ժամանակ. Այդպէս օրերն անցնում էին միակերպ. Հիւանդի գրութիւնը երբեմն լաւ էր լինում երբեմն աւելի վատ, բայց տիկինը միշտ նոյն սառն անտարերն էր. Պատահում էր, որ հիւանդը ամբողջ գիշերը տանջում էր, երբ առաւօտն այդ մասին տիկնոջ ասում էի՝ նա միայն սառը վերպով արտասանում էր «խեղճ» և կամ եթէ դրա հակառակ ամբողջ գիշերը անվրդով քնած էր լինում, շտապում էի նրան աւետել. բայց նա դարձեալ նոյն եղանակով ասում էր «լաւ» և ուրիշ ոչինչ:

II

Այդպէս անցաւ մօտ երկու ամիս. հիւանդը բանի գնում վատանում էր և օր ըստ օրէ մաշտում. Որքան նա վատանում էր՝ այնքան տիկինը ամփոփում էր ինքն իր մէջ. բացի կարեոր խօսակցութիւնից, նա ոչ որի հետ չէր խօսում. Այդքան ժամանակում ես միայն կարողացայ այսրանը հասկանալ, որ հիւանդ Աշոտեանը բաղաքում՝ յայտնի վաճառականներից մէկն էր և բաւական հարուստ. Բայց տիկինը աւելի հարուստ և կրթւած ընտանիքից էր. Սակայն նրա հօր վաղաժամ մահան պատճառով նրանց գործերն խառնւել էին և հիւանդ Աշոտեանը բաւական օգնում էր կնոջ հօր ընտանիքին. Մինեսյն ժամանակ նկատեցի որ տիկինը, ոչ իւր և ոչ էլ ամուսնու աղջականների հետ մտերիմ յարաբերութեան մէջ չէր. Նրա միտակ թէ ընկերը և թէ մսիթարիչը այդ փորրիկ նունին էր. բոլորը գէպի նա պատկառանով էին վերաբերում, իսկ նա մի այնպիսի դիրք էր բռնել, որ չէր կարելի հասկանալ թէ ինչ է կատարւում նրա հոգու մէջ. Սակայն չ'զիտեմ ինչու այդ տունը մտած օրիցս մի տեսակ զգացմունը էի տածում գէպի այդ կինը, կարծէր նա իմ հարազարդ լինէր, և ամեն կերպ աշխատում էի իմանալ այդ տարօրինակ ամփոփման պատճառը, որ հարկաւոր գէպրում օգնէի. Բայց միթէ նա օգնութեան կարօտ էր. 2՝ զիտեմ սիրում էի թէ խղճում նրան. այն ինչ խղճալու առիթ չունի, որովհետեւ չէր եփեւում թէ նա դժբախտ է, թէկ գագտնիր չէր, որ նրա ամսութիւնը շտապով մեռնելու է. Գուցէ նրա այդ տարօրինակ վարմուների պատճառը ամուսնու հիւանդութեան պատճառած կոկիծն էր. Բայց ոչ, այդ ցաւը չի պահում, սիրուծին կորցնելը լրութեամբ չի տարւում. Գուցէ ատում է ամուսնուն, մտածում էի հս. ոչ, այդ չէ չէ, պատախանում էի ինքս ինձ. չէ որ ատած մարդից աղատելու ուրախութիւնը նոյնպէս չի ծածկում. Ուրեմն ինչ էր կատարւում

այդ կնոջ հոգու մէջ։ Ինչի է, եռ շատ կուզէի որ նա երջանիկ լինէր. որովհետև նրա կրակով և եռանդով լի աչքերը դրա համար չէին ստեղծւած և եթէ նա բախտաւոր լինէր, այդպէս սառուցով չէր շրջապտի իրան, երիում էր որ նրա բռնած դիլքը կեղծ էր և նրա համար անքնական։ Անա այսպէս հանելուկների մէջ կորչում էի, երբ մի օր մի խօսակցութեան ներկայ եղայ, որը և պարզեց բոլորը։

Եյդ որը հիւանդը իրան լաւ էր զգում։ Բայց բժիշկների կտսկածաւոր հայեացքով իրար նայելուց շրջապատողները շատ բան էին հասկացել և աշխատում էին չհեռենալ մօտիցը, որովհետև ամինը իր ակնկալութիւնն ունէր։ Բայց հիւանդի սենեակում շատ մարդու մնալ չէր կարելի. ուստի հեաարքքրւողները ոտների մատների վրայ մօտենում էին ննջարանի դրանը, կամաց բաց անում, մի բանի բոլէ ներս նայում ու հեռանում։ Տիկինը մահճակալի առաջ չորած՝ ամուսնուն էր կերակրում։

—Զարուհի, ասաց հիւանդը, —այսօր ինձ լաւ եմ զգում ծառծով շուտով կ'առողջանամ։

Կինը մի տխուր հայեացը զցեց վրան ու սառն կերպով, պատասխանեց։

—Ի՞նարկէ, շուտով կլաւանաս։

—Այս ինչպէս, անուշագիր ես գէպի քեզ, ասաց հիւանդը և զանգահարեց։

Դոների մէջ երեաց աղախինը. —Սրբուհի, մի փոքրիկ աթոռ բեր, որ տիկինը վրան նստի, —նւազով ձայնով արտասանեց նա և գլուխը դրեց բարձերի վրայ։ Դուռը կամաց բացւեց և ներս մտաւ մի բարձրահասակ երիտասարդ, թուլի մաղերով ու աչքերով և շտապով մօտեցաւ հիւանդին, որին տեսնելով տիկինը՝ ցածր, բայց ուրախացած ձայնով ասաց։

—Եյդ զնւ ես, Աղէքսանդր։ Իւկ հիւանդը միայն ժպտաց ու զլիսի թեթե շարժումով հրաւիրեց նստելու։ Եկողը տիկինը մօրեղբայրն էր, որի հետ քանի ժամանակից ի վեր լաւ

յարաբերութեան մէջ չեր։ Աղէքսանդր Շահլամիանը և հիւանդը առետուրի մէջ իրար դէմ մրցում էին և Աշռտեանի հիւանդանալուց առաջ բաւական սուր ընդհարումներ էին ունեցել։ Չնայելով որ տիկինը չէր խառնւում ամուսնու և քեռիների գործերին՝ այնու ամենայնիւ իրան անզգալի կերպով վերջի ժամանակները ուշ ուշ էր տեսնելում Շահլամիանների հետ։ Այժմ Աղէքսանդր վերադառնալով մօտակայ Ա. քաղաքից ուր գնացել էր նշանւելու և լսելով փեսայի լուրջ հիւանդութիւնը՝ շտապել էր նրան այցելելու, մի կողմը Ժողովելսվ տեղի ունեցած գժառութիւնները։

—Աղէքսանդր, ասաց հիւանդը հետզհետէ թուլացող ձայնով, չնորհաւորում եմ, նշանւել ես։ Միս որբան կուզէի շուտ առողջանալ որ հարսանիրիդ ներկայ գտնուէի։ Երեխ նշանածիդ պատկերը բերած կլինիս, ցոյց տուր։ Աղէքսանդրը խսկոյն ծոցի գրավանից հանեց պատկերը և տւեց հիւանդին։

—Այս որբան սիրուն է, բացականչեց հիւանդը և աւելացրեց՝ բախտաւոր լինիք։ Ապա նայիր, Զարուհի։ Սակայն, Աղէքսանդր, հարսնացուդ երեխայի գէմքը ունի. քանի տարեկան է։

—Տասնըեօթ տարեկան, պատասխանեց Աղէքսանդրը, որը ինչ ներս էր եկել, գեռ ոչ մի խօսք չէր արտասանել այլ միայն ուշի ուշով զննում էր հիւանդի գէմքը ու խորի ընկած աշքերը։

—Գէհ, Զարուհի, երկի շատ բան կունենաս հարցնելու Աղէքսանդրից. ասաց հիւանդը, —ծնողներիցդ, ազգականներիցդ և վերջանդէս հայրենիքիցդ. իսկ ես մի փոքր ուզում եմ հանգստանալ, չգիտեմ ինչու զլուխս պտոյտ է գալիս, քունս տանում է. ընեմ զուցէ անցնի. իսկ եթէ մի բան հարկաւոր լինի. Աննան մօտաւ է։

Տիկինը կամաց վերկացաւ, բայց զուրս չզնաց, այլ մօտենալով լուսամուտին՝ զլխով արեց քեռուն, որը և հետեւ նրան։ Տիկինը ուշադրութեամբ գարձեալ նայեց պատկերին

և յուզմունքից գողացով ձայնով ասաց (ևս առաջի անդամն էի տեսնում տիկնոջը յուզւած):

—Աղէրսանդր քանի տարի քեզանից մեծ կլինիմ:

—Ե՞ն, քանի տարով, կրկնեց վերջինս, —հազիւ մի տարով. ինչու հարցրիր:

—Չնայելով որ մենք հասակակից ենք, ասաց տիկինը, —բայց դու նոր ես մտնում կեանքի մէջ, քեզ վարդապոյն է երեսմ աշխարհը, իսկ ես՝ արդէն ջախջախւած, յոգնած դուրս եմ գալիս աշխարհից, իբր թէ շատ ապրեցի, և արդէն իմ առաջ բոլորը սի է:

—Զարուհի, ինչու ես այդպէս յուսահատ խօսում, միթէ Գարեգինի գրութիւնը այդքան վատ է, և իսկապէս որքան փոխւել է խեղճը:

—Իհարկէ, շատ վատ է, ասաց տիկինը, և այլիս շկարողանալով իրան զսպել՝ սկսեց հեղեկալ: —Ահա, քանի օր է երբ արդէն տեսնում եմ, որ նա ձեռից գնում է, արտասուրը զըսպելով և հազիւ լսելի ձայնով սկսեց մրմնջալ տիկինը. —այդ առթիւ շատ եմ մտածել, ու շատ մութ ու մոայլ բաներ տեսել, և հիմի կանգնած եմ վիճի զլիսի: Ես երկու զգացմունքների հետ եմ կուռում, շգիտեմ ողբամ, թէ ուրախանամ: Հարցնում ես Գարեգինի գրութիւնը, բայց եթէ նոյն իսկ այժմ նա առօղջ լինէր՝ միթէ ես զարձեալ յուսահատ չէի լինի:

—Ինչեր ես խօսում. վախեցած հարցրեց քեռին, բայց ոչ թէ, միայն Աղէրսանդրը, այլ և բոլոր աղքականները իրանց սրտի խորքում սպասում էին, որ մի օր այդ խօսքերը լսելու էին բերանից. իսկ նա ոչ մի խօսք, ոչ մի տրտոնից չէր ցոյց տեիլ: Սակայն այժմ ինչպէս ինքն ասաց, երբ հեռանում էր ասպարէզից և գտնում էր վիճի եղբին՝ նա ուզում էր բանալ իր ամեն ուժով թագցրած վշտերը իր մանկութեան ընկերին:

—Աղէրսանդր, շարուհակեց նա, —միթէ շգիտես ինչ եմ խօսում, ինչ տւեց ինձ Գարեգինը: Ահա շուտով տասը տարի

կլինի, ինչ պսակւել եմ, ինչ է եղել իմ կեանըը, եթէ ոչ կեղծիք: Ո՛հ տէր Աստւած, կեղծել եմ ինքս ինձ, կեղծել եմ ձեր դէմ, կեղծել եմ աշխարհի առաջ: Յուրա շրջապատողներս նախանձել են ինձ, բախտաւոր են համարել, բայց եղել եմ արդեօք ես իսկապէս բախտաւոր: 2է որ երբ ամուսնացայ, բոլորդ գարմացար և հաւատացած էիք, որ շատ անհաւար դոյզ կազմւեց: Ասա այդպէս է թէ ոչ:

—Իհարկէ այդպէս է, բայց ինչու դու մինչև հիմի նրան պաշտպանում էիր:

—Եյն, պաշտպանում էի, որովհետեւնա լաւ մարդ էր, բայց միթէ նրա միայն լաւ մարդ լինելը ինձ բաւական էր: 2է որ նա բոլորովին անկիրթ էր, երբ ես ամուսնացայ, նոյն իսկ տառերը չէր ճանաշում, դուք գիտէք, որ ես սկսեցի նրա հետ պարապել: Եւ եթէ միայն այդ լինէր նրա պակասութիւնը, ես գուցէ նրան սիրէի: Սակայն չանցած մի ամիս՝ վարակւեցի ու հիւանդացայ: Եյդ ժամանակ բացւեցին իմ աշքերը, և ես զգացի, որ իմ ամուսինը ոչ միայն տղէտ մարդ է, այլ և իր երիտասարդութիւնը անբարոյականութեան մէջ տնցկացրած, առողջութիւնը փշացրած մի թունալից պարկ:

Եյդ բոլէին դուռը կամաց բացւեց և հիւանդի եղբօր ձայնը լսւեց, որը հարցնում էր թէ կարելի՞ է ներս մտնել:

—Ոչ, զսպւած ձայնով պատասխանեց տիկինը, —Գարեգինը ընած է. ու դասնալով բեռնա՝ շարունակեց, —ինձանից հասկացաւ ինքը, որ եղել է իմ գժբախտութեան պատճուր, բայց որպէս բարի մարդ, ուզում էր մի կերպ իր յանցանքը իմ դէմ բաւած լինել: Այն օրւանից նա նայում էր ինձ վրայ որպէս սրբի, որին միայն պիտի պաշտել: Իմ կամքը վառաւ նրա համար օրէնք, շրջապատեց ինձ շուպութիւններով, բայց ներբին որպը ուզում էր արտարին փայլին: Միթէ կարող էի ես խարւել արտարին փայլից: Քանի իմ առօղջութիւնը վատանում էր, այնքան ես նկատում էի մեզ իրարից բաժնող վիճը: Եւ ահա այդ վիճը կլանում է նրան. իսկ

ես մնում եմ կախած, ոչ առաջս ճանապարհ կայ, ոչ էլ յետ դառնալ կարող եմ: Իսկ այժմ տեսնում ես եղբայրները ինչ-պէս են շրջապատել, և երբ մենք երկուսս ներսը այսքան երկար մնացինք, նրանք կ'կարծեն թէ միասին համոզում ենք Գարեգինին, որ իմ օգտին կտակ անի:

—Միթէ Գարեգինը մինչև այժմ կտակ չի արել.

—Ե՞ն, միթէ ես հետաքրքրւել եմ զրանով. պատասխանեց տիկինը, —բայց կարծեմ վագուց է արել. այժմ ես խղճում եմ իրան, որ ինքը գեռ ջահել է ու աշըլ իր աշխատանքով ձեռք բերածի մէջն է, մինոյն ժամանակ խղճում եմ ինձ, որ մնալու եմ մենակ, փշացած առողջութինով բոլորովին անպէտք:

Նա ուզում էր աւելացնել և «բոլորից դառնացած», բայց չասած, չուզեց քեռուն վշտացնել, ու գարձեալ իր կեղծիքը նկատելով ձեռքերի մատերը ցաւելու չափ սեղմեց ու սկսեց հեկեկալ:

Այժմ նրա հոգեկան աշխարհը ինձ համար պարզ էր: Նա չէր սիրում իր ամուսնուն, զրա համար էլ չէր մտերմացել նրա ազգականների հետ, հեռացել էր իր ազգականներից, որոնք իր ներկայութեամբ ծաղրում էին իր ամուսնու թերութիւնները և անկրթութիւնը, սակայն չէին խորշում նրա առաջ բծնելոց և օգտելուց:

Ահա այդ բոլորը պատկերանում էր նրա առաջ ու նրա զգացմունքները երկուսի բաժանում, նա ուրախանում էր, որ վիրջապէս ազատւելու է այդ թունաւոր պարկի մերձաւորութիւնից, բայց մինոյն ժամանակ զգում էր, որ մենակ է մնալու իր անշափի ծանօթների և ազգականների մէջ: Նա ինքնասիրութիւնից փակել էր շրթունքները և քողարկելով իր տառապանքները՝ ամփոփել էր իր մէջ և աշխարհում մնացել մենակ իր վշտերի հետ: Իսկ այժմ չպիտի ողբար, թէ ուրախանար . . .

Յանկարծ նրա ականջովին ընկաւ, որ հիւանդը իրան է

կանչում, սրբեց աշքերը, մազերը ուզգեց ու մօտեցաւ նրան: Աղեքսանդրը նոյնպէս մօտեցաւ հիւանդին, առողջութիւն մաղթեց և ուզիկ չ'նայելով բրոջ ազշկայ երեսին, կարծես նրա բոլորից յետոյ իրան նրա առաջ մեղաւոր էր զգում, միայն կամաց առաց:

—Զարուհի, ես էլի կանցնեմ, ու շտապով հեռացաւ:

Տիկինը ոչինչ չ'պատասխանեց, այլ սեղանի վրայից առնելով զեզի սրբակը՝ ասաց.

—Գարեգին, դեղիդ ժամանակն է:

—Չէ, թոյլ ընդհատեց նրան հիւանդը, բայց նայելով կնոջ լացած աշքերին՝ հասկացաւ նրա մէջ տեղի ունեցած փոթորիկը, սիրու ճմլւց, մի ծանր ախ թռաւ նրա սրտի խորքիցը, որը զուցէ մի բոպէով ևս արագացրեց նրա վախճանը . . .

—Չէ, շարունակեց նա, —զեզ չեմ կարող խմել: Թէ ինչ է կատարում իմ մէջ՝ զժւար է յայտնել: Զարուհի, տունը մթնեց, բայց չէ, աշքերս սեացան:

Կինը խկոյն հասկացաւ և կամացուկ զուռը բանալով ամուսնու եղբօրը ներս կանչեց ու ինքը կարծես թէ մոռացաւ բոլորը: Նա միայն տեսնում էր մի մարդ, որը թողնում է այս աշխարհը և որի վերջին բոպէները ինքը կարող էր քաղցրացնել: Ուստի թողեց զէմքի սառցային անսարքեր արտայայտութիւնը և կռանալով զէպի ամուսնու՝ քնքութեամբ ասաց.

—Մի վախենայ, սիրելիս, շուտով այդ բոլորը կանցնի:

Մեռնողը բացեց աշքերը, ժպտաց ու թոյլ ձայնով ասաց.

—Ախ, Զարուհի, երբ և իցէ արդեօք ներելու ես ինձ:

—Դու՝ այդպիսի մտքերով քեզ մի տանջիր, քեզ հանգիստ պահիր, որ շուտ առողջանաս, պատասխանեց կինը:

Հիւանդի եղբայրը մօտեցաւ ու ձեռը զիեց եղբօր ճակատին, որից հիւանդի զէմքը տժզոհ արտայայտութիւն ստացաւ և կամաց ինձ ասաց.

—Եղբօրս առաջ ձեռը վերցնի, շատ է ծանր: Եղբայրը այդ լսեց և ձեռը վերցրեց: Իսկ հիւանդը կնոջ ձեռը բոնելով ասաց.

— Զարուհի, ոտներս արդէն սառել են:
— Այս բողեին կ'հրամայիմ թող չիշերով եփած ջուր բի-
րեն, դմենք ոտներիդ տակը, որ տաքանայ. պատասխանեց կիմը,
դառնալով դէպի ինձ խնդրեց.

— Տիկին Ըննա, խնդրում եմ զնաք ինքներդ կարգադրէք,
որ շուտով երեք շիշ եփած ջուր բերեն: Բայց հիւանդը ընդ-
հատեց նրան տակը

— Իմ ոտներս արդէն մեռել են, տաք ջուրը նրանց չի
օգնի: Եւ աչքերը մեծ մեծ բացած՝ յառեց մի կէտի վրայ ու
սկսեց շուտ շուտ չնշել, որը տեսեց մօտ տասը բոպէ: Սառը
քրտների մեծ մեծ կաթիլները ծածկել էին ճակատը. յետոյ
զլուխը կամաց գարձրեց դէպի կինը և ասաց.

— Զարուհի, երկու անդամ է որ աչքերս սկանում են և
այս անտանելի ցաւը բռնում. եթէ երբորդ անդամ ևս բռնի՝
գժւար թէ գիմանամ: Զգում եմ, որ ոտքերիս սառոյցը հա-
սաւ մինչև կուրծքս: Ներս կանչիր եղբայրներիս, բարեկամ-
ներիս, ուզում եմ բոլորին էլ հրաժեշտ տամ:

Տիկինը ինձ աչքով արաւ, ևս գուռը բացի և բարեկամներին
ներս հրաւիրեցի: Բժիշկը այլիս ոչ ոքին չէր արգելում: Բարե-
կամները շրջապատեցին հիւանդին, նա ամենքին մի մի բաղ-
ցը խօսք առաց, խրատեց: «Մ'նաք բարով» տաց ու խնդրեց, որ
հիւանան միւս սենեակները, պատճառ բերելով, որ իրան օդ
է հարկաւոր և ինձ դառնալով ասաց.

— Խնդրում եմ յայտնես, որ նունիկին ուղարկեն վարժու-
հու տունը և իմ կողմից ինքրիք որ այսօր նրան տուն չթող-
նեն, իսկ վազը իմ փոխարէն համբուրիք նրան:

Յետոյ բռնելով կիոջ ձեռը, քաշեց իրան մօտ և հազիւ
լսելի ձայնով մրմնչաց.

— Որքան հետքաւոր է շուտ ամուսնացիք. և գարձեալ
աչքերը յառեց մի կէտի ու սկսեց արագ արագ չնշել ու կրկնել.

— Օգնիք, Զարուհի, պատահի ինձ այս ցաւից . . .

Սրտացաւ աղքակամները տիկինոջը դուրս տարան, որը

իրան բոլորովին կորցրել էր: Երկում էր, որ նա ոչինչ չէր
զգում, բացի այն որ ինքը մենակ էր: Նա չէր արտասռում,
չէր խօսում, լսում էր միայն ամուսնու սիրտ կարատող աղեր-
որ, բայց նրան էլ իրան օտար էր զգում: Յանկարծ բացւե-
ցին ննջարանի գռները և հիւանդի եղբայրը լալավ այնտեղից
զուրս եկաւ: Տիկինը զգաց որ այնտեղ ամեն ինչ վերջացել է,
նա լուս վեր կացաւ անդից, մտաւ ննջարան, մօտեցաւ ամուս-
նու գիւակին, յետ քաշեց երեսից նրա վերմակը և երկար ան-
խու նայում էր մեռածի երեսին:

Ի՞նչ էր մտածոմ արգեօք նա այդ բոպէին: Ուզում էր
հաշւել նրա իրան պատճառած ցաւերը, թէ ներիլ, և ով գիտէ,
զուցէ ինքն էր ներողութիւն խնդրում . . . որ նրան երբեք
չէր սփոփիլ: Այդ ոչ որ չհասկացաւ . . .

III

Աշոտեանի մահից յետոյ անցել էր մօտ հինգ աարի: Ես
ոչ մի տեղեկութիւն չտնէի թէ ինչ եղաւ նրա այրին, որով-
հետեւ նոյն քաղաքից տեղափոխւել էի ուրիշ բաղաք, մանկա-
րաբական ինստիտուտ, հիւանդապահի պաշտօնով: Այժմ այլիս
տանից տուն չէի ման զալիս հիւարդապահութեան, այլ իմ
հաստատ տեղու ու պաշտօնս ունէի, ուրով հայթայթում էի իմ
տպրուստը:

Ամառն էր: Հ քաղաքի հրատապ օրերից մէկը: Այդ օրը
հերթապահ էի հիւանդանոցի կանացի հիմնարկութեան բաժ-
նում: Առաւոտը նախորդ հիւանդապահից ստանձնելով հերթա-
պահութիւնը, շորից ճնշուած, չփիտեմ ինչպէս մերենայաբար
հաշեցի պահարանում եղած մաքուր ապակեղիները և ստո-
րագրեցի, յետոյ մտանք հիւանդների սենեակները, որը երկու-
սըն էին, առաջինի մէջ չորս հիւանդ կար, երկրորդում երեք:
Նոյնպէս մերենայաբար հարցրի հիւանդների ազգանունները,
ցաւերի տեսակը և զրեցի, որը իսկոյն մոռացայ: Տարութիւն-

ները չափեցի, դա էլ գրեցի։ Ժամի 10-ին եկաւ բժիշկը։ Նայեց հիւանդներին, համեմատեց նոյն օրւայ և նախորդ օրւայ տաքոթեան չափերը, գեղեր նշանակեց և ինձ պատվերներ տալով հեռացաւ։ Նախորդս տարաւ ինձ անդամահատութեան սենեակը, բացեց գործիքների պահարանները, հաշւեց և իր հաշխալ համեմատելով իր նախորդից ստացածի հետ և իր թէ ճիշտ գտնելով, դարձեալ թուղթը մեկնեց ինձ ստորագրելու։ Ես շորից այնքան էի թուլացել, որ մի բան էր միայն ինձ հետաքրքրում։ այն է այդ բոլոր ձեսկերպութիւնները շուտ վերջացնել և հանգստանալ։ Ուստի նախորդիս առաջարկած թուղթը առանց ստուգելու՝ ստորագրեցի։ Բայց մինչ այդ ստանձնելը կվերջանար, եղաւ ժամի 11-ը, հիւանդների նախաճաշելու ժամանակը. թէ ես մի աղախին և նրա աղջիկը ծայռում էին նրանց և ընդամենն էլ եօթ հիւանդ կային, բայց այնպիսի աղմուկ բարձրացրին, որ ես իմ յօվնածութիւնը մոռացայ։ Ամեն կողմից լսում էր զանգահարութիւն։ Մտնում ես մէկի պահանջը խմանալու, միւսն այն կողմից խնդրում է, որ փողոցից իր համար մի բաժակ կաթը բերին. երկրորդը զանգատուում է որ աղախինը իր պատէրը շուտ չի կատարում. մինչ դրանց ուղում ես հանգստացնել, միւս սենեակից աւելի շտապեցնող զանգահարութիւն է լսում, վազում ես այնտեղ, այստեղ էլ մէկի բարձն է ծուել, միւսը ծառային փող է տուել փողոցից իր համար ձռ առնելու, նա էլ դեռ մանր փողը չի վերադարձել, երբորդը կանչել, ինձ արդարացի կերպով բացատրում է, որ այդտեղ չի կարելի տղամարդ ծառայ ներս թողնել, որ հիւանդանոցի վարչութիւնը շատ է սխալում այդ հանգամանքին ուշադրութիւն չդարձնելով և կանանց ծառայելու համար տղամեր էլ է պահում, որմիք շատ անյարմար են կին հիւանդների համար։ Մի վրացի պառաւ հիւանդ էլ շարունակ ինձ յիշեցնում էր, որ իր շպիտեմ ինչը «կնեազ» է եղել, հետեւ պէս ծառաներն ու ես պարտաւոր ենք նրա պահանջը ամենից առաջ կատարելու։ Ես ինձ մոռացած շտապում էի մէկից միւսին։

Վերջապէս նախաճաշը վերջացաւ, հիւանդները մի փոքր հանգստացան։ Ես էլ բաշւեցի հերթապահի համար նշանակւած սենեակը և ուզում էի պարկել, եղբ յանկարծ միտս ընկաւ, որ այդ օրը մեր հիւանդների ընդունելութեան օրն էր և ինձ քնել չէր կարելի, այլ պարտաւոր էի հսկելու։ Նստել եմ շորից գլուխս շշմած, քրտինքը երեսից հօսում է, աշքերս խիստ փափաքով նայում են մահճակալն ու բարձին և հաւատացած եմ, որ եթէ գլուխս դնեմ վրան, իսկոյն ընկնելու եմ Մորփէոսի վիրկը։ Բայց չի կարելին մխւել է գլուխս։ Մտածում եմ ինքս ինձ՝ չի կարելի հանգստանալ, ինչու, և պատասխանում եմ, որովհետև պարտաւոր ես հսկելու։ Ո՞հ պարտաւոր բառը ի՞նչ անտանելի բառ է, պարտաւոր ես հսկելու, որովհետև ծառայում ես, աւելի անտանելի խօսք է այդ ծառայում-եսը, ծառայում ես որովհետև կարիք ունիս։ Ահա ամենասարսափելի խօսքը այդ կարիքն է։ Ահա այդպիսի մտքերի մէջ խորասուզւած էի, եղբ լուեց մի երկար զանգահարութիւն, ծոյլ ծոյլ վերկացայ և աշքերս տրորելավ քայլերս ուզգեցի գէպի նախասենեակը։ Արդէն սկսել էր ընդունելութիւնը։ Մինչ իմ գնալը՝ աղախինը արդէն գուռը բացել էր ու հեռացել, նախասենեակում շարած կանգնել էին երկու հոգի։ Մէկն օրիորդ էր սկ աշք-յօնքով ու երկար մաղերով, միւսը բարձրահասակ երիտասարդ շէկ մօսուսով ու ուռած կոպերով։ Օրիորդը ինձ տեսնելով եկաւ գէպի ինձ և բաշւող կերպով ուսուերէն ասաց։

— Եթէ կարելի է, մեզ տարեք տիկին Աշոտեանի մօտ։
— Տիկին Աշոտեան, հարցական կերպով կրկնեցի ես և յիշեցի, որ երկրորդ սենեակում երկու հայ ազգանուններ գրեցի տուալուեան, ու առաջնորդեցի գէպի այն կողմը։ Օրիորդի և երիտասարդի շփոթւած ու թափառող հայեացրից երեսում էր, որ մէկին շտապում էին տեսնել։ Ես գուռը բաց արի և նրանց ներս թողի։

Սենեակում երեք մահճակալ կար, նրանք մի թուցիկ

հայեացը դցեցին բոլորի վրայ էլ: Առաջնի վրայ մի չէկ ոռու կին էր պարկած, երկրորդ մահակալը դատարկ էր, նրա վրայի հիւանդը առողջանալու վրայ էր և զուրս էր զնացել պարտէզը զբօսնելու: Իսկ երկրորդ հիւանդը անշարժ մէջքի վրայ պարկած էր, աչքերը խփած, մահւան դալուկը դէմքին, աչքերի շուրջը ոհացած ու խորն ընկած, մի փոքր մեծ թիժը աւելի մեծացած ու որւած: Օրիորդը զոների մէջ կանդնած մնացել և աչքերը յառել էր այդ մահակալին: Ուու կինը նկատելով նրանց վարանումը, հարցրեց.

— Ո՞ւմ էք կամինաւ:

— Տիկին Աշոտեանին, պատախոննեց երիտասարդը:

Հիւանդը բնած չէր, և լսելով իր տպանունը, աչքերը բացեց ու պղտոր հայեացը շրջելով սենեակում կանդ առու երիտասարդի վրայ:

— Արաէն ճշաց հիւանդը:

— Զարուհի, զուրս թռուտ միաժամանակ քրոջ ու եղրոր րերանից, և վազեցին դէպի հիւանդը:

Տեսարանը սրտաձմիկ էր: Երերը միասին գրկախառնած հեկեկում էին և մերթ ընդ մերթ մի մի խօսք արտասահում: Ես հէնց սկզբից երբ օրիորդին տեսայ, մի տեսակյիշուղութիւն զարթնեց մէջո: Ինքս ինձ հարցնում եմ թէ՝ արգեօր սրանց մրտեղ եմ տեսել: Առանց ուշադրութիւն դարձնելու թէ, ինչ են անում, արձանացած կանգնել եմ և միայն այդ մասին եմ մտածում: Լաւ էր, որ ոռու կինը շուտ նկատեց և երիտասարդին համոզիչ եղանակով ասաց.

— Երիտասարդ պարմն, ուշքի եկէր, այդպէս յուղելով կարաղ էր ձեր հիւանդին վնասել:

Առաջինը հիւանդը եկաւ ուշքի և ձեռը զնելով քրոջ գըլ-լին՝ մորմորացող ձայնով ասաց.

— Թշւառ նունիկ, ուրիշները մի անգամ են որբանում, իսկ բու մի քանի անգամ որբացար, մի անգամ որբացար հօրդ մահով, յետոյ Գարեգինի, իսկ այժմ իմ մահւամբս . . .

— Զարուհի, զու չես մեռնի, մի ասի, զու մեղ հարկաւոր ես, սիրո պատառող ձայնով բոլորեց երիտասարդը, իսկ Աստւած էլ այսրան անդուխ չի լինի; որ քեզ էլ խի մեզանից: Մինչ նրանք այդպէս մորմորում էին, յանկարծ կարծես աչքերից վարագոյրը ընկաւ և հասկացայ, որ Աշոտեանի ընտանիքն է այսպէս թշւառացած. և այն զյուխը միշտ բարձր պահած ու ինքն իր մէջ ամփոփւած տիկինն էր այսպէս մահւան ճիրանիներում: Ես կամաց մօտեցայ նրանց փոքրիկ խմբին և աթոռ առաջարկեցի երիտասարդին, որը մինչ այդ քրոջ մահակալի առաջ չոքել էր. բայց նա վերկացաւ, զյուխը չնորհակալութիւն յայտնեց ու նստեց քրոջ մահակալի եզրին, իսկ օրիորդը մինչի վերջը մնաց չորած. և առանց մի խօսք արտասահում զյուխը գրած քրոջ թիփ վրայ՝ լուռ նեկեկում էր:

— Տիկին, զուք ինձ ճանաշում էք, հարցրի ես:

— Ինչպէս չէ, ես ձեզ առաւօտը ճանաշեցի:

— Բայց ինչպէս պատահեց որ այդպէս հիւանդացար:

— Օ՞հ, զա շատ երկար և տիսուր պատմութիւն է: Սակայն զիտեմ որ մահը շուտով ապատելու է ինձ:

— Զարուհի, այդ ինչեր ես խօսում, ինչու ես յուսահատեցնում մեզ, կրկին բոլորեց եղբայրը:

— Արաէն, առաց թոյլ ճայնով հիւանդը, օգնիր ինձ նրատելու, ես զիտեմ որ շուտով մեռնելու եմ, թող թափեմ սրտիս մէջ կուտակւած մաղձը. մանաւանդ որ երէկ լսեցի իմ պատավճիռը:

— Ախ, քոյրիկ, առաց երիտասարդը, երբ լսեցի, որ եկել ես այս քաղաքը ծառայելու, ի՞նարկի, առաջ շատ վրգովեցի, որ զու տասնետկ ծառաների տէր ստիպւած ես եզել ծառայելու. բայց մինեսյն ժամանակ միսիթարւում էի զոնէ տուղի ես, որ կարողանում ես ծառայել:

— Միթէ զուք ծառայել էք, զարմացած հարցրի ես:

— Ան, ես ծառայել եմ, զառը ժպտած հիւանդը:

— Բայց ձեր կարողութիւնը, չէ որ զուք ահազին կալ-

ւածներ ունէիք: Միթէ ձեր ամուսնը կտակ չէր թողել, խառն ի խոռոշ հարցեր առաջարկեցի ես:

—Կտակ, երկարացնելով առայ հիւանդը: Այս, նա կարողութիւնը ինձ էր կտակել: Բայց պատոր զբում ձուկ որսացողները դրա դէմ առնել կարողացան:

—Ի՞նչպէս, ուրեմն ձեր կարածները մնացին ձեր ամուսնու եղբօրը:

—Այս և ոչ, պատասխանեց հիւանդը,—բարի մարդիկ որոնց թւում և իմ հօրեղբայրն էր, իրանց շահերը աշրի առաջ ունենալով՝ ամուսնուս եղբօրը ճանապարհներ սովորեցրին ինձանից կարողութիւնս խլելու, որովհետեւ ամուսնուս և եղբօր գործերը միասին էին, ուստի եղբայրը որքան ուզենար՝ կարող էր ինձ այրան կարողութիւն ցոյց տալ: Նա էլ նրանց դրդմամբ և հաւատալով նրանց բարեկամութեանը, ամեն մէկին մի քանի տասնեակ հազարի պարտամուրհակ էր տւել, որոնց գորութեամբ նրան յաջողւեց ինձ կտակից հրաժարեցնել տալ: Իսկ այն բարեկամները իմ հրաժարելուց յետոյ փոխանակ իրանց կեղծ մուրհակները տիրոջը վերագրածնելու, դատարանով պահանջեցին, և այժմ նա ինձանից խլածը տալու է իր կեղծ պարտատէրերին:

Հիւանդը թուլացած գլուխը դրեց բարձի վրայ ու աշքերը խփեց:

—Եւ իմ խեղծ քոյրս իր թշւառ նունէին պահելու և ուսում տալու համար ստիպւած եղաւ դնալ օտարի մօտ ծառայելու, գլուխը բարձի վրայից վերցնելով աւելացրեց օրիորդը:

—Իսկ իմ առաջուց վշացած առողջութիւնը ծառայութիւնից էլ բերեց այստեղ, որտեղից էլ կենդանի չեմ գուրս գալու, կարծես երազում հաղիւ լաելի ձայնով շշնչաց հիւանդը:

Եղբայրը որ միշե այդ լուռ էր, կամաց կուացաւ դէպի քոյրը և հարցրեց.

—Զարուհի, ես անհամբերութիւնից մեռնում իմ, այն

ինչ ասացիր մի փոքր առաջ, ինչ դատավճով մասին է խօսք:

Հիւանդը բացեց աշքերը և յանկարծ զղային ցնցում անելով, ուզեց մի անդամից նստել առանց օգնութեան և յուղմունքից դողացող ու թուլացած ձայնով ասաց.

—Արսէն, լսիր, օպերացիայից յետոյ ես զեռ յոյս ունէի առողջանալու: Երէկ ճաշից յետոյ, երբ բոլոր հիւանդները քնած էին, բացի ինձանից, անդամահատութեան սենեակը մտաւ հիւանդանոցի վերատեսուշ թժկը և կանչելով անդամահատ թժկին՝ վերջի օպերացիայի մասին հարցընց: Վերջինը ես էի: Ամեն ինչ խաղաղ էր, այնպէս որ կից սենեակի խօսակցութիւնը պարզ լսում էր: Վերջին օպերացիան ինձ էին արել, դրա համար էլ ես ականջներս սրեցի: Մօտաւրապէս անդամահատը այսպէս բացատրեց՝ որ ես իմ ամուսնու հիւանդութեան պատճառով զրկւել եմ որդի ծնելու ընդունակութիւնից: Բայցի այդ, նրա հիւանդութիւնը վարակւել է իմ բոլոր օրգաններս, նա զեռ զարմանում էր որ ես այսքան էլ զիմացել եմ, և աւելացրեց, որ այժմ ամբողջ մարմինս սկսւել է հիւծւել, հետեապէս վախճանս հեռու չէ: Վերատեսուշը խորհուրդ տեսց այդ գէպքում ինձ առաձնացնել, բայց անդամահատը յայտնեց որ զեռ վազ է:

Վերջի խօսքերը լսելով օրիորդը մի ճիշ արձակեց և խկոյն իրան զսպելու համար գլուխը կտիսեց բրոշ բարձերի տակ: Ես մի փոքր միսիթարած լինելու համար ասացի:

—Եհ, զուք կարծում էք թէ թժկիները չեն սխալում: Բայց հիւանդը առանց ինձ լսելու՝ շարունակեց.

—Ուրեմն այդպէս ամբողջ տասը տարի տանջւելուց յետոյ, ես յոյս ունէի գոնէ ամուսնուս մահից յետոյ այս օպերացիայով ինձ ազատել նրա ճիրաններից: Հաւաքեցի իմ վերջի թոյլ ուժերս և զիմացայ անդամահատութեան աներեակայելի տանջնքներին, աւազ, այդ յոյսս էլ իգերե ելաւ և նա ինձ քաշելու է վերեպման: Սակայն մեղքս ինչ էր: Իսկ հակառակ

գէպօւմ եթէ ես դժբախտ հանդամանքով կուսութիւնս կորցրած լինէի, որ շատերին է պատահում, օ ինչ կանէին այդ գէպօւմ՝ թէ հասարակութիւնը և թէ հէնց իմ սիրող ամուսինը. չէ որ ինձ խաչը կհանէին, նոյն խոկ այն գէպօւմ էլ եթէ նոյն հասարակութիւնը գիտենար, որ իմ ամուսինը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի թոյնով լի պարկ և իր երիտառարդութիւնը անբարոյականութեան մէջ փշացրած արարած։ Ո՞հ, որքան մտածում եմ, այնքան սարսափու և զգւահքս շատանում է, միևնոյն ժամանակ այս հասարակութեան մէջ տիրող կարգերը ինձ զարմացնում են. իմ ամուսինը վայելում էր բարի աղնիւ բաղաքացու անուն, բայց չէ որ նա աւելի եղեռնագործ էր քան սարերում մարդասպան տամնեակ աւազակներ միասին վերցրած։ Աւազակը մի անգամ կոկորդը կտրում ուրբծնում է, խոկ ես մահու տանջանք եմ կրել ամբողջ տառ տարի, ամեն օր, թէ բարոյական և թէ ֆիզիրական։

Քրոջ յուզուած ժամանակ երիտառարդը մի քանի անգամ փորձեց նրան հանդարտեցնել, բայց ի զուր, նա կարծես նոյն խոկ մոռացել էր մեր ներկայութիւնը. քանի զնում՝ նա այնքան զունատում էր. Ես սկսում էի անհանդստանալ հիւանդի այդ յուզուած դրութիւնից, մահաւանդ որ արդէն ժամանակը լրանում էր պէտք էր այցելուներին հեռացնել, բայց ես անզօր էի սրանց իրարուց բաժանել, այն էլ հիւանդին այդ գրգռւած ժամանակ։ Սակայն ինչ կարող էի անել. կամաց մօտեցայ երիտառարդին ու ասացի.

—Պարոն, ժամանակ է հեռանալու։

—Ի՞նչպէս, վախեցած հարցը նա, —ես Զարուհու այս գրութեան մէջ ի՞նչպէս թողնեմ ու հեռանամ։

—Խոկ ձեր ներկայութիւնը միւս հիւանդներին նեղում է։

—Տէր Աստած, բայց ինքներդ ասացէր, ի՞նչ անեմ. ի մի փորբ մտածելուց յետոյ աւելացրեց, —միթէ չի կարելի Զարուհուն տեղափոխել ուրիշ սենեակ, որ մենք միշտ մօտը մնանք։

—Ինչու չէ, սակայն նախ պէտք է բժշկին իմաց անել.

ասացի ես և գուրս գնացի սենեակի մասին կարգադրութիւն անելու։ Արդէն առաւտաւանից հիւանդ Աշոտեամի համար նշանակւած է եղել ծայրի փորբ սենեակներից մէկը. Իսկոյն ես, երիտառարդը և աղախինը բռնելով հիւանդի մահճական լից՝ տեղափոխեցնիք ուրիշ սենեակ, որտեղ որքան ուզենային կարող էին մնալ. Հիւանդը ուղղւեց մահճակալի մէջ և հողոց հանելով տաց։

—Ահա և սենեակս, փոխեցին, ուրեմն չուտով կազմաւեմ իմ տանջանեներից, —և մի փոքր լոելուց յետոյ աւելացրեց, —կազմաւեմ միայն ես, բայց որքան ինձ պէս տանջւողներ կան, որոնք նոյն խոկ չգիտեն էլ թէ ինչու են տանջում . . .

—Քոյրիկ, սիրելիս, դարձեալ աղերսեց եղբայրը, —բաւական է յուզւես, մոռացիր, թող այդ մտածմունքներդ . . .

Հիւանդը մի ցնցումով նստեց և եղքօր ձեռը բռնելով, խեղդւած ձանով արագ արագ վրայ տւեց։

—Արսէն, ինձպէսները կ'լանն միայն այն ժամանակ, երբ հասարակութիւնը կհամնի գիտակցութեան այն աստիճանին, որ մտածեն թէ տղամարդիկ էլ նոյնպիսի մարզիկ են ինչպէս ի կանայք, և սր նրանք էլ են պարտաւոր մտածել իրանց բարոյականութեան մասին, որը ամուր պատւանդան է ապացոյ կազմեկիք ընտանիքի համար։

Հիւանդը բանի զնում թուլանում էր, ձայնը հազի լսելի էր լինում. Ես դարձեալ վաղեցի բժշկի մօտ, յայտնեցի ուղղակի որ հիւանդի դրութիւնը ինձ կատկածելի է թւում. Բժիշկը եկաւ, նայեց զարկերակին և զուխը շարժելով առաց։

—Իզնուր էր լողել որան այսրան խօսելու։

—Հիւանդը դառնութեամբ աչքերը բացեց և հեղնելով բժշկին ասաց։

—Պ, բժիշկ, միթէ միևնոյն չէ այսօր կամ վաղը. ինչ լինելու է վաղը, թող լինի այսօր, բացի այդ ինձ ոչ սր չի կարող լոեցնել, տարիբերի ընթացքում հաւաքւած լաւան է

որ այսօր պիտի դուրս ժայթքեմ:

Բժիշկը ոչինչ չ'պատասխանեց ու դուրս դնաց: Ես էլ հետեւցի նրան:

—Այս զիշեր այդ հիւանդի մօտ զիշերեցէք, եթէ ուղում են թող ապկականներն էլ մնան. պատւիրեց իհձ բժիշկը:

Միւս հիւանդներին նայելուց յետոյ գարձեալ մտաւ տիկին Զարուհու սենեակը: Առաստաղից կախած լապտերի ազօտ լոյսը հազիւ էր լուսաւորում սենեակը: Հիւանդը մէջըի վրայ ընկած ծանր չնշում էր, իսկ քոյրն ու եղբայրը յուսահատ մահճակալի երկու կողմը կանգնել, լուռ արտասուրներն էին կուլ տալիս: Ես չգիտէի ինչ անեմ, ուզում էի մի կերպ միթթարած լինել, բայց չէի կարող ինքս ինձ զսպել, իմ արտասուրնել էր հոսում:

Նա բացեց աշքերը, բռնեց բրոջ ձեռքը և իրան բաշելով ասաց.

—Թշւառ նունիկս, որբերից որը նունիկս, ոչինչ չունեմ որ քեզ կտակեմ. սակայն իմ քեզ վերջին կտակս այս է. երբ ամուսնակու լինիս մի շանար ոչ հարստութիւնից և ոչ զեղեցկաւթիւնից, գրանք լաւ են միայն հասարակութեան մէջ երեալու համար, բայց ընտանիքի համար աւելի լաւ է առողջ ու համեստ ամուսինը: Ըստանիք կազմելու ամենազլիսառ պայմանը՝ առողջութիւնն է, իսկ առողջութիւնը միշտ սիրում է շափառութիւն, աշխատութիւն ու համեստութիւն. Ես քեզ այդ երեքն էլ սովորեցրել եմ. զու էլ այդ որոնիք բռ ապագայ փեսացուիդ մէջ: Յետոյ աշքերը բացեց և յառելով եղբօր վրայ գլուխը շարժելով ասաց.

—Ախ ինչու հասարակութիւնը ձեզ այլքան երես է տևի, և զուր շափազանց օգտւելով այդ առաձնաշնորհումից, թէ ինքներդ էր տուժում և թէ անմեղ արարածների կորստեան պատճառ դառնում: . . . Ո՞հ, զգում եմ որ վերջու մօտենում է, և իմ քողորը պիտի խեղպւի այս սենեակի շորս պատերի մէջ: . . . Սակայն թնալ վերջին չնշումո իմ տառապալից

կրծքից դուրս թռած վերջին հեծեծանըս զնայ, միախառնւի ինձ պէս դժբախտների մրմունջի հետ և ծակի հասարակութեան սիրտը. թէրևս իմ պէս թշւառների բաղրորը կարողանայ մի օր խորտակել նրա այդ սխալ և միենոյն ժամանակ օրէնքի ոյժ ստացած կարգերը. և նա ինչ պահանջում է կանանցից, նոյնը պահանջի և տղամարդկանցից . . .

Օրիորդը նկատելով նրա ուժասպառ լինելը սկսեց բարձրածին հեկեկալ. հիւանդը կարծես նրան խղճաց, բռնեց ձեռից, քաշեց գէպի իրան և լռեց. մի քանի բռպէից քրոջ ձեռը իրանից յետ մղեց: Քոյրը վախեցած վեր թռաւ և սկսեց իրան կորցրած բրոջ անունը տալ:

Հիւանդը վերջին անգամ բացեց աշքերը և յառելով քրոջ վրայ՝ մնաց անշարժ . . .

Նա արդէն ապատւել էր իր տանջանքներից . . .

Տ. Զանազան ՄԵՇՐԱՐԵԱՆՑ

վաճառքայի բար սպասահեծ մէջզի նույնի ողոր զիզնոր
ափառաց իման և ուժ Արևանդ պահանջանքի սկզ հմէ
արտապ ողորդ վաճառքի սկզ ոչ ուշի և զայդ առնի
թափանակ նույն և զայդ ըստ ուր վաճառքայ ոչ մի լուս
որ Հետապնդու ոչ ուն և զայդայ նույն եղ զայդայ

Կ Ե Ղ Ծ Ա Ւ Ո Ր Ը

Յարափոփոխ ունի գըծուծ նա դիմակ.
Յաճախ քծնող, մերթ սողացող, միշտ գրուժան.
Ի՞նչ է ընկեր, ի՞նչ բարեկամ, բառ համակ
երբ բարձրագոշ խօսի իր շահն անձնական:

Քեզ կը խօսի համակրանօք, միշտ անուշ.
Եւ շատ հեշտիւ քեզ բարեկամ կ'անուանէ.
Մէն մի խօսրիդ նա կընծայէ սիրով ուշ.
Եւ հիացմամբ խելք ու միտքը կը գովի:

Փոյթ չէ թէ գուն դանի բընաւ չես սիրեր,
Պախարակիս անոր ընթացքն անազնիւ.
Քեզնէ երբէք բացատրութիւն չի խնդրեր.
Ժըպիտն է նոյն թէպէտ կատէ քեզ սերախ . . .

Կը մօտենայ, կը բարեկ միշտ սիրով.
Եւ կը խօսի. ձեռք ալ սինդ մը կը սեղմէ.
Մինչ դառնութեամբ լի է սիրալ ու մաղձով
Հոգւոյն խօրէն երբ քու կորուսող կ'երագէ . . .

Է՞ն, ի՞նչ ընէ. . . այսպէս իր շահն անձնական
Կըստիպէ որ նախատինքի համբերէ.
Դեռ հըզօր ես. կըսպասէ որ ապագան
Դուցէ տրկար, քեզ իր ձեռքը կը մատնէ . . .

Երբ գու մօտն ես, նախատելու կը վախնայ,
Որ հեռանաս, է՞ն, այն ատեն կըսկըսի.
Սիրտ, զգացում, խիզճ ու պատիւ չունի նա.
Երբ շես լըսեր, ինքն այն ատեն կը խօսի . . .

Եւ թէ օր մը կոյր բաղդին խազն անիրաւ
Բարձրութենէդ վայրիկ մ'իյնալդ որ թողու,
Օ՞ն, այն ատեն այդ ապիկար երկոտ նաւ.
Տըկար եղունգն կ'ենէ վըրագ սըրելու . . .

Իր վրէմը ահա այսպէս կը լուծէ.
Միշտ քու տրկար, միշտ քու ընկած վարկինին.
Նա՝ մութին մէջ միայն գաւեր կը նիւթէ,
Խուրդին պէս, որ կը վախնայ դէմ լոյսին:

Կուգայ օր մը. կը բարձրանաս գու զարձեալ.
Կից մը կուտաս այդ կեղծ մարդու կռնակին.
Կը մօտենայ նա երբ տեսնէ քու նոր փայլ.
Խոշոր թնար մը նետէ ազատ երեսին:

Մատի գէլլէրեան:

ՈՒՏՈՊԻԱՅԻ ԵՒ ԻՐԱԿԱՆԹԵԱՆ ՄԵԶ ՏԵՂԸ

Այն, ինչ ներքեւ կ'գտնէ ընթերցողը իմ գրւածքում, ոչ բանաստեղծական և ոչ էլ հրապարակախօսի երեակայութեան արդինք է։ Դա լոկ իրական կեանքի նկարագրութիւն է։

Այդ իրականութիւնը գոյութիւն ունի և գտնում է չիւսիսային Փրանսիայի Էն նահանգի Գիդ քաղաքի շրջակալքում և կրում է Գիդի Փամիլիստէր, շատերի համար ծանօթ և աւելի ևս շատերի համար ահծանօթ անեւնը^{*)}։

Ով ուզում է անաշառ գաղափար կազմել ժամանակակից քաղաքակրթուած երկրների մասին—անպատճառ պէտք է անձամբ տեսնէ այդ երկրներում կատարւածը և չ'պէտք է բաւականանայ միայն զրբերով։ Այդ էր որ ինձ ստիլեց մի օր գնալ տեսնել անձամբ Գիդ քաղաքի մօտ գտնուած Փամիլիստէր ընկերութիւնը, որի մասին ես այնքան բաներ էի լսել, որ ինձ թւում էր, թէ Փամիլիստէրը մի հեքիաթ է։ Անցեալ աշնան սկզբում ես ուզերւեցի Պարիզից դէպի Գիդ այդ Փամիլիստէրը տեսնելու համար։

Ցիշելով, որ 4—5 ժամ ճանապարհին ժամանակ ունիմ, ես նախօրօք գնել էի Փամիլիստէրի հիմնադրի կենսագրութիւնը, որպէս զի գալով Փամիլիստէր գոնէ մի քիչ ծանօթ լինիմ, թէ ով էր Փամիլիստէրի հիմնադրը, ինչպէս էր նրա կեանքը։ Ռւստի առաջ քան թէ իմ այցելութիւնը պատմելլ՝ օգտուիմ այդ բարակ գրքոյկից և մի քանի տեղեկութիւններ

^{*)} Familière de Guise, Departement d'Aisne (France). Պարիզից ընդամենը 4-5 ժամուայ հեռաւորութեան վրայ է գտնում։

տամ հիմնադրի մասին, որի անունն է Ժեան Քօդէն։ Նա ծնւել է 1817 թ. Փրանսիայի Էն (Aisne) նահանգի փոքրիկ գիւղերից մէկում։ Ամենատարբական կրթութիւնը ստանալուց յետոյ՝ Քօդէնը 11 տարեկան հասակում իր հօր արհեստանոցում սկսում է աշխատել, որպէս հասարակ արհեստառոր։ Հօր մօտ Քօդէնը մնում է մինչև 17 տարեկան, երբ հեռանում է հօրեկան գիւղից և գնում է ուրիշ աշխատանք վնտրելու Փրանսիայի մեծ կենտրոններում։ Երկար գժուարութիւններից յետոյ նա գտնում է մի աշխատանք, որտեղ օրեկան հայթայթելու նպատակով նա բանում է 15—16 ժամ օրեկան, բացի այդ ենթարկելով ամեն տեսակ կոպտութիւնների իր տիրոջ կոկմից։ «Հէնց այդ ժամանակ, անում է նա իր լիշտակարանում, խօսք տվի ինքս ինձ, որ եթէ մի օր այդ անտանելի պայմաններից բարձրանամ և մի քիչ ապահով կեանք ձեռք բերեմ—պէտք է վնտրեմ այնպիսի միջոցներ որ աշխատաւորի կեանքը աւելի բարձր և աւելի բարգր լինի, քան ինչ որ է ներկայում»։ 1840 թ. Քօդէնը գալիս է իր ծննդավայրը և մի փոքրիկ արհեստանոց է բաց անում, որտեղ և աշխատում է 2-3 տարի բանութիւնների հետ։ Ի ընէ ընդունակ լինելով՝ Քօդէնին աջողութ է մի նորութիւն մտցնել իր երկաթեայ և չուտունի շինուածքներում և այդ գիւտը նրան օգնում է իր արհեստանոցի մեծացնելուն։ Կարճ ժամանակից յետոյ նրա մօտ աշխատում են արգէն մօտ 30 բանուր և նա այդ բոսէին սկսում է իր խոստումը իրականացնել, մինչդեռ ամբողջ Փրանսիայում այդ ժամանակ բանում են օրեկան 14 ժամ—Գօտէնը իր արհեստանոցում սկսում է բանեցնել նախ 12 ապա և 10 ժամ։ Չուտով անում է այլևս երկու երեր հատ աջող գիւտեր վառարանների յարմարեցրած, որից նա հեշտութեամբ սկսում է հարստանալ։ Եւ երբ տեսնում է, որ արգէն հարուստ է, զգում է իր մէջ ոյժ և ձեռնարկում է իրականացնել իր վաղուցայ մտածածը։

Պէտք է ասել, որ Գօտէնը սեփական ձեռնարկութիւնից

առաջ՝ նախ աջակցում է ուրիշների բարենսրսվչական ձեռնարկութիւններին։ Անդադար կարգալով՝ նա բաւականին զարգացել էր մտաւորապէս և շատ էր սիրում Փրանսիայի ուսուպիստ—մտածող Փուրէին և նրա գրւածքները։ Այդպէս իր ունեցածի երրորդ մասը մօտ 100 հազար ֆր. նա տալիս է փուրիէի ամենափայլան աշակերտներից մէկին Վ. Կոնսիգնիարնին, որը 50-ական թուականներում մի ուսուպիստական համայնք էր ուզում հաստատել Գէլսասում, Ամերիկայում։ Զեղնարկութիւնը իրագործուամ էրայց շատ անյաջող և լի զըրկանքներով։

Այդ անաջողութիւնից յիշոյ Գօտէնը մտածում է, որ ինքը անձնապէս կ'կարողանայ անել այն, ինչ Կոնսիգներանը չ'կարողացաւ։

1859 թ. մինչև 1880, երբ վերջապէս նա հաստատում է Փամիլիստէրը—նա անդադար մեծացնում է իր արհեստանոցները և միննոյն ժամանակ սկսում է զանազան բարենորդչական փորձեր անել։

Հիմնում է կօպերատիւ խանութներ, չափահաս բանուսըների համար ուսումնարան, հիւանդների օժանդակիչ ընկերութիւն և այլն։ Սկսում է կրթել իր բանուորներին և նրանց բարոյապէս պատրաստել իր հաստատելիք «Փամիլիստէրի» համար։

Վերջապէս երկար տարիների արած փորձերից տեսնելով որ իւր ուսուպիան կարող է իրականացնել 1880 թ. պաշտոնապէս նա հիմնում է —«Աշխատանքի, տաղանդի և կապիտալի միութիւնը»— Փամիլիստէր անուան տակ։—

Իր Փամիլիստէրի համար նա մշակում է մի ծրագիր, որը շատ բնորոշ խօսքերով է սկսում։

«Կեանը փառարանելու և մարդկանց մէջ արդարութիւնն աստատերու նպատակով—ներկայ կանոնադրութիւնը հիմնը ում է հետեւալ վարդապետութեան վրայ։

1) «Կեանքը վերին օրէնքն է այն ամեն բանի, որ գոյու-

թիւն ունի։ Ամեն բան կեանքի համար է և կեանքը եղած է իբրև վերջ և վախճան ամենայն ինչի։ Մարդը կատարելագործուկու համար է, որ ստանում է իր գոյութիւնը։

2) «Աշխատանքը պէտքէ թոյլ տայ մարդուն բարձրացնել մարդկային կեանքը. մարդը միւս կենդանիներից ամենաբարձր տեղն է բռնում և հինգ դրա համար էլ մարդկային կեանքը արժանի է պաշտպանութեան, յարգանքի և ուշագրութեան։»

3) «Անհատը և հասարակութիւնը նպատակ ունին գործել յօգուտ մարդկային կեանքի բարօրութեան։»

4) «Այս պարտականութեան զգացմունքը թելատրել է բռնոր ժամանակների իմաստուններին հետեւալ մտքերը, որի իրագործումը նրանք քարոզում էին մարդկանց։

«Միեւ ուրիշներին, ինչպէս սիրում ես ինքդ քեզ։»

«Ուրիշների հետ վարւել այնպէս, ինչպէս կկամենայիր, որ քեզ հետ վարւէին։»

«Ժառանիցնել մեր ընդունակութիւնը և տաղանդը մեր և ուրիշների գոյութիւնը բարեկաւացնելու համար։»

«Երբէք չ'գաղարել գործունէութեան ժամանակ շխտակութեան և ճշմարտութեան սկզբունքից։»

5) «Միանալ՝ փոխադարձաբար մեզ օգնելու համար։»

Որպէսզի այս իմաստալից մտքերը իրականանան—մենք ունինք հետեւալ միջոցները։

ա. Բնութեան և հասարակութեան հաստատութիւնը։

բ. Աշխատանքը և խելացիութիւնը։

գ. Կապիտալը կամ կուտակուած աշխատանք։

Ճերեկւայ ժամը տասն էր, երբ ես հասայ Գիզի կայսրանը, որտեղից ուղևորւեցի գէպի մօտակայ Փամիլիստէրը։

Երեակայեցէք Զեզ, ընթերցող, երեսուն գեսեատին հող, որի կէսը լիրն է արհեստանոցներով և գործարաններով և որի միւս կէսը կանաչ արօտ, պարտէզ, պարախզ մէջ տեղը մի արձան, պարտիզի միջից անցնում է մի փոքրիկ գետակ։ Պարտիզում 20—25 երեխաներ առաջ և ժիր։ Մօտենալով զրան-

ցից մէկին, որը հաղիւ 5 տարեկան էր, ինդրեցի, որ ցոյց տայ Փամիլիստէրի կառավարիչին պ. Կոլէնին:

Երեխան առաջիցս ընկած, վազեց դէպի աջ ինձ էլ ձեռքով դէպի իրան կոչելով: Ես հասայ հրավարակի վրայ և իմ հանդէպ տեսայ երեք հատ չորս յարկանի տներ, մէկը մէջ տեղը, երկուրն էլ երկու կողմից աւելի մօտ կանգնած դէպի հրավարակը:

Կառավարչին գտնելուց և նրան բացատրելուց յետոյ իմ այցելութեան նպատակը—կառավարիչը ամենայն սիրով յանձն տռաւ ինքը անձամբ ուղեկցելու և բացատրելու ինձ Փամիլիստէրի բոլոր մանրամասնութիւնները:

«Ուզնամ էր, տեկին, սկսել Զեր այցելութիւնը հենց մեր հանդէպ կեցած արհեստանոցներից և գործարաններից, հարցրեց պ. Կոլէնը, որպէսզի զաղափար ունենաք թէ ինչ ենք և ինչպէս ենք արդիւնագործում մեր Փամիլիստէրում»:

Մեր առաջ երկայն շարքով կառուցւած էին մէկը միւսի կողքին բազմաթիւ ահագին շէնքեր, որոնք երեք տեսակ նիւթից էին շինուած՝ աղիւսից, երկաթից և աղակիից, իբրի ծածկոց:

«Ահա այս տեղ են պատրաստում մեր փոքրիկ երկաթէ վառարանները, նոյնպէս և խոհանոցում գործածւելիք անհրաժեշտ ամանները, և փոքրիկ կաթսաները և ուրիշ իրերը», ասաց Կոլէնը, և մենք մտանք մի միծ սրահ, որ տեղ անսովոր մարդու համար ազմուկը սաստիկ էր:

«Զեայ Փրանսիայում մի փոքրիկ բազար, որ գուք շըգտնէր մեր արհեստանոցներում պատրաստած իրերը. մեր բանուրները այնքան լաւ են պատրաստում, որ հարիւրներով չնորհակալութեան նամակներ ենք ստանում մեղնից վնողներից: Այս տեսակ աշխատանիքները բացի յայտնի ֆիզիկական աշխատանքից պահանջում են բանւորից և որոշ արտիստիկական ճաշակ: և սէր աշխատելու ժամանակ, և մենք այդ կողմից կարող ենք պարծենալ, որ մեր բանւորները բանելիս մի որեւէ

առարկայի վրայ՝ վարւում են նրա հետ, ինչպէս մայրը իր երեխայի հետ, ամենայն սիրով. դա հասկանալի է. այդ գործը, նրանց սեփական գործն է, մանաւանդ որ նրանք մեզ մօտ համեմատաբար քիչ են բանում, բնդամենը ինը ժամ...»

—Բայց դա քիչ բան չէ այսպիսի մժնողրտում ինը ժամ՝ բանելը. մենք այստեղ ընդամենը տասը ըոսէ ենք և ես աղդէն կ'զերապասէի գրսի օգը:

«Ճիշտ է ինը ժամը շատ է, բայց մենք շուտով կ'փոքրացնենք այդ քանակութիւնն էլ. մի մոռանաք, որ այդպիսի փոփոխումներ կարող են անել Փամիլիստէրի գործարաններում—միայն մեր ընդհանուր, բոլոր այստեղ աշխատով անհատներից կազմւած ընդհանուր ժողովը: Եթէ ժողովի մեծամասնութիւնը վաղը վճռէ, որ պէտք է աշխատել օրական այսրան ժամ—դա կլինի օրէնք ցնոր կարգադրութիւն»:

—Ուրեմն այդ ընդհանուր ժողովը կարող է վազը ամեն ինչ փոփոխել, եթէ միայն ցանկայ:

«Երբէք, կան որոշ սկզբունքներ, որ ոչ մի դէպքում չի կարելի ոչ և չարն գործածել և ոչ էլ փոփոխել, օրիրակ. այս բոլորը ինչ որ տեսնում էր Փամիլիստէրում, դա մեր բոլորիս սեփականութիւնն է, բայց դա մեր մասնաւոր սեփականութիւնը չէ, այլ ընկերային: Նոյնը կասեմ, օրինակի համար և վարձատրութեան համար»:

—Զեզ մօտ ուրեմն վարձանը են նրանք ինչպէս և միւս գործարաններում, հարցրի ես Կոլէնին:

«Այն, և Գօտէնի թողած ծրագրի և կտակի հիման վրայ. մեզ մօտ ըստ կանոնագրութեան գործի ընդհանուր օգտից նախ և առաջ վեցցում է «25% մտաւոր և բարոյական աշխատանքին» որի տակ հասկացւում է վարչական, հսկողութեան, խմբագրական և այլ աշխատանքը, մնացած 75% տրում է աշխատանքին և կապիտալին ըստ իրանց հաոցը ծառայութեան: Պէտք է Զեզ ասեմ, որ կապիտալը վերցնում է ընդամենը միայն 5%, իր մայր գումարի համար, որը այս բոլոր

շէնքերի, ապրանքների ու մեքենաների մէջ է պարունակում: Բացի այդ ոլէտք աւելացնել և հետեւելը: Այն մեր ընկերները որոնք այս տեղ աշխատում են քսան տարուց աւելի և ապօռում են ֆամիլիստէրում—նրանք իրանց պատկանելիք վարձից և արդիմքից զատ ստանում են այլիս 2% օգտից, իսկ նրանք, որ քսան տարի բանել են, բայց ֆամիլիստէրում չեն ընակում, ստանում են $1\frac{1}{2}$ տօկոս իրանց վարձից ու արդիմքից զատ: Սակայն մեզ մօտ կան և այնպիսի բանւորներ, որոնք աշխատում են ժամանակառու կերպով. որանք իրանց վարձից զատ օգտում են ի դէպո մեր «Հիւանդների արկղից», «Ճերութեան արկղից» և այլն:

—Այս վերջիններիս օրավաճը երեխ մեծ չէ, քանի որ նրանք, այսպէս ասած ֆամիլիստէրի պատահական հիւրերն են:

«Այս, չի կարելի առել, որ մեծ լինի, բայց զաւառական էժան կեանքի պահանջների հետ համեմատած նրանց բաւականացնում է, մեզ մօտ ստանում են վարձ 5 ֆրանքից սկզբած մինչև 6 ֆր. (2 ր.—2 ր. 40 կ.) օրական: Երբ Գօտէնը 1880 թ. հաստատեց այս ընկերութիւնը—ֆամիլիստէրը իր հոգով, գործարաններով և այն արժէր 2 միլիոն քր. այժմ՝ զրա արժողութիւնը համառ է 5 միլիոնի. գոնէ այդ թւով է պաշտօնապէս հաստատած կառավարութեան կողմից մեր զործարանական ընկերութիւնը: Այդ ամբողջ հարսառութեան տւած արդիւնքը բաժանւում է այն բոլորի մէջ, որոնք ֆամիլիստէրում ներկայումս բանում են և կամ որոնք բանել են քսան տարուց աւելի: Գալափար տալու համար ասեմ 2եղ, որ ամեն մի բանուոր միջին թւով տարեկան ստանում է թէ օրական վարձը և թէ զործի տարեկան վաստակի տօկոսը հաշտած երեխից մինչև չորս հազար քր. և նրա աշխատանքը ապահով է և նա ինքն էլ ապահով է ամեն մի շարիքի գէմ»:

—Ես յսել եմ, որ 2եր ֆամիլիստէրում բնակիչների թիւը համառ է 1800-2000-ի. կայ արդեօք գրանց մէջ զանագանութիւն առանձնաշնորհութիւնների տեսակէալից:

«Թուր գիտէք երեխ, որ մեր ֆամիլիստէր կոչւած ընկերութիւնը կառավարում է 15 հատ ընտրւած կառավարիչների կողմից: Գրանցից ամեն մէկը որոշ ճիւղի, որոշ մասնագիտութեան ներկայացուցիչ է և կառավարիչ—գրանք բոլոր կազմում են մեր վարչութիւնը: Այդական կարող են ընտրւել ամեն մի անդամ եթէ միայն 25 տարեկանից փոքր չէ և գրել կարգալ է իմանում—գրանք ընտրւում են երեք տարով և կարող են վերընտրել, ես պաշտօնական ներկայացուցիչ եմ մեր ընկերութեան, նոյնպէս ընտրւում եմ ընդհանուր ժողովի կողմից և ես արդէն թւով երբորդ կառավարիչն եմ Գօտէնի մահից յետոյ, որը մեռաւ 1888 թ.: Գալսկ մեր բոլոր բանւորներին նրանք բաժանուում են. 1) ընկեր-անդամների, 2) անդամների, և 3) մասնակցողների»:

—Երեխ ընկեր-անդամները ամենից շատ են օգտուում:

«Այս... բայց այս մի աստիճան է, որին ըստ կանոնադրութեան ամեն մի բանուոր կարող է համել, զա կախուած է նրա մատուցած բարոյական ծառայութիւնից և նբա բազմամեայ աշխատանքից. և բոլոր պայմանները ունենալուց յետոյ նա նոյնպէս կարող է ընտրւել ընկեր-անդամ, Գօտէնի ժամանակ 1880 թ. ընկեր-անդամների թիւը համառ էր 46-ի, ներկայումս հասել է 316-ի»:

Մէկը միւսի շարրով մենք անցնում էինք երկայն սրահներ, մեծ և փոքր մեքենաների մօտից, անցանք արհեստանոցներ, օրական պատրաստում են բնակարանների համար տանեակ առողջապահական և լուսաւորութեան զործիքներ երկաթից, պղնձից, նիկելից և չուգանից:

«Այս բոլորը ծախում ենք կամ այստեղից և կամ մեր գլխաւոր պահեստներից, որոնք կ'ապատահէք մեծ բազաքներում, մի բանի հատ խանութներ մենք ունենք և Պարիզում: Բացի մի բանի հատ խանութներ և մի մասնաճիւղ Բելգիայում: Երբ մեր այդ մենք ունենք և մի մասնաճիւղ Բելգիայում: Երբ մեր հիմնադիրը Գօտէնը մեռաւ, նա թողեց թէ գիւղում և թէ Բելգիայում մի փոքրիկ կտոր հաղ, որի վրայ կառուցւած էին

մի երկու արհեստանոցներ. այդ բոլորը պատկանում է ֆամիլիստէրի ընկերութեան, և այդ տեղ էլ արդէն գործադրութեան ֆամիլիստէրի բարոյական և նիւթական պայմանները»:

—Քանի որ ակնարկեցիք բարոյականի վրայ, մէջ բերի, չէք կարող պ. Կոլին, ինձ գաղափար տալ Զեր ընակիչների մտաւոր և բարոյական զարգացման աստիճանի մասին։ Զէք պատահում արդեօք նրանց մէջ ժամանակ առ ժամանակ մի տեսակ խուլ տժգոհութիւն այս կամ այն պայմանների վեմ ուղղւած։

«Օ, տիկին, բացականչեց իմ ուզեցոյցը, պատահում են, աւելի ճիշտ ասած պատահում էին, բայց այնքան քիչ և այնքան անհիմն, որ ինքը տժգոհութիւն յայտնողը կամ հեռանում էր բոլորովին այստեղից և կամ խելքը զլուխը եկած ինքը ամաշում էր յետոյ յիշել իր տժգոհութիւնները, և բայց այդ անհամաձայնութեան ու լուրջ տժգոհութեան համար պէտք է լինի նիւթական հիմք. իսկ հէնց այդ նիւթական հիմքը պակսում է. և իսկապէս, ինչ պէտք է մարդուն, զոնէ մեղ պէս միջակ մահկանացուին, եթէ ոչ, որ մեր աշխատանքը լինի կարելիին չափ առողջապահական պայմաններում, լաւ մնունգ, առողջարար բնակարան, բարոյական հանգստութիւն և մտաւոր ու բարոյական գւարճութիւն, օր. թատրոն, գորեք, զանազան խաղեր, երաժշտութիւն։

Տեսնում եմ, տարացած շարունակում էր Կոլինը, որ դուք սկէպտիկ հայեացը ձգեցիք վրաս. թոյլ տէք ուրեմն Զեղ առաջնորդեմ մեր բուն, իսկական ֆամիլիստէրի աշխարհը, այսինքն մեր համայնքի այն մասը, որտեղ ապրում են ոչ թէ միայն ֆիզիկապէս, այլ և բարոյապէս ու մտաւորապէս։ Այդ նպատակով մենք նախ և առաջ կ'այցելենք մեր բանութիւնների բնակարանները և դուք ի մոտոյ կ'տեսնէք, թէ ինչպէս են նրանք ապրում։

Հստ ֆամիլիստէրի կանոնադրութեան այն բանւորները և նրանց ընտանիքները, որոնք աշխատում են ֆամիլիստէրի

գործարաններում, կարող են ընակութիւն հաստատել հէնց այդ տեղ շինւած ընակարաններում. և նայած իր ընտանիքին մեծ կամ փոքր ընակարան վարձել։ Տները չորս յարկանի են և պարունակում են ընդամենը 487 բնակարտն 1625 սենեակներունիք մետրի վարձը ըստ քառակուտի մետրի է հաստատուած. սենեակների մեծութիւնը հետեւան է, միջին թւով $4\frac{1}{2}$, մետր երկայնութիւն, $3\frac{1}{2}$ լայնութիւն և $3\frac{1}{2}$ մետր բարձրութիւն։ Միջին թւով սենեակները վարձում են 5 քր. ամսական մի հատ սենեակը։ Սենեակները որ մենք այցելեցինք բոլորն էլ լոյս են և վերին աստիճանի մաքուր. ամեն մի բնակարան իր կողքին ունի և մի փորբիկ մութ սենեակ, ուր գրւում են զանազան իրեղններ, արկղներ և այլն. և որի համար առանձին չի վճարւում նոյնպէս և նկուզի համար։ Ամեն տեղ անցկացրած չուր, որով ձրի կարելի է օգտել։ Մարդութիւնը խստօրէն պահանջութեան միայն մօտ այնպէս է տրւած, բացատրեց ինձ կառավարիչը, որ եթէ տանտիկինը կամ բնակարանի տէրը իրան յարդիչը պում է—պէտքէ որ մեծ ուշագրութիւն դարձնէ իր բնակարանի մարդութեան վրայ»։

—Բայց մաքրութեան թշնամին միայն տգիտութիւնը չէ, այլ և ազատ ժամանակի բացակայութիւնը, ասացի։
«Մի մոռանաք, տիկին, մննը ունինք յատուկ 23 հատ կին, որոնց վարձում ենք և որոնց գործն է ամեն օր աւելել, մաքրել բոլոր սենեակները, լւանալ տան պատշգամբները և կլօգետները, իսկ բնակարանի տանտիկնոց մնում է միայն ամենափոքր հսկողութիւն ունենալ, որ իր բնակարանը մարտնչութեան մնայ»։

—Ճատ են ներկայումս ֆամիլիստէրում ապրող բնակիչները։

«Ֆամիլիստէրում ապրող ընտանիքների թիւը 552 է, որը բաղկացած է 1952 հոգուց. կին, տղամարդ, երեխայ երուսակարանները և այլն։ Սենեակները լուսաւորում կու սեռից, այրի կանայք և այլն։ Սենեակները

ին գաղով, բայց մեր իդն է անցկացնել ամեն տեղ էլեկտրական լուսաւորութիւն, դա աւելի և մաքուր է և առողջարար։ Հանգուցեալ Գօտէնը այդ էլ աշքի առաջ ունէր, ինչպէս ունիր և ուրիշ առողջապահական պայմաններ, որ այժմ մեղ ացողեց իրականացնել։ Ահա օրինակ, մեր բաղնիսները, որոնք այնքան անհրաժեշտ են ամեն մի բանւորի համար։ Այս բանւորները, որոնք էմալի վրայ են բանում մեղ մօտ օրը մի բանի անդամ կարող են ծծմբային—լողարան (baïn sulfureux) լոկանել, բացի այդ էմալի վրայ բանովները իրաւունք ունին որքան կամենան կաթ խմել, որը նրանց ձրի է տրւում աշքի առաջ ունենալով նրանց հակառակողական դժւար աշխատանքը։

Մինչդեռ ոլ. Կոլէնը պատմում էր—մենք գուրս եկանք տան շորսորդ յարկի պատշաճմբի վրայ։ Այսաեղ մեր առաջ բացւում էր հիմնալի պատկեր ֆամիլիստէրի ամբողջ շրջակայքի վրայ։ Ուազ զետը դեռ հեռւից զանազան պտոյտներ անելուց յիտոյ գրկում է ֆամիլիստէրի մի մասը, ապա ֆամիլիստէրը երկու մասի բաժանելով նարկից հեռանաւմ է հանդարտ և վրստահ, որ բեզմնաւոր ափերի է պատահել։ Դիտի ափում մօտ տասը գիսեատին փուած են բանջարանոցները, ուր ցանում են վարունկ, սեխ, լորի և ամեն տեսակ բանջար, այն ամենը առանց որոնց ֆրանսիացին չի կարող ապրել։ Վերկից տեսնում է նոյնպէս մի պարտէզ, կամ ինչպէս Կոլէնը անւանեց «բանւորների գրոսարաննը»։ Ծառերը բաւականին խոշոր և կարգով գասաւորւած, ամբողջ ֆամիլիստէրը կանաչով էր շրջապատւած։ օդը հիմնալի էր, չնայելով, որ գործարանները և արհեստանոցները այնքան էլ հեռու չէին։

—Այսպիսի օգում երկի ձեզ մօտ շատ բիշ են հիւանդանում, հարցը Կոլէնին։ «Այս, շատ քիչ, բացի այդ մեղ մօտ ընդունւած է, որ հիւանդը տանը մնայ և այնտեղ բռնիշկը նրան այցել։ Քուր գիտէք, որ ոչ ոք չի սիրում զնալ հիւանդանոց և ընդհանուր գահինձներում պառկել, եթէ միայն ինքը ունի մաքուր և տաք բնակարան։ Գալով հիւանդ-

ների թւին ահա թէ, ինչ է ասում վիճակապրական տեղեկութիւնները, մեղ մօտ երեխանների ծնունդը համեմատարար մօտակայ Գիլ բաղարի հետ՝ մի տօկոսով աւելի է, իսկ երեխանների մահը մեղ մօտ 10 տօկոսով պակաս է, բան որքան մեռնում են Գիլում, ել չենք համեմատում մեծ քաղաքների հետ, չենք համեմատում մեր համաշխարհային բաղարի, Պարիզի հետ, որտեղ երեխանները ճանձի պէս են մեռնում։ Փամիլիստէրը մի առանձին հոգացողութիւն է, ցոյց տալիս երեխանների վերաբերմամբ։ Հինց այժմ մենք այսակից կ'գնանք մի այլ տեղ և գուք գաղափար կըկազմէք մեր «ծծմբայրանոցների» (ouarrierie) վրայ։

Բայց նախ ճանապարհին զնանք նայենք մեր հասարական կամ կօօպերատի խանութները։

Երբ մենք թողինք բանւորների չորս յտրկանի աները՝ և իջնում էինք, Կոլէնը շտապեց ինձ հաղորդել, որ սկզբում Գօտէնը ընդհանուր ճաշարաններ էր հաստատել կօօպերատի հիմքերի վրայ, բայց յիտոյ բանւորները ցանկութիւն են յայտնել ունենալ իրանց համար ամեն մէկը առանձին և անկախ խոհանոցներ, այդպէս էլ այժմ գոյութիւն անի։

Հասարակական կամ կօօպերատի խանութները, ուր մենք մտանք—մի երկար և բարձր շինուածք էր, որ իր մէջ պարունակում է զիսաւորապէս հաց, միս բարալ ապրանիներ—գազ զիսաւոր խանութն է։ Նրա կողքին հաստատւած են միս ապրանիների խանութները, մանութակուր և այլ ապրանիներ։

Այդ բոլոր ապրանինը, բացի մսից, որ ֆամիլիստէրը ինքը մատակարարում է՝ զնուում է գրսից զիսաւորապէս առաջին ձեռքերից—գործարաններից։ Ֆամիլիստէրի ընակինները այդ խանութներում կարող են ամեն բան զնել նոյն գնով, ինչ զիսաւոր ծախում են նոյն ապրանիները խոշոր բանակութեամբ զնով որ ծախում են նոյն ապրանիների խաղալիքներով վրեսած լւզից և վերջացած երեխանների խաղալիքներով վրեսով և . . . կորսէտներով, որ ի գէպս ասած ֆամիլիստէրի բանւոր կանայք ամենայն սիրով են գործածում։ Կօօպերա-

տիւ խանութները պատկանում են ֆամիլիստէրի ընկերութեան և հետեապէս նրա զործերից մէկն է, ուստի այդ խանութներից եկած վաստակը զնում է ֆամիլիստէրի օգտին և որը հետեապէս նորից վերագառնում է իր բնակիչներին—բանորներին, որովհետեւ ինչպէս արդէն առաջինք զործարանների վաստակը բաժանում է բանուորների մէջ:

Մինչդեռ դուրս էինք եկել կօպերատիւ խանութներից և մօտենում էինք մի այլ շնորի—ես լսեցի մի ինչ որ երեխանների ճշմոց, կէս ծիծաղ, կէս լաց, շոց և այլն....

«Ո՞հ, մի զարմանք, ծիծաղելով ասաց Կոլէնը, մենք մըտնում ենք հէնց իմ Զեղ ասած ծծմայրանոցը»:

Լայն կօրրիգօրներից անցնելով մենք հասանք մի մեծ զահիճ, որտեղ ամենաքիշը 40—50 երեխաններ կային, որոնց հասակը տարրեր էր, սկսած մէկ ամսականից մինչև երկու տարեկան։ Noutricerie-ին կամ ինչպէս ստիլւած եմ թարգմանել «ծծմայրանոցի» նպատակն է ծծկեր երեխաններին լաւ և առողջարար հսկողութեան ենթարկելու նպատակով ամբողջ օրը պահել մի հնդհանուր բնակարանում ամենաառողջապահական պայմաններում։ Այս բանուր կանայք, որոնք ցերեկը աշխատում են զործարաններում կամ կօպերատիւ խանութներում և կամ վերջապէս ուրիշ զրադմունք ունին՝ յանձնում են իւրեանց երեխաններին, ամեն մէկը առանձին առանձին փոքրիկ կառքերի վրայ՝ ծծմայրանոցին։ Եթէ մայրը ինքն է կաթ տալիս իր երեխային՝ գալիս է ամեն երեք կամ շորս ժամը մի անգամ և ստիլում է։ Մայրերը բոլորովին ապահոված են, որ ծծմայրանոցում հսկող կանայք երեխանների միւս պէտքերը կ'հօգան։ Եւ իսկապէս ծծմայրանոցի դայակները շատ մարուր և առողջապահական պայմաններում են պահում, աւելի շուտ շուտ են մաքրում կամ լւանում երեխանների անկողինը, սաւանը և լաթերը, որ հազիւ թէ բանուր մայրը ժամանակ ունենար ինքն անելու։ Եւ զեռ այն էլ պէտք է աչքի առաջ ունենալ, որ երիտասարդ կին-մայրերը

շատ անգամ անփորձ են և նրանց տանը երբ երեխան անձայր լալիս է խեղճ մայրը լացը գագարեցնելու նպատակով կամ անժամանակ և կամ շափից գուրս է ուտեցնում երեխային և կամ զանազան բաններ է զնում երեխայի բերնին, որով միայն հիւանդացնում է երեխայի ստամոքսը. մինչդեռ այդ երեխոյթը այդ տեղ երբէք տեղի չի ունենում։

Երբ մենք մտանք գահլիճը՝ երեխանների հախաճաշիկի ժամն էր, ծծմայրանոցի հսկող կանայք թւով շորս հատ, որոնք այն գործումն են քան տարուց աւելի և որոնք բաւականին կըրթւած են իրանց մասնագիտութեան համար, նրանց հետ զբարւած էին։ Այդ ժամին բոլոր մի տարուց աւելի երեխանները պէտք է իրանց ճաշը ուտէին, ով կաթ, ով բրինձով կաթ—հայած հասակին։ Գահլիճը լցւեց ուրախ ձայներով, ով կարող էր վազել—վազում էր, ով զեռ փոքր էր, իր կառքի միջից էր նայում վազողների վրայ, իսկոյն երեսում էր, որ բոլոր երեխանները լաւ տրամադրութեան տակ են։ Ըստհանուր գահլիճում երեխանները մնում են առաւտուր 7-ից մինչև երեկոյեան 8 ժամը, իսկ ամառները նրանք ամբողջ օրը մօտակայ պարտիզումն են բաց օդում և ծառերի տակ։ Երեկոյեան ժամը ութին ամենքի մայրը զալիս է երեխայական կառքերով և այնտեղ զնելով իրանց երեխաններին՝ վերցնում տանում են տուն, զիշերը երեխան մօր հսկողութեան տակ է. և ծծմայրանոցում զիշերը ոչ ոք չի մնում։ Երբ ինձ ասացին, որ կան երեխաններ, որոնց մայրը կամ մեռել է, և կամ հիւանդ է և շի կարող կերակրել երեխային իր կաթով—ես հետաքրքրւեցի մօտիկից ծանօթանալ, թէ ինչպէս են նրանց կերակրում։ Երեխան մնում է կոփի կաթով այնպէս, որ իր կերած կաթը լինի և խառնած չլինի. ուրիշ կոփի կաթի հետ կաթի մէջ մի քիչ եփած չուր և շաբար են աւելացնում, որ կաթի մէջ մի քիչ եփած չուր և շաբար են աւելացնում, որ մօտաւրապէս համապատասխանէ կոռչ կաթին, ծծակենը (biberon, րօյօք, սօսօք) վերին աստիճանի մաքուր էին. (biberon, րօյօք, սօսօք) պահանջում է, որ ամեն մի ծծակ (biberon) թէ լսատօրէն պահանջում է, որ ամեն մի ծծակ (biberon)

գործածելուց առաջ և թէ յիտոյ ամեն անդամ առաք ջրով լուստի: Այդ հանգամաները, այսինքն բիբերոնի մաքրութիւնը այնքան մեծ դեր է խաղում երեխաների համար, որ դրանց վաղահաս մահը ևս դրանով է պայմանաւորում շատ անդամ: Դժբախտաբար այդ բանը աչքի առաջ չեն ունենում ոչ ֆրանսիական միջին և ազքատ ընտանիքներում և ոչ էլ մեր հայ ընտանիքներում:

Ծծմայրանոցից դուրս ելլելով—մենք անցանք փոքրիկ բակով և մտանք «քօսքոնոտ» և «քամբինատ»-ը, այսինքն մանկական պարտէզները: Գրանցից առաջնում, «քօսքոնոտ»-ում խաղում են երկուսից մինչև չորս տարեկան երեխաներ, իսկ «քամբինատ»-ում՝ չորսից մինչև վեց տարեկան. վերջինումս սկսում են ամենատարրական հասկացողութիւնները բացատրել, այդտեղից արգին բանւորների երեխաները անցնում են նախակրթարական դասարանները և դպրոցը, որտեղ և սովորում են մինչև 14 տարեկան:

—Բայց երեխ դրանով չի վերջանում երեխաների կրթութիւնը, հարցրի Կոլէնին:

«Ո՛չ, այդ կրթութիւնը տալուց յետոյ Ֆամիլիութի վաշութիւնը ամենաընդունակներին պատրաստում է և կամ ուղարկում է Պարիզ իրանց ուսումը շարունակելու համար, բայց դա ի հարկէ պարտաւորեցուցիչ չէ: Բացի այդ, մեզ մօտ գոյութիւն ունին բազմաթիւ ազատ դասախոսութիւններ, որոնք թէեն հասակաւոր բանւորների համար են, բայց որտեղ կարող են յաճախել և մեր դպրոցաւարտ աշակերտները: Կըրթական գործը Փամիլիստէրում ձրի է, իսկ ուսուցիչները կամ ուսուցչունիները վարձատրութիւն ստանում են համեմատաբար աւելի, քան թէ գաւառական քաղաքներում:

14 տարեկան հասակից յետոյ—աշակերտը սկսում է արհեստներ սովորել հինգ մեր արհեստանոցներում, և սովորում է ի հարկէ այն արհեստները, որոնք անհրաժեշտ են Փամիլիստէրի համար. մեր գործը պահանջում է մինչև քառն տեսակ

մասնագիտներ: Աշակերտը փորձում է և ընտրում է ըստ իր հակումներին և կամքին: Աղջիկ և մանչ երեխաները միևնույն կրթութիւնն են ստանում և միմնայն դասարաններում: Բացառութիւնն են կազմում կարը և անայնագործութիւնը, որ միայն աղջիկներն են սովորում, և դրա փոխարէն մանշերին սովորեցնում են արդիւնագործական: մերանիքան. ներկայումս ըոլոր երեխաների թիւը համաւմ է 400-ի: Մեր կրթութեան գործի բիւգմէն անցնում է 36 հազար ֆրանքից, կամ թէ ամեն մի երեխան Փամիլիստէրին նստում է 90 ֆր.:

«2էր կարող ասել, ամիկին, թէ Ռուսաստանը քանի քրանք է ծախսում տարեկան կրթութեան համար միջին թւով ամեն մի երեխայի վրայ», հարցրեց ինձ Կոլէնը:

—Խոստովանում եմ, տասցի, որ չ'գիտեմ:

«Ճատ լաւ ես 2եղ կ'օգնեմ: Ահա պատի վրայ 1897 թ. վիճակագրական տեղեկութիւնները. Ռուսաստանը ծախսում է ամեն մի երեխայի վրայ 10 ֆրանք. Փրանսիան 39 ֆր. Շվեյցարիան 40 ֆր. Անգլիան 42 ֆր. Ամերիկայի Միացեալ Նահանգները 63 ֆր. Նոր-Զելանդիան 85 ֆր. իսկ մենք 90 ֆր.»:

—Բայց ինչո՞ւ էր կախել այդ ցուցակը դահլիճում, հարցրի հեզորէն, չեմ կարծում, որ պարծանքի համար լինի, թէեն խոստովանում եմ, որ Դուք իրաւոնք ունիք պարծենալու...

«Մենք ուզում ենք ցոյց տալ այն բոլորին, որոնք կարծում են, թէ սօցիալական հարցը միայն փորի հարց է—ուզում ենք նրանց ցոյց տալ, տաքացած ասաց Կոլէնը, որ մեր սօցիալական գործունէութիւնը զրադաւում է նոյն շափով բարոյական, որ չափով որ և ստամպուի հարցով»:

Մենք այցելեցինք դասարանները: Նախակրթական դասարաններում գործ էին ածւում Փրէօրէլի մեթօդը շատ տեղերում փոփոխած. այդ փոփոխումները հիմնաւծ են մի բանի տարւայ փորձերի վրայ:

Ես այն տպաւորութիւնը ստացայ, որ Փամիլիստէրի մանկավարժական խումբը ոչ մի ջանք չի խնայում, որպէսզի ամենաօգտակար մեթօդները յարմարեցրած միջավայրին, գործածւին իրանց ուսումնարանում։

Գալով աւանդուղ առարկաներին՝ յիշեմ այստեղ նախակրթարանում անցկացրած առարկաները. սիստէմը շատ ինքնուրոյն է և կարծեմ ոչ մի տեղ Փրանսիայում չենք կարող պատահել. օրինակ, Հոկտեմբեր ամսի համար ցուցակի վրայ նշանակւած են հետեւել առարկաներ։

«Մտաւոր ֆակուլտէտ—օրֆօդրաֆիա։

«Բարոյագիտական ֆակուլտէտ—կարդապահութիւն, մարդութիւն, ճշտութիւն։

Նոյեմբեր ամսի համար։

«Մտաւոր ֆակուլտէտ—թուարանութիւն։

«Բար. ֆակ.—վեհանձնութիւն, տնտեսութիւն։

Դեկտեմբեր ամսի համար։

«Մտաւոր ֆակուլտէտ—պատմութիւն։

«Բար. ֆակ.—ոէր դէպի աշխատանք, տոկունութիւն, համբերութիւն և այն, և այն։

Բացի այդ՝ սովորեցնում են երաժշտութիւն, երգեցողութիւն, նկարչութիւն և մարմնամարզութիւն։

Դաստիարակութիւն անցնելուց յետոյ մենք հասանք մինչև Փամիլիստէրի գրադարանը, որը երեք սենեակից է բաղկացած, երկուսի մէջ գրքեր են, երրորդում կարելի է կարդալ։ Քրեքի թիւը մօտ հինգ հազար է։ Քրագարանը Փամիլիստէրի գլխաւոր խորհրդի հսկողութեան տակ է, որի համար նշանակած են երկու գրադարանակետներ։ Նա բաց է առաւոտը 7-ից մինչև երեկոյեան 10-ը և կիրակին 6-ից մինչև 9-ը։ —Ի՞նչ գրքերից է կազմւած 2եր գրադարանը, հարցրի Կոլէնին։

«Միայն օգտաւէտ գրքերից, առաց և ծիծաղեց պ. Կոլէնը։ Յամենայն դէպս առայժմ մինք ունինք մօտ երկու հա-

զար գեղարվեստական գրականութեան վերաբերեալ գրքեր, մօտ հինգ հարիւր ընական գիտութեան, 250 փիլիսոփայութեան, յետոյ պատմութեան, ճանապարհորդութեան, ըննադապատմութեան, կրօնների պատմութեան և այլն։ 1000-ից աւելի հանրապետական և սօցիալիստական ուղղութեամբ գրքեր։ Ստանում ենք նոյնպէս բան հատ լրագիր և մօտաւորապէս նոյնքան էլ ամսագիրներ։»

Հետարքբական էր անշուշտ իմանալ թէ նրան և ինչ է կարդացուամ գլխաւորապէս. և պատի վրայ կախւած քարտէզից երեսում էր, որ անցեալ տարի կարդացւել է ամենաշատը վեպեր, յետոյ թատերական գրականութիւնը, այնուհետեւ գալիս է ճանապարհորդութիւնը, պատմութիւնը, բնական պատմութիւնը, և այլն։ Այդ ցուցակից երեաց նոյնպէս, որ կարդացուների մեծամասնութիւնը 15-30 տարեկան հասակի են պատկանում։

«Ըւելացրէք գրտ վրայ, որ համարեա ամեն ընտանիք ստանում է իր լրագիրը և լրագիրների մեծամասնութիւնը Պարիզից են։ Սեփական լրագիր ստանալը և ուրիշ ստացածից չօգտուիլը մեր բնակիչների համար նոյնքան բնական է, ծից չօգտուիլը մեր բնակիչների համար նոյնպէս բնական է, ուրիշ սեփական հացը և ուրիշ անհրաժեշտ բաների ունենալը։»

—Երկի Փամիլիստէրի վարչութիւնը ոչ մի կերպով ցոյց չէ տալիս, կամ չի ազգում, որ բնակիչները կարգան կամ ստանան այս ինչ ուղղութեան լրագիրը, գիմեցի Կոլէնին։

«Նախ և առաջ մենք ոչ մի իրաւոնիք շոնինը խառնւելու այս տեսակ անձնական և ներքին հարցերի մէջ, մեզ մօտ մենք արորուս իրսի քաղաքացիներ հաւասար ենք, և եթէ մէկը համալրում է քաղաքական այս ինչ կուսակցութեան, միւսը այն չ'վայրկում է քաղաքական այս ինչ կուսակցութեան, դա կարող է գրել, կարգալ և յօդւածինչ, դա իր բանն է։ Նա կարող է գրել, կարգալ և յօդւածինչ ուղարկել, միայն թէ Փամիլիստէրի շահերը գրանից չ'վնասուին։

—Իսկ եթէ լնասուին, մէջ բերի։

«Այն ժամանակ ֆամիլիստէրի ընդհանուր ժողովը կ'վըճռէ թէ ինչ պէտք է անել, ամենաշատը նա կարող է խնդրել այդ վնասող անդամին՝ հեռանալ ֆամիլիստէրից։»

Նկատեցէր, որ կրօնը և դաւանահների վերաբերմամբ էլ ով ինչի և ում կամենայ կարող է հաւատալ և պաշտել դա իր խոհի կամ հասկացողութեան գործն է։ Փամիլիստէրը իր կողմից ոչ մի կրօն պաշտօնապէս չի հրատարակած։ Կամ թէ, եթէ ուզում էք, մեր կրօնը մեր կամոնապրութեան 108-րդ պրակի մէջ է գրած, որը և ասում է, «Ճշմարիտ կրօնի ոկզուներն է՝ այն ամեն բանի սէրը, ինչ ծառայում է ընդհանուր կեանը յառաջադիմութեան ու լուսաւորութեան։ և միայն փոխադարձ գոհացման և ընդհանուր բարդի գործին աշխատելով մարդիկ բարձրանում են մինչև վերին բարոյականութիւնը»։ Այստեղից արդէն երեսում է որ ուրիշի համոզմունքի յարգելը եթէ ազնիւ հակումներից է բիում այդ համոզմունքը—մեր ամենըիս պարտականութիւնն է»։

Եետոյ, շտապով ժամացոյցին նայելով. «արդէն կէտ օր է, առաց Կոլինը և յուսով եմ, որ գուք չէք մերժիլ մեզ հետ ձաշելու իմ բարեկամ ընտանիքի մօտ. այդ ընտանիքը այստեղ ապրում է ահա մօտ երեսուն տարի է, և նա արհեստանոցումն է աշխատում և միևնուն ժամանակ մեր խորհրդի անդամներից մէկն է»։

Ճաշը թէի հասարակ էր պատրաստած, բայց շատ համեղ և կարելի է հաստատ ասել, շատ ամելի առողջաբար, բան թէ Պարիզի լաւ ճաշարաններում կարելի է պատահել։ Ո՞րքան ուսանողներ, որքան ուսուցիչներ մեզ մօտ ամենայն յօժարութեամբ կ'կամենային փոխել իրենց ճաշը—Փամիլիստէրի գործարանական բանւորի ճաշը։

Ալրօպովի չափազանց գործածութիւնը խոտիւ արգելած է Փամիլիստէրում։ Եւ բանի որ ֆամիլիստէրցիների կերածը առաջ է և մննդարար—նրանց ստամորսը ալրօպովի մեծ պահաջ էլ չի զգում։

Ճաշից յետոյ մենք գնացինք թատրոնը տեսնելու։ Ինքնուրոյնութիւննը այդ տեղ էլ աշբի էր ընկնում։ Թատրոնը մի մեծ բակ է, վերից ապակիով ծածկած, իսկ երկու կողմից պատերի փոխարէն՝ երկու չորս յարկանի տներ անթիւ պատշգամբներով—դրանք Փամիլիստէրի մեր տեսած ընակարաններն են։ Ներկայացումների ժամանակ երկու կողմից ընակիշները գուրա են գալիս իրանց սեփական ընակարանի պատշգամբի վրայ և այն տեղից, նոյնքան հանգիստ, ինչպէս և թատրոնի լօժաներում էարող են ամեն ինչ տեսնել։ Բնմը ի հարկ է յատկապէս ներկայացումների և տօների համար է պատրաստած։ Բնակիչների մի մասը, ինչպէս և քաղաքից եկող հիւրերը կարող են տեղաւորել պարտերում։

Այդ թատրոնումն է տեղի ունենալով դասախոսութիւններ, նեազանդէմներ, ներկայացումներ և այլն։ Մշտական գերասանական խումբ սիրողների թէի կայ, բայց ֆամիլիստէրցիք գերադասում են դրսից եկած ժամանակ առ ժամանակ խըմքերին։

Տարին երկու անգամ մեծ տօնախմբութիւններ է լինում Փամիլիստէրում։ Մայիսի առաջի կիւրտկին, որ կոչւում է «Աշխատանքի տօն», և Սեպտեմբերի առաջի կիւրտկին՝ «Մանկական տօն»։ Երկու տօնն էլ շաբունակուում են երկ-երկու օր, կիւրտկի և երկուշաբթի։ Այդ օրերը ամբողջ Փամիլիստէրը տօնում է իր բարոյական, մտաւոր և փիզիքական աշխատանքը։ բոլորը մասնակցում են այդ տօններին։ երեկոյեան տրուում են պարանանդէմներ և նւերներ երեխաններին։ կազմւած է երեխանների համերգ և տեղական երաժշտական խումբ բանւորներից և նրանց երեխաններից։

Այդ օրն է նոյնպէս նշանակուած պարգևատրութեան օր։ եթէ տարւայ ընթացքում բանւորը արել է մի որեւէ օգտակար նորամուծութիւն, կամ զիւտ, որից արդիւնագործութիւնը կարող է օգտակել—նրանց տրուում է 1000-ից մինչև 5000 ֆր. փող իբրև նւեր։

Փամիլիստէրի բնակիչները իրանց համար ունեն կազմած մամնաւոր խմբեր «Երաժիշտների», «մարմնամարզութեան խումբ», «ջրհանգիբների խումբ», այս վերջինս «հանարակական դորձունեւութիւն է» համարում, նոյնպէս «հրացանաձիգներ» և ուրիշ խմբեր:

Ժամը վեցին մօտ էր և ես իմ անկեղծ չերհակալութիւնը յայտնելով Կոլէնին, որ ի գեպս ասեմ, իր եղբայրական ողջոյնը ուղարկեց «հեռու արևելքցի եղբայրներին և քոյրերին»—շտապեցի դէպի Գիզի կայրանը:

Ես թողի Փամիլիստէրը և վերադարձայ Պարիզ։ Փամիլիստէրում գոյութիւն ունեցող պայմանների վրայ չեւկարելի ի հարկէ նայել, իրեւ իդէալի վրայ, նա ունի շատ պակասութիւններ, բայց մի բան ակների է, որ ժամանակակից ֆրանսիայում կարող են գոյութիւն ունենալ այնպիսի դորձարաններ, որտեղ զօնէ երկու հազար անհատ, երկու սեռից, կարող են հանգիստ և ապահով աշխատել և ապրել։

Խօսք չկայ, որ այդ բոլորը Գօտէնի ֆիլանտրոպիային է պատկանում. խօսք չ'կայ, որ գործարանների նիւթական աշողութիւնը այն բանի չնորհով է գլխաւորապէս, որ Գօտէնը մի քանի յաջող ու ձեռնոտու գիւտեր էր արել մեքանիքայի մէջ որը և մեծ վաստակով շահագոծում են—խօսք չ'կայ տառեմ ենք, որ այդ բոլորը քիչ թէ շատ պատահական դէպքերից է յառաջացել, բայց և այնպէս այդ Փամիլիստէրը իր շատ կողմերով կարող է օրինակ լինել ուրիշ դորձարանների համար։

Երեկոյեան ժամը իննի մօտ—եղկաթուզու գնացքը մօտենում էր Պարիզին։ Պուրսը մութ էր և խոնաւ, սկսել էր մանր տեղացող անձրելը, նոր դուրս էի եկել փողոց, երբ կայրանի գրան մօտ պատահեցի մի նիհար կնոջ երկու երեխայով, մէկը հազիւ մի տարեկան—զրկում քնած էր, միւսը 3-4 տարեկան կուռ եկած մօրը ոտքին, կէս նատած կէս պառկած։

«Միայն մի սու, տիկին, ողորմութիւն արէք»:

«Երկու ամիս սրանից առաջ իմ ամուսինը, նա քարտաշէր, մեռաւ, ես մնացի անգործ, անապահով, երեխաներս չեն կերել այսօր……

Գա ի՞նչ էր... գլուխ պայոյա էր զալիս, կարծես փայտի մի հարւած էր սոացել։ Դա իրականութիւն էր...

Բայց չէ որ Փամիլիստէրի կեանըն էլ իրականութիւն էր, թէ գա ուտօպիայ էր այդ խեղճ կնոջ համար, որի երկու երեխաները մեռնում էին քաղցից։

Փամիլիստէրի ապահով և առողջարար կեանքը այդ կնոջ համար ուտօպիայ էր։

Այս, կայ կեանք, կան պայմաններ—որ մէկի համար իրականութիւն է, միւսի համար ուտօպիայ։

Տ. Թագուհի Բերքեբեան.

Պարիզ.

1901,



ՀԱՐԵՆԻ ՎՏԱԿ

Ուր են վտակ, քո նազելի այցելուք... հուլ թողի
Ուկէգանգուր կարմրաթուշ աղջկունք:

Որսնը երբեմն գայլին շուրջդ ճռողել
Խինդ, երդ ու պար արձականք տար խոխոչիդ
Սառն ջրովդ ախորժէին սղողել.
Գիրգ վարդ դէմքեր ոստոստելով զերթ ծղիտ:

Ուր են վտակ, քո նազելի այցելուք,
Ուկէ-գանգուր կարմրաթուշ աղջկունք:

Շիմն այլիս, բիրտ ու վայրի գագաններ
Յափշտակած տարին իրենց որջերը
Յաւէտ կորան սիրոյ մարուր ծաղիկներ
Յաւէտ վակւեց անոնց գոհար աշերը:

Ուր են վտակ, քո նազելի այցելուք,
Ուկէ-գանգուր, կարմրաթուշ աղջկունք:

Թաւոտներու ստուերին մէջ պահւըտած
Մելամաղձոտ, հեղ խոխոջով տխրագին
Արծաթափայլ ջինջ կայլակներ արտասւաց
Գողցես թափեն քո ակունքին դառնագին....

Ողբա վտակ, քո մրմռնջը թող լինի
Հեգ գոհերուն դամբանական մեղեդի...

Զ. Աղեանաք

Ա ջն սմանի տրավուդը և առաջարած ոչ զեխուր նման ա-
ման համբ զառ պատ 0.01 ու 100 դէնուն նման
ու մարտավայրական մաս նշրանց և նույն պա ունի
առել և առանու ուժաւուց ունակ և առար ուսումնա-

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒ- ԹԻՒՆԵՐԻՑ

1900 թի, Մելամբեր ամսի կանուխ առաւօտն էր
այդ, երբ մենք մեր ուղեկիցներով Մինինի «Գոհինվալի»
հիւրանոցից գուրս եկանք և մեր քայլերն ուղղեցինք գէպի
Օրէրամմերգառ գիւղը տանող կայտանը: Այնտեղ մեզ յայտ-
նեցին, որ պէտք է շտավել տոմսակ առնելու. բայց այդ մեզ
անհնարին եղաւ, որովհետեւ վնացքի վերջին սուլոցը լուեց
արդէն և մենք չնշանագու, հազիւ ներս ընկանք առանց տամ-
սակի երկաթուղու երկրորդ կարգը:

Լոյսը գեռ նոր-նոր էր սկսում ծագել և մեր վնացքն այն-
քան զանգաղ ու օլորւելով էր առաջ գնում, (ճանապարհը դեռ
նոր էր շինւած) որ ես յիշեցի իմ հայրենի Ծիրակի դանդաղա-
շարժ սայլերը, որոնք ճաճռալով ու ճոճուելով շարքով իրար
ետից բերում էին ուխտաւորներին Մողնու ուխտին սուրբ
Գէորգ և Էջմիածին: Այն, մեր ճանապարհորդութիւնն էլ իսկ
ուխտագնացութիւն լինէր կարծես. բայց ոչ գէպի մեր Մայր ա-
թոռը, ո. Էջմիածին և ոչ մեր չայտատանի Սղամայ տարուայ
սայլերովն ու փափախաւոր սայլապանների հոռովելներովը,
այլ դէպի մի գիւղ, որը գտնուում է քաղաքակրթւած Եւրո-
պայում, այն Եւրոպայում, ուր ամեն ինչ տարրեր է մերինից
և ուր ամեն ինչ կարծես շտիած ու ձեած է....

Այդ ճանապարհորդութեան միջոցին մի տարօրինակ ու
խորհրդաւոր զգացմունք էր պաշտել ինձ մի ինչ որ բարձր

ու վսեմ պատկեր էր ներկայանում երեակայութեանս մէջ և ինձ թւում էր թէ՝ և 1900 տարի առաջ ձնած մարդ լինէի, որը զնում է Երուսաղէմ այն ժամանակամիջոցին, երբ Քրիստոս գալու է այնտեղ չարչարւելու, խաշւելու և թագւելու:

Ահա երկաթուղին իւր վերջին, ականջ խլացնող սուր ճիշն արձակեց և մենք արդէն Օքէրամմերգառ գիւղն էինք հասնում. Գնացըրից իջնելուն պէս, բաւական մեծ բազմութեան հետ խառնելով, շտապեցինք տոմսակ ճարել, որովհետեւ մեզ վախեցրել էին Միւնխէնում, թէ դժւար կլինի թատրոնի տոմսակ գտնելը, մանաւանդ. որ այդ «Passionsspiel» պատսիօնուշպել-ը (չարչարանաց խաղ) յայտարարել էին վերջացած, բայց Բաւարիայի թագաւոր Լիւգովիկոս Ռ-ի յիշատակի համար, պէտք է լինէր մի արտակարդ ներկայացում, որովհետեւ թատրոնի մշտական հովանաւորն և բարերարն է եղել նա. Վերջապէս գտանք տոմսակներ և շտապեցինք պատահած բէստօրանում թեթին նախաճաշ անելու, որ մտնենք թատրոն։

Միւնխէնից երկաթուղով չորս ժամայ ճանապարհ է Օքէրամմերգառ գիւղը, որը ցրջապատած է լեռներով ու հովիտներով և այդ կողմը առհասարակ համարւում է Բաւարական. Տիրօլը։

Տեղական աւանդութիւնն այս է՝ որ երբ 1633 թ. Բաւարիայում ժանտախտ է երեացել և Օքէրամմերգառ գիւղից անինայ գոհներ է տարել, գիւղական համայնքն այդ պատուհասի ժամանակ միայն Աստծուն ապաւինած, ուխտում է ներկայացնել Քրիստոսի չարչարանքը և այդ ուխտը դրած ըովէից ժանտախտն յանկարծ անհետանում է բոլորավին։

Առաջին ներկայացումը լինում է 1634 թ. և ապա 1680 թից որոշում է տալ զէրօյով (0) վերջացող տարեթւերին

ու այդ կերպ չարունակում է մինչև 1770 թ. երբ յանկարծ տէրութիւնն արգելը է դնում այդ ներկայացումների վրայ։ Օքէրամմերգառնեցիք լինդիրը են տալիս առարկելով իրանց ուխտի մասին, բայց տէրութիւնը պատասխանում է, որ այդ ուխտը կարելի է ուրիշ կերպ կատարել։ Իսկ գիւղացիք դադար չեն մնում և վերջը Բաւարիայի Մաքս Եօդէֆ թագաւոր իւր որդու խնդիրով թոյլ է տալիս այդ ներկայացումները։ Եւ ահա այդ իսկ ժամանակից Օքէրամմերգառ գիւղում կանոնաւոր կերպով տասը տարին մէկ անգամ ներկայացնում են Քրիստոսի չարչարանքը, զեռ սկիզբները դարձու գալար և ապա հետզհետէ բազարակրթութեան շնորհիւ աւելի ու աւելի կանոնաւորելով և բարեփոխելով. այժմ այդ ներկայացումները կանգնած են իրանց բարձրութեան վրայ և խկապէս այդ գիւղը դարձած է մի ուխտատեղի և տասը տարին մէկ անգամ աշխարհիս ամեն ծայրից, մանաւանդ Անգլիայից ու Ամերիկայից մարդիկ հարիւրներով և հազարներով շտապում են գալ այդ վայրը, ականատէս լինելու այդ տարօրինակ ու պանչելի «պատսիօնուշպիլին» որը չունի իւր նմանը ամբողջ տիեզերքիս երեսին։

Միւս ներկայացումը պէտք է լինի 1910 թ. այդպէս ուրեմն, Օքէրամմերգառի գիւղացիք տասը տարի պատրաստում են և մէկ ամբողջ ամառ, երեք-չորս ամիս խաղում են ՚ի հարկէ ընդհատումներով։ Իսկ եթէ ժողովուրդը շատ է վնասում և թատրոնի տեղերը չեն բաւականում, այն ժամանակ մնացածների համար խաղը կրկնում է և հետեւալ օրը։

1900 թ. ներկայացումը սկսել է Մայիսի 24-ից և վերջացել է Սեպտեմբերի 30-ին. իսկ գլխաւոր փորձը եղել է նոյն թւի Մայիսի 20-ին։

Գիւղի բոլոր քնակիչները պարտաւոր են մասնակցել այդ ներկայացմանը, եթէ թատրոնի վարչութիւնն ընտրում է նույանից մէկն ու մէկին որևէ գերի համար։ Գերելի բաժանման համար կան սահմանած կանոններ, որոնք են՝

1. Խաղին մասնակցող իւրաքանչյուր անձն, պէտք է ծնուած լինի Օբէրամմերգառը զիւղում:
2. Խաթրի, կամ պատւապահութեան պայմաններն ընդութեան ժամանակ նկատի չեն առնեում:
3. Ամուսնացած կանայք դերեր չպիտի ունենան, այլ միայն երդեցիկ խմբի մեջ կարող են մասնակցել:
4. Ընդութիւնը կատարում է 24 հոգուց բաղկացած յանձնաժողովը, որն ընտրում է Օբէրամմերգառը բոլոր շափաճառ արտկան սեռի բնակիչների ձայնով:
5. Յանձնաժողովը հաւաքւում է հասարակական խորհրդարանում (Ratkaus) և իւրաքանչյուր դերի համար տուանձն տալիս է իւր ձայնը և այն էլ զաղանի կերպով, փակ ծրարների միջոցով:
6. Յանձնաժողովի անդամներից ով որ մի ովհէ դերի համար ի նկատի է առնեում, նա ինքը նոյն դերի համար քու ժամանակ չի մասնակցում:

1900 թ. Պատսիօնսպիլի համար յանձնաժողովն ընտրել է 1899 թ. զարնանը, նոյն թւի Դեկտեմբերի 21-ին եղել է զիխաւոր դերակատարների ընտրութիւնը:

Դերակատարները, որոնք թւով 56 հոգի են, բացի երգեցիկ խմբից ու ամբոխից, խաղում են առանց վարձատրութեան. միայն թատրոնի եկամուտը բաժանելու ժամանակ, ամէն մէկին իւր դերին համեմատ վճարում են միանեազ մի գումար: Իսկ եկամուտի նշանաւոր մասը զործ է դրվում հասարակական պէտքերի վրայ, ինչպէս օրինակ՝ աղքատանոցի ուսումնարանի, զիւղի ջրաբաշխութեան, հրդեհի ապահովութեան և այլն: Մինոյն արդինքից թատրոնական յանձնաժողով մարմինը զործագրում է թատրոնի չենքը նորոգելու, զգեստների և զեկորացիաների վերայ, իսկ այս վերջին ժամանակ էլ չինել է երկաթուղու դժի մի մասը, միշե Օբէրամմերգառը զիւղը:

1890 թւին, պատսիօնսպիլից ստացւած եկամուտը

եղել է 700,000 մարկ, մօտաւորապէս 350,000 ռուբլի, որից 240,000 մ. (120,000 ռ.) բաժանուած է իրեկ պարզե խաղին մասնակցող 700 անձի:

Խնչ վերաբերում է ներկայացմանը, այդ թէ և ինում է Աւետարանի բովանդակութեան համեմատ, բայց մի առանձին պաշտօնական բնագրով, որը կազմել է Ալօփ Պայզնբէրդը բահանսան: Պարզէնը վանտկան կրթութիւն ունեցող մի յանանի բարովից է, ծհ. 1799 թ. Մայիսի 30-ին վախճ. 1883 թ. Ապրիլի 20-ին: Նա Օբէրամմերգառը զիւղի ամենասիրելի ու ամենայաբգւած հովին է եղել և շատ մեծ նշանակութիւն է ունեցել թէ առհասարակ զիւղացոց կրթութեան և թէ մանաւանդ պասսիօնսպիլի կատարելագործութեան համար:

Բնագիրն ունի երեք բաժանմանը, որոնցից իւրաքանչյուրը բաղկացած է մի քանի տեսարաններից: Խմբի երգերը և «Prologus» Պրօլօգուս-ի (առաջնորդ) խօսքերը տպաշտափութեամբ են, իսկ դերերը կազմւած են արձակ ոճով: Մարդ որ նոր մտնում է զիւղը, ամենից առաջ աշքի է ընկնում զիւղացոց թողած երկար մազերը. տպամարգիկ համարեա բոլորն էլ երկար մազեր են պահում, որ պէտք է զալիս դեր վերջնելու ժամանակ: Նոքա ամենքն էլ խազում են առանց զրիմմի և այդ կարծես աւելի է մօտեցնում իրականութեանը: Գիւղը վերջին տարիներս պասսիօնսպիլի նորհիւ աւելի է մեծացել, աւելանում են հետզհետէ հին գերմանական ձեի փոքրիկ պատուհաններով հիւրանոցներ, բնատօրաններ: Այժմ զիւղի հիւրանոցներում և մասնաւոր տներում ճանապարհորդ հիւրերի համար կայ 1900 սենեակ, 3500 մասպարհորդ հիւրերի համար կայ 1890 սենեակ, պիտոքներով: Թատրոնական յանձնաժողովն ունի իւր յատուկ զրասենեակը, (Nohtnugsbüreau) որին ամեն մի այդ տեղին անձանօթ ճամբորդ կարող է զիմել, զրասենեակը պարտաւորում է հոգալ նորեկ հիւրերի համար թէ բնակարանի, թէ վազօրօք տոմսակ

ունենալու մասին և այլն: Բաւական թւով նոր խանութներ էլ են բոցւել, որտեղ գերակատարների պատկերներով հազար ու մէկ տեսակ առարկաներ են պատրաստուում ու ծախուում և ամեն մէկ ճանապարհորդ չի զբանում իւր քսակը բանալ ու որեւէ բան առնել յիշսպութնան համար: Եւ ինչպէս գիտեն Եւրոպացիք օգտել ամեն մէկ ճանպամանքից և իրանց համար ազնիւ կերպով ապրուստի միջոց ստեղծել....

Վերջին տարիներս գիւղը առողջապահական տեսակէ տիցն էլ շատ առաջ է գնացել. ամեն փողոցում ջրանցք կայ շինուած կեղտոտ ջրի համար և ամեն տան մէջ առողջաբար ու մաքուր ջուր է վագում ծորակներով: Գիւղի տները դրսից մեծ մասամբ նկարներով և քանդակներով են զարդարւած. շատը սուրբերի պատկերներ են ներկերով նկարւած:

Այդտեղի գիւղացիք քչերն են իրենց գիւղական աշխատանքով պարագում, այլ մեծ մասամբ զբագւած են զեղարւեստով. զորօնակ՝ յովհաննէս Աւետարանչի գեր խաղացող երիտասարդը քանդակործ է, յուդայի գեր ունեցողը նկարիչ է. մէկ ուրիշը երաժիշտ է. շատ շատերը, նոյն իսկ կանայք և օրիտրիներ, փայտի և փղոսկրի վրայ փորագրում և պատրաստում են զանազան իրեր. իսկ այժմեան Քրիստոսի գեր կատարողը պայտագործի որդի է և ինքը վառարանացրծ է: Ի գէպ ասեմ, թէ գերմանական չեմ յիշում որ թերթում կարգացի, որ Փափը կամեցել է այս անդամայ, այսինքն 1900 թ. Քրիստոսի գեր խաղացող Անտօն Լանգին և յովհաննէս Աւետարանչին ներկայացնող Պէտէր Ռէնդլին տեսնել իւր մօտ, Հռոմում: Եւ ահա, երբ Քրիստոսի և յովհաննէս Աւետարանչի զգեստով երկու հոգի մօտենում են ճանպարտ քայլերով գէպի վատիկանի գուռը, պահապանները զարմանքից և յուզմունքից ուշաթափ են լինում, ընդունելով նոց իսկական Քրիստոսի և նորա աշակերտի տեղ, որոնք երկնքից իջել և զալիս են Փափին այցելութեան. վերջապէս այդ երկուսին դիմաւորելու են զալիս

երկու կարգինայներ և առօք փառօք տանում են նոցա Փափի մօտ, որին տեսնելիս ծունկ են չորում զիւղացի դերասանները. բայց այդ ժամանակ Փափն ինքն առաջ է զալիս և Անտօն Լանգին վեր է բարձրացնում, նորա վզիցը շքանշան կախելով ու ասելով «այդպիսի բարձր ու սուրբ դեր կատարող մարդուն արժան չէ չորեկու իմ առաջ»:

Օրէրամմերգառուի թատրոնը մի փայտաշէն ծածկով տեղ է, որտեղ տեղաւորւում է 4200 մարդ: Տոմսակներն այնքան ել արժան չեն և քանի բեմից հեռու է, այնքան աւելի թանգ է. բոլոր տեղերը միանման նոտարաններ են թւահամարներով և ամեն կարգը հետզհետէ բարձրանում է. միայն բեմի դիմացը կայ մի օթեակ արբայական տան համար: Ճատ տարիներ առաջ հանդիսականները բացօգեայ էին նստում. իսկ վերջին տամսամեակի մէջ գիւղի համայնքը իւր ծախսով շինել է թատրոնի գահինը, ծախսելով 2000 մարկ: Ներկայացնումը կատարուում է այնպիսի բեմի վրայ, որի մեծ մասը բացօգեայ է. միայն երեք ծածկւած շինութիւն կայ, մէկը ճիշտ մէջ տեղը, որը և բեմի կետրոնն է կաղմում: Գա Աթէնքի, Ակրօպոլսի, կամ հին յունական տաճարի ձեն ունի, ճակատը ֆրէսկօններով զարդարւած: Այդ կետրոնական մասը ծածկւում է վարագոյրով, որի մէջտեղը Մովսէս մարգարէի պատկերն է, Միքէ-Անժէլոֆ նկարի նմանութեամբ, իսկ աջ կողմը Եսայի և ձախը Երեմիա մարգարէների մեծադիր պատկերներն են. նոյն այդ բեմում լինում են կենդանի պատկերներ հին կտակարանից և այդ տեղ էլ կատարուում են զիխաւոր զործողութիւնները, որոնք են՝ Ոտնաւան, Սուրբ Ծիրիքը, քահանայապետների ժողովը, Գեթսեմանում վերջին աղօթքը, Խաչելութիւնը և այլն: Այդ բեմի աջ ու ձախ կողմը կան զարձեալ երկու շնչեր. աջը Անհա քահանայապետի պալատն է, իսկ ձախը Պիղատոսի: Այդ կողքի շինութիւնները միացած են կետրոնական բեմի հետ կամարով, որոնց տակից երկում են երուսալէմի երկու փողոցները և այդ երեք շինութեան.

թիւնների առաջ բացւում է մի մեծ ու լայն հրապարակ, կամ այսպէս կոչւած proscenium «պրօսցէնիում» որի երդ կարստիւնը 42 մուտք է, իսկ լայնութիւնը՝ 26 մ. այդ հրապարակի վրայ 300-ից մինչև 400 մարդ աղատ տեղաւորւմ, շարժում է և յետոյ էլ այդ ամբոխն արագ անհետանում է անցնելով կամ բեմի դռնով, կամ կամարների տակով գէպի փողոցները:

Ներկայացումը բազկացած է երեք գլխաւոր բաժանմունքից, առաջին՝ այսպէս ասած Schutz geister «պահապան ոգիներ»ի խմբից, որը երաժշտութեան հետ միասին, հոգեոր երգեր է երգում: Ամեն մէկ գրամատիքական գործովութիւնից յետոյ և բոլոր կենդանի պատկերների բացման ժամանակ, այդ խումբը գուրս է գալիս պրօսցէնիում և երեսը գէպի հանդիսականները, կիսաշրջան կազմած, սկսում է երգել առանձին խմբապետի օգնութեամբ: Իսկ առաջնօրվը Prologus Պրօլոգուսը, որը կանգնում է խմբի մէջտեղը և հաղած է սպիտակ չորեք սովէ բանւածքով, մեծ գաւազանը ձեռքին, մի պատկառելի ու յաղթանգամ ծերունի է բոլորովին սպիտակ մազերով և սպիտակ վիտաւոր մօրուրով: Իրա անունն ու ազգանունն է Եօզէֆ Մայէր, որը մի ժամանակ երեք անգամ կատարել է Քրիստոսի գերը, 1870, 1880 և 1890 թւականներին: Եյլ խումբը բացի Պրօլոգուսից բազկացած է 35 հոգուց, որից 20-ը կանայք, իսկ 15-ը տղամարդ են: (1890 թ, երգեցիկ խումբը բազկացած է եղել 24 հոգուց): Զատ աարիներ առաջ այդ խումբը բեմ էր գուրս գալիս ֆանտաստիքական զգեստով, զլուխները զարգարած թռչունի վետուրներից շինւած պսակներով, իսկ այժմ ես աեսայ նոյնա միջնադարեան թագաւորների և թագուհիների հագուստով, հերածակ սովէ թագերը գլխներին և ոսկէթել ծովերը գօտիներից կապած:

Երկրորդը՝ կազմում են կենդանի պատկերները հին կտակարանից, օրինակի համար Աղամ և Եւայի դրախտից

արտաքսւելը. Մովսէս մարզարէի Կարմիր ծովից անցնելը. Կայէն սպանում է Սբէլին. Ասուր թագաւորը մերժում է Վասթիին և մեծարում է Եսթերին. Խաճակի զենումը. Յովութիի վաճառումը. պղնձէ օձը: Սաման կալանաւորւած ծաղրի առարկայ է գարձած. Աղամ պէտք է խր երեսի քրտինքով հաց վաստակէ և այն և այն, որմնը թւով 21 հատ են: Բայց պիտի նկատեմ այստեղ, որ այդպիսի գեղեցիկ կենդանի պատկերներ ոչ մի տեղ տեսած չեմ—այնքան սիրուն են դասաւորած և այնքան բնական ու անթարթ կերպով նայում են մօտ 5-6 րոպէի չափ նոյն իսկ փոքրիկ գեղջուկները, որը գետնին փուած, որն իւր մօր գիրկը, որ միայն հինգամ կարելի է: Օրինակի համար «մանանայի երկնքից թափւելը» մի աննման պատկեր է ներկայացնում, որտեղ 300 գիւղացի մտանակցում են այդ կենդանի պատկերին: Միւնիւէի առաջնակարգ նկարիչներն օգնել են օրէրամերգառուկցոց այդ պատկերները գներուն բեմի վերայ, դորա բոլորը կազմւած են խտական ոճով, որ վերաբերում է գեղարւեստական ամենալաւ ժամանակին, XVII դարուն:

Եւ վերջապէս երրորդը՝ և որ ամենապլիսաւորն է կազմում է գրաման 17 գործողութեամբ, սկսած Քրիստոսի երուսաղէմ մտնելու օրից, մինչև նորա խաչւել, թագւել և յարութիւն տանելը:

Ա. Մ Ա Ս Ա.

Առաւուայ ճիշտ ժամը 8-ին սկսեց ներկայացումը: Ահա երաժշտութեան ձայներ են լուսում. նւազովներն այնքան ցածր են բիմից և ծածկւած ժողովրդի աշրից, (Վազնէրի սովորութեամբ, որ մարդ կարծում է թէ երիակայական երաժշտութիւն է այդ, պահապան ոգիների խումբը գուրս է զարդարութիւնը.—խմբապեալ սկսում է սօլո երգել և ապալիս պրօսցէնիում:—խմբապեալ սկսում է սօլո երգել և ապա-

Խումբը հետեւում նորան, երգը վերջացնելուց յետոյ պիոլոգուար ձեռքով ցոյց է տալիս դէպի բեմը, որի վարագոյքը անմիջապէս բացւում է և մի կենդանի պատկեր է ցոյց տղըւում, որը որոշ կապ է ունեցել նոցա երգածի հետ, դորանից յետոյ խումբը հեռանում է, երաժշտութիւնը գատարում:

Յանկարծ լուում է իրար անցում, աղազակ, ժողովուրդը, որ արևելեան ճաշակով գոյնզգայն շորեր ունի հագած արմաւենու ճիւղերը ձեռքերին, Օվսաննա երգելով Քրիստոսին բերում է դէպի պրօսցէնիումը: Իսկ Քրիստոս սպիտակ աւանակի վերայ նստած իւր աշակերտների և այդ ամբոխի հետ միասին ներս է մտնում խաչակնքելով. իջնելով աւանակից, նկատում է հրէայ վաճառականներին, որոնք տաճարի մէջ առեսուր են անում. որը թռչուններ է ծախում, որն ամաններով ձէթ, որը դրամ է մանրում և այն, արդար դայրոյթով կանչում է նա՝ «Տուն իմ տուն ալզօթից կոչեսցի և այլն» և խարազանով գուրս է անում բոլորին տաճարից: Եւ նոքա, որոնք որ խարազանի հարւածներ ստացան, կամ ապրանիք վնասներ կրեցին, սկսեցին տրտունջ յայտնել և վրէժինդրութեան ցոյցեր անել: Բայց Քրիստոս իր աշակերտներով հեռանում է, իսկ վաճառականները գտնում են իրանց օգնական բահանաներ, դպիրներ, որոնք խորհուրդ են տալիս բողոքել քահանայապետին:

Յետոյ լինում է ժողով Կայիափայ բահանայապետի մօտ, որտեղ մտածում են, թէ ինչպէս իրանց ձեռքը զցեն Յիսուսին և վրէժ առնեն նորանից:

Այդ տեսարանին հետեւում է այս գործողութիւնը. Քրիստոս Յէթանիայում խօսում է իւր աշակերտների հետ գալիք տօների մասին: Այդտեղ հիանալիք էր իւր դերում Յովհաննէս Եւետարանիչ, աշքերը սիրով լի դէպի Քրիստոս, նա հարցեր էր տալիս իւր ուսուցչին և համբուրում ու շփում նորա ձեռքերը: Այդ միջոցին գալիս է Մարիամ Մագդաղէնացին և լոելայն լւանում է Քրիստոսի ոտքերը և երբ Քրիստոս պատ-

բաստում է մեկնելու հէթանիալից, մնաս բարեւ է ասում ամենքին, այդ ժամանակ Մարիամ Մագդաղէնացին ընկնում է Յիսուսի ոտքերն ասելով «Ա խ, ես սարսափելի բաներ եմ նախազգում. զո՞ւ իմ հոգոյս բարեկամ, իմ սիրտս, ո՞հ իմ սիրտը թողնելու չէ քեզ երբէք»: Իսկ Յիսուս վեր է հանում նորան ու ասում՝ «Վեր կաց Մարիամ, խաւարը մօտենում է և համեստ են ձմերային փոթորիկները, բայց մխիթարէիք, առաւտեան կանուխ գարնանային պարտէզի մէջ, զու վերստին կտեսնես ինձ»:

Դորանից յետոյ լինում է Քրիստոսի մնաս բարել Մայր Աստւածածնի հետ: Ափսոս, որ Աննա Ֆլունդէր, որը փոստալիօնի ապջիկ է և 1850 թ. Քրիստոսի զեր կատարողի թոռն է, թողլ էր Աստւածածնի դերում. նորա դէմքը և ձայնն այնքան սառն էին, որ կարծես թէ անտարբեր լինէր դէպի իւր որդու տանջանքները:

Բայց այդ շրջանում որտեղ միայն մէր և չերմ զգացմունք էր լժագաւորում, մի մութը բծի նման երեան է գալիս մատնիչի դէմքը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մանր ու շահամէր մարզու տիպար, որ 30 դահեկանի համար պատրաստ է իւր հոգին սետյնելու:

Յետոյ կատարեւում է Ոտնլւան, ճիշտ այնպէս, ինչպէս որ նկարագրւած է Աւետարանի մէջ: Բայց Աստւած իմ, թէ ինչպիսի հեզ գէմքով և խոնարհութեամբ Անտօն Լանզը կատարում էր այդ զերը, ես նկարագրել շեմ կարող: Նորա ամեն մէկ չարժմունքը և վարմունքը կարծես զերբնական լինէր և երբ ամեն մէկ աշակերտի լւալուց յետոյ խաչակնըլով նա անցնում էր դէպի միւս աշակերտը, այդ միջոցին նորա վեր բարձրացրած մեծ, կապոյտ աշքերն այնպիսի տպաւորութիւն էին թողնում, որ թւում էր թէ, այդ վարկէնին նա հոգով սլանում էր դէպի երկինք...

Ոտնլւային հետեւում է զարձեալ ժողովը քահանայապետների ներկայութեամբ, որտեղ Յուգան կաշառւում է ար-

դէն և խօսք է տալիս մատնելու իւր ուսուցչին ու զինւորների և քահանայապետների ծառաների հետ միասին հեռանում է: Նորա զնալուց յետոյ ժողովը վճռում է Քրիստոսի մահան գատապարտելը:

Ահա և Ս. Ընթրիքը. Քրիստոսի ու աշակերտների տեղը հանդերձները և սեղանի ամբողջ գասաւորութիւնը համեմատ են Լէօնարդո-զա Վինչենչի հանրածանօթ պատկերին: Այդ գործողութիւնը, որը շատ փառաւոր կերպով և ամեն ինչ ճշտութեամբ կատարւում է, ինչպէս ասւած է Աւետարանի մէջ, շատ խորը և գեղեցիկ զգացմոններ է զարթեցնում մարդուս մէջ: Իսկ այն խօսքերից յետոյ, երբ Յիսուս ասում է «Ամեն, ամեն ասեմ ձեզ, զի ոմն ՚ի ձէնջ մատնէսցէ զիս» այդ րոպէից կարծես հանդիսաւոեների ուշագրութիւնն աւելի ու աւելի է լարւում և ինչ որ մի անարդար և զարհուրելի՛ բան տեսնելու նախազգացումը սկսում է ճնշել նոցա:

Կրկին վարագոյրը բացւում է. տեսարանը Գելթուեմանի ձորն է պատկերացնում:—Քրիստոս զալիս է իւր երեք աշակերտներով, որոնց թսզնում է ցածը, իսկ ինը մի ըլրակի առաջ չորած աղօթում է: Բայց Յիսուս թուլանում է. նա այդ տեղ այլևս մի գերբնական էակ չէ, այլ մի մարդ, որն ընկնած է իրան զգում զալիք տանջանքի առթիւ. և այդ ժամանակ նա այնպիսի յուզիչ ձայնով աղաղակում է առ Առտուած՝ «Հայր, ամենայն ինչ Քեզ հնարաւոր է. անցն զբաժակու զայտ յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս զու կամիս» որ մարդուս սիրաց պատուում է յուզմունքից: Այդ միջոցին մի հրեշտակ է իջնում երկնքից Յիսուսի առաջ և քաջակերում է նորան ու հեռանում, որից յետոյ երկում է հեռաւից Յուլան զինւորների հետ միասին և Յուլայի պայմանական համբոյրով Քրիստոս կալանաւորուում է:

Եւ այդ գործողութեամբ, ժամը ճիշտ 12-ին վերջանում է խաղի առաջին մասը: Աղա բեմ է գուրս զալիս թարունի կառավարիչներից մէկը և յայտնում է ժողովրդին, որ պատ-

սիօնսշղիլի առաջին մասը վերջացած է և թէ ժամ ու կէս միջոց կայ հանգստանալու:

Բոլոր ժողովուրդը գուրս է զալիս գիւղ մի քիչ թարմանալու և հանգստանալու ստացած տպաւորութիւնից:

Բ. Մ Ա Ս Ն.

Դարձեալ թատրոնում նստած եմ ես, դարձեալ երաժտութիւնը նւազում է և ահա հանդիսական բայլերով գուրս է զալիս պահապան ովիների խումբը, ապա սկսում է երգեցողութիւնը: Եւ բանի որ իմ հետաքրքրութիւնս հասած էր իւր գագաթնակէտին և ես անհամբեր սպասում էի դրամայի վերջաւորութեանը, այդ խմբի յաճախ երեալը պրօսցնիումի վրա ինձ այնպէս էր գրգռում, որ իս ակամայ աչքերս փակում էի, միայն թէ չտեսնեմ նոցա, թէ և պիտի խոտովանիմ որ պատկառելի պրօլոգուսը մարդարէի նման յուզում էր միը սրտերը իւր նախապատրաստական խօսքերով: Երգեցողութիւնից յետոյ տրեց և կենդանի պատկերը, որը և ներկայացնում էր «Միքիա մարդարէին Ագապ թագաւորի առաջ». վերջապէս դադարեց այդ ամենիր: Այժմ բեմի խորքում, մժութեան մէջ հաւարւած են մի խումբ զինւորներ և զանազան մարդիկ ու կրակի առաջ տաքանալով խօսում են, թէ ինչպէս են բռնել Յիսուսին: Երուսաղէմի փողոցի ձախ կողմից երկում են Պետրոս առաքեալ, Յովհաննէս Աւետարանիշ և Մայր Աստուածածին դալկահար, գլուխը դրած իւր որդու սիրելի աշակերտի ուսին, որը միսիթարելով և յոյս տալով Տիրամօրը, տխներ ու տրտում առաջ է զալիս, ջերմ փափագով լցւած, որ որեէ բան իմանայ իւր պաշտած ուսուցչի մասին: Յանկարծ նորա նկատում են բեմում հաւարւած մի խումբ մարդկանց և փսփսալով իրար հետ խօսում են, թէ ինչպէս անեն, որ չճանաչւեն և միննոյն ժամանակ որ և է

լուր առնեն, թէ նւր տարան արդեօք Յիսուսին, Եւ Յովհաննէս Աւետարանիշ Աստածածնի հետ միասին որոշում են հեռանալ, իսկ Պետրոս առաքեալ մօտենալով այդ խմբին, խօսում է հետները, հարց ու փորձ անում. բայց խմբի միջից մի կին ճանաշելով նորան, մատնում է որ դա Քրիստոսի հետեղգներիցն է. Պետրոս առաքեալ ուրանում է և այդ իսկ բոսկին զինւորները Քրիստոսի թերը կապկապած տանում են այդտեղից. Քրիստոս խորը թափանցող հայեցք է զցում իւր աշակերտ Պետրոսի վրայ, որն արդէն երրորդ անգամ ուրանում է և միենոյն ժամանակին լուռում է աքաղաղի վերջին կանչը:

Պետրոս առաքեալի ուրանալուց յետոյ, դարձեալ քահանայապետների ժազովն է կայանում բնմի վրայ, Բոլորն էլ երեխի էին իրանց գերում. նոցանից ամեն մէկն այնպէս ոգիորուած խօսում ու խալում էր, որ նոցա գէմքերի վերայ պարզ արտայայտում էր ոխակալութիւնն ու վրէժխնդրութիւնը: Եւ այդ նիստի ժամանակ, յանկարծ ներս է մտնում զղացած Յուդան ու դեռ չսպասած Քրիստոսի դատավճռին, իւր ստացած սոկիները շպրտում է խորհրդի երեսին և զուրս է վազում խելազարի նման:

Քիշ յետոյ Քրիստոսին բերում են Անհա քահանայապետի մօտ. հարց ու փորձի ժամանակ զինւորներից մէկն ապտակում է Յիսուսին. ապա նորան առաջ զցած տանում են գէսի սրահը. Քրիստոսին, որ համարեա մերկ է, նստեցնում են մի թումբի վերայ, ծաղր ու ծանակով ողջում են և զլխին տալով վայր են զլորում յատակին և երբ պատրաստում են նորան առաջնորդելու գէսի Պիտառոսի մետ, այդ ժամանակ կետրոնական բեմում գարձեալ երեան է զալիս Յուդան: Նա հանգիստ չւնի մի բոսկ. նա տանջում է խղճի ձայնից, նորա երեսը վայրինապէս փախւում և ծռմուռում է. նա յանկարծակի ցնցւում, յետ-յետ է զնում. նորա աչքերը լայն բացւած, արտայայտում են ստրափ, կարծես թէ նա այդ

պէին տեսնում է օձերի, որոնց խայթից ազատւելու ոչ մի հնար չունի և ձեռքերը կրծքին ծեծելով, կարծես նա մոընչում է իւր վէրքի մամուռից և իւր ամօթն ու խղճի խայթոցները թաղցնելու ոչ մի տեղ չփանելով, բացականչում է՝ «Ոչ մի անտառի խորքը և ոչ մի ժայռի բարձրութիւն բաւական չեն իմ ամօթն ծածկելու համար. գետին պատռափր և կուլ տուր ինձ. Ես այլիս գոյութիւն չեմ կարող ունենալ: Այս իմ վարդապետիս, մարդկանցոց ամենալաւին, ես վաճառեցի, որպէս զի նորան տանջին և մահան դատապարտեն: Ես, ոհ, ամենազագրիլ մատնիշս...» Ահա այսպիսի յուսահատական վիճակի մէջ, նա ջղային դրութեամբ, արագ արագ փաթաթում է իւր վզին պարանը, ասելով «Եյս ծառի վրայ թնդ կախւի ամենաթշւառ պտուղը»: Ու այն բոսկին երբ ուղղում է կախւել ծառից, վարագոյնն իջնում է:

Եւ այդ գիւղացի գերասան Եօհանն Յվինկը, որ 1890 թւին էլ խաղացել է նոյն գերը, այնպէս հմտութեամբ և հոգերանօրէն կատարեց այդ ամենը, որ կարծես նա մարմնացած Յուգան լինէր:

Բայց այդ ինչ աղմուկ և իրար-անցում է լուռում փողցների կողմց.—ահա անթիւ ու անհամար մարդկիկ, Քրիստոսին բօթելով ու հրեխով ներս են խուժում պրօսցէնիում և ժողովում են Պիտառոսի պալատի առաջ: Զատ բնորոշ է զուրս բերած Պիտառոսի գերը, նա խկական ճշմարիտ չոռվմայցի և հոգով արդարագատ մարդ է. բայդ այնքան թոյլ կամբի տէր է, որ Քրիստոսին արդարացնելու բոլոր փորձերը զուր են ացնում և աւելի ու աւելի տեղիք են տալիս նորան չարչարելու և հայնոյելու: Պիտառոս գէսի հրէաների արհամարանը է վերաբերում և իրքի իրաւաբան, նա պահանջում է փաստեր մեղագրեալի մեղքի համար. իսկ փոխանակ փաստերի, նա լսում է միայն աղաղակներ ու ծաղր և այդ ամենն այնպէս է ձանձրացնում իրան, որ նա արդէն յենելով այն կէտի վերայ թէ՝ «մեղագրեալը Փալլէլիացի է, ուրիշն ասում է՝

«տարեք այս մարդուն չէրովդէսի մօտ»:

Չէրովդէսի գերը կատարում էր Ռօխուս Լանդ, որ Քրիստոսին ներկայացնողի հայրն է:

Չէրովդէս շափազանց հաւատում է հրաշքների և Քրիստոսին երևակայում է իբրև մի մեծ կախարդ. այդ պատճառով հրամայում է նորան գիշերը ցերեկ գարձնել, իսկ ցերեկը գիշեր, կամ թէ զաւազանն օձ. նա գրգռւած Քրիստոսի լոռութիւնից, վճռում է նորան ծաղրի առարկայ դարձնել, իբրև յիմարի: Այստեղ քահանայապետներն՝ ասում են թէ նա ժողովրդին մոլորեցնում է և իրան անւանում է թագաւոր հրէից. ահա այդ հիման վերայ չէրովդէս հրամայում է, որ Քրիստոսի վրայ զցեն մի սպիտակ պատմուճան և տանեն ժողովրդի առաջ ծաղրելու ու ապա կրկին ներկայացնեն Պիգատոսին:

Պիգատոս կամենում է բաւականանոլ ծեծով և մտածում է խորամանկութեամբ յաղթել հրէաներին. նա առաջարկում է ժողովրդին՝ ընտրութիւն անել. Յիսուսին թէ Բարաբրա աւագակին աղատութիւն չնորհել հրէից մեծ տօնի պատճառով. և վերջն, յենւելով մի իրաւաբանական կէտի վերայ, դիմում է քահանայապետներին, դպիրներին ասելով՝ «դուք ժողովուրդ չէք կազմում, թնդ ինրը ժողովուրդը յայտնէ իւր կարծիքը»:

Մինչդու զինորները Քրիստոսին տանում են ծեծելու և նորան ծաղրելու համար, զիսին զնում են վշեայ պսակ, ամուր խփելով, որ ամրանայ զիսի մէջ, ու ձեռքը տալիս են մի բարակ եղեգն զաւազանի փոխարէն:

Այդ տեսարանն այնքան որտաճմիկ է, որ մարդուս ամբողջ մարմնով սարսուռ է անցնում...

Ահա Քրիստոս կրկին կանգնած է Պիգատոսի առաջ. նա հազին ունի մի բարակ պատմուճան, բաթանէ գոտին մէջից կապած, վրէն զցւած է կարմիր ծիրանին, որ հասնում է մինչև ոտքերը, ձեռքերը կատկապւած և նորտ զիսի

վէրքերից կաթ-կաթ արիւն էր հոսում:

Բայց քահանայապետները, որ գժկոն մնացին Պիգատոսի դատավճռից և որ կարծես ուզում էին խմել Քրիստոսի արիւնը, մի ակնթարթում ցրւում են իրանց արբանեակներին ժողովրդի զանազան խաւերի մէջ, որ նորան աւելի ևս զրոգուն Յիսուսի դէմ: Եւ յանկարծ, Երուսաղէմի փողոցներից մեծ բազմութիւն խուժեց գէպի պրօսցէնիում, ու այդ միջոցին Պիգատոսի պատատի առաջ մի շտեսնեած ու շլւած ժողովրդական խորվութիւն բարձրացաւ:

Եւ այդ խաժամուժ ամբոխը, ծեր և երիտասարդ, նոյն խոկ 10-12 տարեկան տղաները, կատաղած զազանի նման ժողովրդալով ու զրոն տալով և կարծես մէկ բերանով աղազակում էր՝ «ի խաչ հան զդա, ՚ի խաչ հան զդա»:

Քրիստոս, որին Պիգատոս տարել էր իւր մօտ վերջին անգամ քննութեան ևնթարկելու, զորս է զալիս նորա պաշտի զոնից ու լայն սանդուխորի աստիճաններից հանդարտ կերպով ցած է իջնում: Նորա զեղեցիկ, անմեղ դէմքը, որի վրայ զրոշմւած է ներողամտութիւնը, յառած է զէպի իրան հալածող ամբոխը:

Հրէից ժողովրդի խորվութիւնը Պիգատոսին անհանգուտացնում է և նա լանում է իւր ձեռքերը ներսից բերւած ոսկէ թասի մէջ, ասելով՝ «Բաւեալ եմ հս յարնենէ արգարոյդ այդորիկ, դնոք զիտացիր»:

Գատաստանական կանոնները կատարւում են, զրագիրը կարգում է զատավճռուը, իսկ ամրոխը ցնծում է, որ Քրիստոս ընկաւ իւր ձեռքը: Եւ խուժը խուժը, հետզհետէ ցրւում են ու զեռ հեռաց արձագանքի նման խուժը է նոցա ուրախութեան ձայնը: Պրօսցէնիումի վրայ մի խորհրդաւոր լուռթիւն է տիրում առ ժամանակի:

Այդ գործողութիւնից յետոյ, երբ խուժը զալիս է երկելու, երածշտութիւնը զարմանալի հոգեզմայլ և մեզմ է նուազում, ամրող պասոխնաշպիլի մէջ երածշտութեան այդ

կտորը ամենագեղցիկ ու ամենակատարեալն է համարւում։ Սրաշարժ ու քինադատութիւնից բարձր է այն տեսարանը, երբ Քրիստոսին տանում են դէպի Գողգոթա սարը։— Եռաջից գնում է հարիւրապետը ձիու վերայ նստած, զինւորները նորա յետելից, իսկ մեծ բազմութեան առաջն ընկած հետեւմ է նոցա Քրիստոս խաչափայտն ուսմին, որի ծանրութեան տակ նա ուժապառ է եղած, նորան խղճում են նոյն իսկ դահիճները և թոյլ են տալիս Սլմէօն Կիւրենացուն տանելու առ ժամանակ այդ ծանր խաչը։ Այդ իսկ միջոցին դէմ է գալիս Աստւածածին երուսաղէմի մի քանի կանանց հետ և տեսնելով Քրիստոսին, բացականչում է՝ «Նա է, իմ Յիսուսը» և ուշագնաց ընկնում է հետի եկած կանանց գիրկը։ Իսկ կանանցից մէկը իւր թաշկինակով սրբում է Յիսուսի քրտնած և արինստ երեսը, որի վերայ տպւում է Քրիստոսի դէմքը։ (Արևմտեան աւանդութեամբ ահա այդակիցն է առել իւր ծագումը «Պատառակը» որն յայտնի նկարիչների երեակայութեան նիւթն է գարձած)։ Եւ Յիսուս թողած իւր վշտի ծանրութիւնը, մխիթարել սկսեց այդ կանանց իւր նշանաւոր խօսքերով՝ (Գոտերը երուսաղէմի, մի լայք ՚ի վերայ իմ, այլ լացէք ՚ի վերայ ձեր և ՚ի վերայ որդոց ձերոց և այլն։ Ու այդ կարճ տեսակցութիւնից յետոյ, զինացը նոյն տիսոր հանդիսաւորութեամբ շարժւեց դէպի առաջ։

Տէր իմ Աստւած, ես երբէք չեմ կարսող մոռանալ այն զգացմունքը, որը պաշարել էր ինձ, երբ տեսայ այդ զործողութեան մէջ Քրիստոսին, իւր ծանր լուծը բաշելիս... Մի առանձին տեսակ կտկիծով ու տիսորութեամբ լցւած էր իմ սիրոս դէպի այդ անմեղ զոհը և ժամեց շարունակ մորմորալով ու լաբւած ուշագրութեամբ հետեւելով ամեն մէկ կատարւած զործողութեանը, այդ բովէին ես այլ հս ինձ զսպել չկարողացայ և արտասուքն սկսեց ինձ խեղդել... Բայց այս ինչ է, լուսմ եմ հեկեկոցներ, նայում եմ չորս կողմո, ամբողջ թատրոնը լալիս է բառի բուն նշանակութեամբ... Եւ ես

կարծես նոր միայն, այդ ժամին, սկսում եմ հասկանալ, ըմբռնել Քրիստոնէական կրօնի բարձր նշանակութիւնը, Քրիստոսի քարոզած սուրբ ճշմարտութիւնները, որոնք նա իւր այսքան գառնութեան ու տանջանքի գնով, մինչև իսկ իւր անձը զոհելով, կտակեց մարդկութեանը։

Այդ գործողութիւնից յետոյ, երգեցիկ խումբը դներս է գալիս սե վերարկուներով ու նորա երգելու ժամանակ բեմի յիշելից լուսում է մուրճի ձայներ և արգէն պրօլոգուսը յիշեցնում էր մեզ հառաջանքով, թէ ինչպէս մերկացնում են Յիսուսին, կապում են խաչի վրայ, ձգձգում են նորա անդամները բեռնելու համար և թէ ինչպէս անմեղ գառը մարդասպանների, աւազակների մէջտեղ կախւած, թափում է իւր արիւնը մեր փրկութեան համար։ Նորա խօսքերից յետոյ ահա և խումբն երգում է՝ «Ո՞վ կարող է ըմբռնել այդ վսեմ սէրը, որսկ մինչև մահ սիրում է նա, զուք էլ բերէր ձեր սիրոյ պատարագը խաչի սկզբանի վրայ»։

Խմբի հեռանալուց յետոյ վարագոյրը բացւում է։ արգէն երկու աւազակները խաչւած ամրացւած են զետնին, իսկ Քրիստոս հորիզոնական կերպով պառկած է խաչի վրայ։ Դիրասանների ասկելով ամենագժար ձեր խաչի վրայ մնան է և եթէ որոշած ժամանակից քիչ աւելի տեէ այդ տեսարանը, վերակատարը անպատճառ ուշըից կերթայ, ինչպէս որ այդ պատահել էր եօվէֆ Մայէրին 1880 թ.։

Խաչելութիւնը տեսում է 20 բոպէ և շատ ուժեղ տպաւորութիւն է, թովնում։ Ահա բարձրացնում և ամբացնում են իւր տեկնում խաչափայտը, որի վերայ է Քրիստոս։ Նորա ոտքերի և ձեռքերի մեխւած տեղերից արին է կաթիւթում։ Աստւածածին, Մարիամ, Մագդալէնացին, Յովհաննէս Աւետարանից, Յովսէփ Արևմաթիւացին շրջապատել են նորա խաչը վշտով լի արտայայտութեամբ։ Յիսուս խօսում է նոցա հետ և բաջալերում է խաչի վրայից։ Երկու զահիճներ մեծ նիզակները ձեռքերին, երեք-չորս անդամ խփում են աւազակ-

ների ծնկներին ասելով՝ «Ճեզ այսքանն էլ հերիք է»; Դոկ Քրիստոս երբ ծարաւում և ջուր է խնդրում, զինորները մօտեցնում են նորան սպոնգ քացախով թրչած և ապա Քրիստոսի վերջին խօսքերն արտասանելով՝ «Ամենայն ինչ կատարեալ է» հոգին աւանդում է:

Հարիւրապետի հրամանով դահճճն Քրիստոսի կողը ծակում է, որտեղից առատ արիւն է հոսում:

Եւ այդ ամբողջ տեսարանն այնքան քնական կերպով է կատարում, որ կարծես թէ մարդու շոնչը բռնուում ու տանջուում է խաչողի հետ միասին:

Այդ միջոցին փոթորիկ է բարձրանում, խաւարում է երկինքը, պահապանները շփոթւած վազվում են այս ու այն կողմ:

Մի շատ խորհրդաւոր ու գեղարւեստական պատկեր է ներկայացնում Քրիստոսին խտչից վայր բերելու տեսարանը, որն իսկ այնպէս է կատարուում, ինչպէս որ նկարել է Ռուբենս. նորա խոկական մեծադիր նկարը գտնուում է Անտիէրպէնի մայր եկեղեցում:

Լուս, քրիստոնէական համբերութեամբ, հաւատով լի դէմքերով, Յովսէի Արեմաթիացին վեր է բարձրանում և նիկոդիմոսի ու Յովհաննէս Աւետարանէի հետ միասին, զգուշութեամբ ու խնամքով վայր են իշեցնում խաչի վրայից իրանց Տիրոջ թանկագին գիտակը և նորա գլուխը զնում են Տիրամօր գիրկը, որը թալկացած նստած է. իսկ Մարիամ Մագդաղէնացին նորա ստրերի վրայ ընկած հեկեկում է: Քրիստոսի վէրբերը լւալուց, պատանելուց յետոյ տանում են թագելու:

Նոյն տեղում գարձեալ վարագոյրը բացում է, նստած են պահապանները Քրիստոսի վերեպմանի մօտ. յանկարծ լոյս է երեսում, գերեզմանի քարը յետ է զնում և Քրիստոս սպիտակ դզեստով երեսում և հեռանում է: Պահապաններն ապշար ուսարսափահար են եղած. վազում են իմաց տալու այդ մասին բահանայապետներին: Այդ ժամանակ ներս են մտնում հաւա-

տացեալ կանայք և լնկնում են Քրիստոսի գերեզմանի վերայէ այգտեղ մի հրեշտակ երեսում է նոցա և աւետում Քրիստոսի յարութիւնը:

Գալիս են և քահանայապետները չնշասպառ, զայրացած և սպանալիքներ են անում պահապաններին:

Դոցա հեռանալուց յետոյ երաժշտութիւնը նւագում է, պահապան սպիների խումբը գուրս է գալիս արդէն վերջին անգամ և երգում է «Քրիստոս յարեաւ և Ալելուեայ»: Այդ միջոցին կետրոնական բեմի վարագոյրն յետ է զնում և կատարում է «ապօթէօզը» (վերջաւորութիւնը) — մի շատ գեղեցիկ և հրաշալի կենդանի պատկեր է բացում հանգիստականների առաջ՝ Քրիստոս, կարծես թափանցիկ ամպերով ծածկած, կամաց-կամաց համբառնում է դէպի երկինք և խաչափայտի մի կողմը պայծառ հայեացրով, աշքերը դէպի երկինք, չորած են Մայր Սուտածածին, Մարիամ Մագդաղէնացին և նորա, որոնք ներկայ էին խաչելութեանը, իսկ միւս կողմում բահանայապետները և հեթանոս ժողովուրդը դաժան ու յուսախար դէմքերով թափանց են իրար վրայ:

Եւ այդպէս, իսիկւայ ճիշտ ժամը 5-ին վերջացաւ ներկայացումը:

Դուրս եկանք թատրոնից. Այդ պասսիօնսպիլի տպաւորութիւնն այնքան մեծ և խորն էր ինձ վերայ, որ այլ ես բերանս չէր բացում մի խօսք անգամ արտասանելու: Զաղար խառնաշփոթ մտրեր մէկը միւսի յետից վալիս ու անցնում էին իմ գլխովս և ինձ թւում էր թէ, թէ ես վերադառնում էի մի շենքուած ու ցնորական աշխարհից...

Իմ նպատակս չէր ըննել այդ պասսիօնսպիլի լաւ կատագատ կողմերը և մտնել զանազան կրօնական ու փիլիսոփայական հարցերի մէջ, այլ ես միայն գրի առայ իմ տեսածս և

զգացածս, որպէս զի գէթ քիչ շափով տեղեկութիւն տամ ընթերցող հայ հասարակութեանը, այդ հագլագիւտ ներկայացման մասին:



Տիրութիւնականութեալից

1. Հայութ պատմելուց հետո առաջ սահմանում արդ
միջնի մէջք սիստ և սուր գուշակ գովածք հայաւոր
քի ու զամանակի և ամառ սուստիք ։ Ասորդ և նարին
պատմած հետի ։ առ մայրաւոր մինչ մարտաւոր միջու
և թիգերը ուս մի—(ու ունեցուածողի) պահօնուա ։ Կառ
ո միմանալունաւ հունաց ։ զանուա մարտիք վայշաշ
հաւնան խոշին միմանաւի ու նզաք սպասիք զան
գուրաւուաւ ։ ունից զի՞ւ և հունական բախտ-բախտ
հազու ունից զի՞ւ ունեցու խորացու անհայտ զի՞ւ
այսու և միջամշարքու հայզու և միջնաւան զի՞ւ և մձ
տեազ հայեց ունի բայ ունանելու անձաւ միջ ունից զի՞ւ

Պ Օ Ա Ն ու առ պատճենի
ամենը առ պատճենի

Պ Օ Ա Ն

(Նորավեպ) պատճեն կի մէջելուսը

Լոյսը ճեղքւելուն պէս, արթնացեր էր այն առտուն Մարբիկ և առանց սովորականին պէս, ժամերով պառկած երազելու՝ ցատկեր ելեր էր անկողնէն։ Հակառակ մշումն, հակառակ ձմեռ առտուներու սարսուագգեցիկ ցուրտին, որմէ այնքան կվախնար իր փափուկ մորթին համար, փողոց ընկեր էր բժիշկ մը գտնելու համար իր պղտիկ աղջկան, որ կրակներու մէջ առջի իրկուրնէ ի վեր։

Ամուսինը, խանութպան մարդ մը, մութն ու լուսոնն զոր-
ծի կերթար, և սպասուհին, զիւղին նոր եկած աղջիկ մը,
տեղ մը շեր զիտէր Բերայի մէջ:

Ճռւա շուտ կը վաղէր Բանկալժիխ շիտակ ճամբուն մայթին փրայէն, իր հայլիին առջի կորսնցուցած մէկ քանի բառորդ ժամերը շահելու համար, ու մտքէն չէր անցընէր թրուամկայ մը մտնել, զոր միշտ արհամարած էր իր վայելշամէր կնոջ նախապաշարումին մէջ: Եւ տիտոր, մտածկոտ, կերթար աշքերը մառախուզին առզնդող թացութենէն արցունքուած, մուլթ, խոնաւ պարանիք մը նշմարելով հորիզոնին վրայ որուն այդ լալիան տրտմութիւնը իր սիրտը կը սեղմէր:

Լայն փողոցին մէջ, մէկ քանի մարդիկ կանցնէին հեռուէն, հեռու, փայտ բեռացած սայլ մը իր ցեխոտ անիւներէն ցայտք մը կը նետէր երեսին, և թռամվայի մը սայլը կը զարնէր մերթ ընդ մերթ ականչին, սուր, կծու ողբի մը նման շարագուշակ:

Պահ մը կեցաւ Մարքիկ ու ետին դարձաւ անգիտակցաբարք: Ամէն կողմէն պաշարւած էր մառախլային թանձր մըթնոլորտի մը մէջ, և այնպէս եկաւ իրեն որ ծունդերը....., սրտին խորէն խենդ փափագ մը զգաց այդ օդեղին ովկէանուն մէջ նետւելու, հոն խեղդւելու, անհետանալու....:

Թաղծալից սի նախազգացումներ տակն ու վրայ կ'ընէին զինքը. օգին ու եղանակին մելամազաւթիւնը ծայրայեղ զըրդութիւն մը կուտար ջիղերուն:

Զաւկին հիւանդութիւնը՝ որ ծանր հանգամանք մը չունէր իր աշքին, պատրւակ մըն էր ալեկոծելու այդ քանուերկու տարեկան կնոջ հոգւայն համար, որ գերագոյն յուզումներու տէնչն ունէր, և իր փարած տափակ կեանքին ձանձրոյթէն կը մեռնէր: Դժբաղդ արկածներու մազթանքը ըրած էր շատ անգամ սրտին խորունկէն, կարծելով որ նոյն իսկ ձախող դէպք մը փոփոխութիւն պիտի բերէր իր ընտանեկան ցուրտ յարկին մէջ, ուր իր երեր տարեկան աղջկան ճիշերէն զատ ձայն ձռն չէր լսւեր:

Քանի քանի անգամ, զիշերապահի մը բիրտ ձայնէն արթննալով բունին մէջէն, ցանկացած էր նոյն իսկ հրդեհին զոհ զնացսկներու բաղդին, և մինչև լոյս դապլդկած էր անոր հայթայթած հշշառութեան ցնորքին մէջ: Ինչ անուշ կուգար իրեն երեակայել ինքզինքը ճերմակ զիշերապահութիւն ուսկերը ուսերուն վրայ ծփծուն, հրդեհին լուսաճաճանչ կարմիր բոցերուն մէջտեղը կայնած, ահագին բազմութեան մը առջի «օգնութիւն» աղաղակելով, և զիւցազուն մը որ կեանքը վաանգի պիտի զնէր իրեն համար, և զիու շատ մը խենդութիւններ, սրոնք միշե առտու իր թեթե զիսուն մէջ կը պարէին, և զիշերւան աստղերուն հետ կը մարէին:

Ուրիշ անգամ հիւանդ պառկած կերեակայէր ինքզինքը. թորախտի բաղձանքը մանաւանդ շատ կը աանջէր զինքը. Փիւլիին պէտ ըլլալ, դժգուն, զիւթիշ.... Եւ ասոնք առանց շարամտութեան, առանց մէկուն մը փոքրիկ վնաս մը տալու

նպատակին, նոյն իսկ իր ըղձանքներուն անբարոյականութեան անգիտակից, միամիտ անմեղութեամբ մը...:

Սակայն կ'ուզէր որ միշտ ինքը ենթարկէր այդ ազէարներուն, և զաւկին տառապելը ճշմարիտ վիշտ մըն էր իր սրտին. վասն զի կը սիրէր զայն, ինչպէս տզայ մը իր պաւարիկը, որ թէրես զոհէր ինքզինքը անոր, նման պզտիկ աղբիկը, որ թէրես զոհէր ինքզինքը անոր, նման պզտիկ աղջկան որ ծովը նետւած էր իր կատուն ազատելու համար: Աւելի անոր արգուպարգին կը զբաղէր քան թէ կենսական պէտքերուն, և եթէ աղքատ ըլլար, առանց խզի խայթի, օրերով ցամաք հաց պիտի կերցնէր անոր, շրեղ գլխարկի մը զինը հայթայթելու համար: Պճանքի տարօղինակ հակում մըն էր այս որ կը խառնւէր իր ամէնէն սուրբ, ամէնէն գերազանց գգացմունքներուն: Ի՞րն էր յանցանքը, եթէ բնութիւնը՝ այդ հրաշագեղ էակը սահզած ատեն, մսոցեր էր քիշ մը խոհականութիւն խառնել անոր եռանգին, եթէ ծնողը՝ անոր հաշակը նրբացուցած ատեննին չէն մտածէր թէ պէտք էր անոր միտքն ու հոգին ալ մշակել:

Հիմակ որ զաւկին բժիշկ բերելու կ'երթար Մարքիկ, անոր հիւանդութեան ծանրութիւնը կշռելով շէր ամննեին, այլ անոր ներբելու պէտք մը, անոր համար յոզնելու, մսելու, իր փափուկ անձը մշուշին մէջ նետելու փափագ մը, նոյն իսկ ինքը իր անձին աղացուցանելու համար թէ որբան կը սիրէր այդ փոքրիկ հրեշտակը, կամ մանաւանդ զոհացում տալու համար իր ներբին պէտքին, շարժումի, յուղմոնքի համար ունեցած մաշող, սպասող, տեհշանքներուն:

Այսպէս որտատանց՝ զլուխը ծոած քաշելով անգայաբար մինչի թագսիմ հասեր էր արգէն, երբ աշքերը փերցնելով տեսաւ որ երկնքին երեսը սե բոկը բարակցեր կաթի պէս ճերմակ շզարշի մը երկայթը առեր էր, զար հետք ծագութ առապայթները կը ծակծէին անհամար ուկի աստեղներու նման, և այդ ծակերէն կը մազւէր լուսացնող փոշի մը՝ օդին մէջ ցանցնելով գւարթ լոյս մը որ բանի

կ'երթար կը պայծառանար. Յետոյ ամպերը բամբակի ծւէններու նման բրթելով կը զատէին իրարմէ, և կարասներու երամի մը պէս կը տարածւէին օդին մէջ. Անոնց վերև կ'երկար աստին անդին կապոյտ երկինքի պատառ մը ջինջ, խորունկ, անբջային սարսուռ մը դրկելով մշուշին ստւերներէն ընդարձագած աշբերտն:

Բնութեան այս զւարթ յեղաշրջումին առջև, սփր-
փանքի հառաջ մը չը կրցաւ զսպել Մաքրիկ. ճառագայթ մը
իշաւ կարծես իր որտին մէջ, զուրի պէս հալեցուց անոր տըրտ-
մութիւնը, յետոյ զայն խմեց, ծծեց, հատցուց, և սիրտ տաք-
ցուց, ոգեստեց ու յուսով յեզուց:

Բազմութիւնը կը շատնար փողոցին մէջ. կառքերուն
անցուգարձը ազմուկով կը լիցնէր իր չուրջը, և խանութնե-
րուն ցուցափեզվերը, փայլուն, մաքուր, զեղածիծաղ, նոր
արթնցող բնութեան հետ կը ժատէին իր երեսին. Կանանց
դարմացող և արանց հիացող նայւածքները կը գգւէին, կը
փափաքշէին զինքր. Ալ հիմա իր բալւածքը ծանրացեր էր,
պտոյտի ելլոզի մը անպարբեր երեսյթը կ'ուզէր ունենալ,
մերթ ընդ մերթ կանգ առնելով խանութներուն առջև, դիտե-
լու համար ապակիներուն մէջ իր դէմքը, որ անոնց շրեպ
կերպամներուն և պաճուճանըներուն մէջ շրջանակւած կը
փողփողէր:

Բայց կառքի մը մէջ տպեղ կին մը անցաւ մօտէն շրեղ արդուղարդով մը։ Նորատի ամոլ մը թե թեի իր առջևին կ'երթար տաք խօսակցութեամբ մը իրարժով զրագած։ այր և կին ըլլալու էին։ Երկու գալրոցական աղջիկներ քովէն կը քա-էին գիրքերնին թեւելնուն տակ, բարձրածայն ծիծաղելով։ Ամէն մարդ երջանիկ էր ուրեմն, ամէն մարդ կ'զբաղէր, կը դւարճանար իր կերպովը, ինքը մենակ . . . էր, առանձին, առանց զինքը զրաւող նպատակի մը, առանց հաճոյրի, տանը, տպուն, սպասուհիէն տափակ հողերով զրագած։ Իր տունէն դուրս վիշտ չի կար ուրեմն։ Այս, ինչ չէր տաք կառքին մէջի

կնոջ ճոխութիւնը, կամ այն երկու ամուսիններուն երջանկութիւնը, կամ՝ դպրոցի պատիկ աշակերտուհիներուն աղատութիւնը ձեռք ձգելու համար, և սակայն ինք ի՞նչ ուներ որ տար... հարցումը բերանը մնաց. Այդ միջոցին երկու երիտասարդներ կ'անցնէին բովին. «Հիանալի» փսխացին Փրանսերէն լեզուով: Ու հեռանալէն ետքը նորէն ետևնին կը դառնամ սինկրոս սիտերու համար:

Այս քազը խորհրդածւթիւններով Քամէլիային առջև
հասեր էր, հոն կեցաւ. ցուցափեղկին մէջ սքանչելի հաւաքա-
ծոյ մը կար պօանեցու, և անսնց մէջ հատ մը կախնագոյն
բանալէ, որուն վրայ աշքը մնաց. Ուզեց անգամ մը մօտէն
անուածափեւ պահե, ու խանութին նեցս մտաւ:

տեսնել, չօշափիկ զայս, ու բառապէտ, չայլիին գէմը կիցած՝ նուրբ զանգարնելով շինւած այդ կակուզ օձածե փետուրներուն մէջ թարմ գէմքը շրջանակւած՝ հրաշալի բան մըն էր. Խանութին յաճախսրգներն անդամ զործերնին ձգեր էին հիանալու համար այդ գեղեցկութեան վրայ, որ անգիմագրելի հրապոյր մը կը ստանար պօային վէտվէտումներուն մէջ ցոլանալով. Փետուրներուն թեկերը՝ սպիտակ գրփուրներու, յասմիկի գրթած թերթերու պէս այտերն ի վար կը ժեւէին. երեսները վարդի նորածիլ կոկններու նման թեթև կարմրութեամբ կը գիթթէին այդ բարակ ձիւնափայլ ակօններուն մէջ տեղերէն. մազերուն ոսկեթրթուր խոզպապիքը ծոծրակին վրայ կը խառնւէին անոր թէթի ու ծփին

օղակներուն, և իրարու փաթթւելով կարծես ալ չէին ուզեր
իրարմէ զատւիլ: Կապոյտ աշքերը կ'անուշնային, կ'անուշնային
այն աննման արտայայտութեամբ, զոր ներքին երանութիւնը
կուտայ զեղանի կանանց:

Գերագոյն երջանկութեան վայելը մը ունեցաւ Մաքրիկ.
միտքը դրաւ որ ալ պօան չհանի վկչն, և անտարքեր կերպարան-
բով մը գիեր հարցուց: Երկու ոսկի էր: Ճիշտ ինչ որ ունէր իր
դրամապահակին մէջ, բայց կէս բժշկին այցելազին պիտի տար:
Սակարկութիւն չկար, ապասիկ չպիտի գտահէին անձանօթի
մը: Ի՞նչ կէս ոսկի ուղորմելի գումարի մը համար պիտի
զրկւէր այդ պօայէն, զոր արդէն իրը կը նկատէր: Խանութիւն
պաշտօնեաները սորքի փրայ կայնած իրեն կոպասէին: Աշխարհիկ
կիոջ մը թափէն զուրկ՝ կարծեց թէ շափէն աւելի ժամանակ
անցուցեր էր: Յանկարծ աշքին առջե եկաւ մանկիկը փոքրիկ
անկողնին մէջ պառկած, աշքերը զսց, տենդին կրակներուն
մէջ տապլտկելով: Գլխու պտոյտ մը ունեցաւ, գողզոցուն
մատներով պօան ճիտէն հանեց: պատրւակ մը գտներու էր.
թոլովեց, փերջապէս խեղուուկ ձայնով մը ըստաւ թէ քիշ մը
կարճ էր, և դուրս ելաւ:

Սիրալ կոտրած՝ սկսաւ շտապով բալի ժամ առաջ հե-
ռանալու այդ փորձութեան վայրէն: բայց բայլերը ա-
ռաջ չէին երթար, իրեն այնպէս կուպար որ բան մի ձգեր
էր խանութիւն մէջ, ու շարունակ ետին կը դառնար նայելու
համար: Անշուշտ վաղը կրնար զնել, սակայն լիշեց որ բսեր
էին թէ հատ մը միայն մնացեր էր անկէ, և այն ալ ցուցա-
փեղին մէջ դրւած: ի հարկէ իրեն պէս յափշտակող մը պիտի
զանէր բոլոր օրը: Եթէ հետեւալ առտուն գար, ու ա-
նիկա ծառանձ շլար: Ի՞նչ զրկանիք, կը մտածէր, գեղեցիկ
դէմք մը ունեցող իրրի բարիք աշխարհի վրայ, և շկարենալ
անոր արժանի շրջանակ մը յօրինել:

Բայց իր զաւակը ի՞նչ ունէր այդքան իրար անցնելու.
քիշ մը տարութիւն: Բժիշկը հետեւալ օրն ալ կրնար զալ, և

թերես մինչեւ այն ատեն պէտք չէր ունենար: Հապա եթէ
տարութիւնը գիշերը աւելնար...

Այսպէս երկու յուզմանց մէջ կը ծփար, և սիրտը զատարկ...
մը պէս մէյ մը մէկ կողմ կը ծռէր, մէյ մը միւս կողմ: Յանկարծ
միտքը եկաւ որ ամառն ալ անգամ մը այսպէս եզեր էր պըդ-
տիկը, և սակայն առանց բժշկի ինքնիրեն անցուցեր էր: Ինչու
այս անգամ ալ այնպէս չըլլար. և սկրսաւ ինքնիրեն զարմանալ
լիէ ինչու պզտիկ բանի համար այնբան դոգ ելեր էր:

Սոսնք մտածած ատեն՝ ետ դարձեր, նորէն մօտեցեր էր Գա-
լէլիային: Ճուտով ներս մտաւ, պօան վիզը անցուց, վճարեց
ու փութով հեռացաւ վախնալով որ մի գուցէ միտքը փոխւի:

Ճշմարիտ իրարանցում մը յառաջ բերաւ այս անգամ
ճամբուն վրայ: Նազելամեմ՝ թագուհիի մը պէս, գլուխը վեր
բռնած, քայլերը մանրացուցեր էր, կաթիլ կաթիլ ճաշակելու
համար անցորդներուն կողմէն իրեն ընծայւած պաշտումը, և
քալեց խոնճերու բուրփառներու մէջն անյնող ապտւածուհիի
պէս մինչեւ իր տան գուռը:

* * *

Տղան բնաւ չէր արթնցեր, խորունկ, ինքզինքն ելած
քունի մը մէջ ընկլիմած կը խոկայ մանուկներու յատուկ կըս-
կածեցուցիչ հեռվ մը:

Փոքրիկ անկողնին քով ծունկի եկաւ խեղճ մայրը, ձեռքը
անոր ճակտին տարաւ, միննոյն կրակն էր. և ամէնէն անոյշ,
ամէնէն գործվալիր կոշտմներուն չը կրցաւ պատասխանել տղի-
կը, աշքերը անգամ չը բացաւ:

Բոլոր օրը բացախներով, օղքօլոներով շփեց մանուկին
ճակատը, դաստակները, առանց արդինք մը ձեռք բերելու:
Իրիկուան դէմ հիւանդին տենդը աւելցաւ, և կցկտուր ճիշերու
բանդապուշանք մը սկսաւ:

Մարրիկի բոլոր ուրախութիւնը ցնդեր էր. փողոցին մէջ
ունեցած յաջողութիւնը մոացած, պօային իր դէմքին տուած

վայելութեան վարժւած, անոր բոլոր հրապոյրը կորսւեր էր հիմա. ու հէտ կինը անհամբեր՝ ամուսնին կսպասէր:

Խեղճ մարդը տունէն ներս մտնելուն պէս՝ այլայլած դէմքով զիմացը վազզեց, բայց տեսնելով որ սաստիկ յովնած ու մսած էր, չկրցաւ բան մը ըսել: Պօլսէն մինչև Բանկալթի քալելով կուգար ամէն օր ժամը մէկին հաղիւ տուն հասնելով. Մարրիկ մեղքցաւ զայն:

Յակոր աղա որ առջի իրիկուընէ տղուն հիւանդութիւնը գիտէր, ինչտէս ըլլալը հարցուց. մայրը ստիպւեցաւ ճշմարտութիւնը ծածկել:

Ի՞նչպէս անցուց Մարրիկ այն գիշերը: Պէտք է հարցնել անոնց, որ իրենց սիրելիներէն մէկուն մեծ աղէտքի մը պատճառ ըլլալու խղճի խայթը ունեցած են: Ի՞նչ տագնապներ, ի՞նչ լկանքներ կրեց, որչափ լացաւ:

Մինչև կէս գիշեր չէր կրցած աշըրը փակել, Միջոց մը յովնութիւնը վիշտին յաղթեց, բայց քառորդ մը ետքը արթնացաւ, և խնեղի պէս տղուն անկողնին բով վազեց: Տարութիւնը հետզետէ կաւելնար, և խուլ խորդիւն մը կոկորդը կը շարշարէր:

Նորատի կինը ամուսնին հանգարտ քնանալը տեսնելով կը զայրանար անոր դէմ, զրեթէ կը նախանձէր անոր հոգւսին խաղաղութենէն, որմէ զրկեր էր ինքինը բան իսկ իր յանցանքովը:

Առտուան մօտ, ալ չկրնալով դիմանալ, արթնցուց զայն. տղուն վիճակը հասկցուց ու բժշկին վազցուց: Բայց ուշ էր. դօքթէօռը յայտնեց թէ սոսկալի քոռուք մըն էր, թէ կարելի էր բան մը բնել եթէ նախորդ օրը իմաց տրէր իրեն. բայց հիմա ժամանակը անցած էր:

* *

Հետեեալ օրը, երբ հէր տղուն դագաղը տունէն դուրս կը հանէին, սպորմելի մայրը խելքը զլիսէն դացած՝ իր

սենեակը ելաւ, և իր անկարող յուսահատութեան մէջ, արին արցունք լալով՝ առաւ պօան, բզիկ բզիկ ըրաւ ու փողոց թափեց:

Եւ մէկը չգիտցաւ թէ ի՞նչ էին այդ թրջած փետուրի կտորները, որ անձրեի պէս պատուհանէն վար կը տեղային այդ ահռելի վայրկեանին:

Սիակել



Ա մասնաւոշուու ոսպանիւ վի և այդ սկածեմ
ու տղո մեր մեր առօք առու նոյն օմարդա մայզա
մասնաւու նույն իւ մէ ու ան առութք վի և ան
մասնաւու ու ան մայզա ու ան մայզան ու արմագան
* * *

Կ'ուզէի մեռնել բնութան տօնին,
Երբ բացւած լինին վարդ ու մանուշակ,
Որ ամեն տարի, գարան օրերին
Թռչնակը վըրաս երգէր անուշակ:

Կ'ուզէի թաղւել այն լեռան լանջին,
Այն սէգ, վիթխարի սարերի միջին,
Ուր անուշահոտ կանաչների մէջ
Վըտակն է ողբում, բլրլում անվերջ:

Օր, Դայանէ Դայալեան

1902 թ. Մարտի 1-ին.
Ք Ա Գ Ա Ի:



Ա մասնաւոշուու ոսպանիւ բա մին
ու տղո մեր մեր առօք առու նոյն օմարդա մայզա
մասնաւու ու ան առութք վի և ան մասնաւու ու ան մայզան
մասնաւու ու ան մայզան ու ան մայզան ու ան մասնաւու ու ան մայզան
ԵՐԿՈՒ ՀԱԿԱՊԱՏԿԵՐ

(Երական կեանի)

Հոգւոյ անբացատրելի տրտութեան մէկ բոպէին մտայ
եկեղեցի, հոն յուսալով գտնել մտրի և հոգւոյ մելամաղձիկի
անդորրութիւնը: Եւ ստուգիւ նվ կարող է բացասել այն սառ-
սուպղեցիկ բնակարանէն անցնելով՝ ուր թերիս անբիծ և
անստեսաննելի հրեշտակներ միայն կը բնակին՝ հոգւոյ անդոր-
րութիւն ու երկիւղած գոհունակութիւն մը զգալը:

Ոհ, նոյն իսկ ամենաստոր օճրագործին բարացած կուրծ-
քը կը խոնճարի այդ սրբութեան տաճարին դիմաց:

Բայց իմ այցելած օրս անդ նշ մարդասպան կար, և ոչ
բարեպաշտ ազօթով մը. այլ՝ պաղ, մարմարեայ յատակին մէջ
տեղ գրւած սի երկար սեղանին վրայ զրւած անշուք, նսեմ
դագաղին մէջ, մեղրամումէ արձանի մը նման դալուկ, կը
հանգչէր յաւիտենական քունով մանկամարդ հարս մը միայ-
նակ: Կարծես հեղիւական ժպիտ մը զես շրթանցը վրայ կը
թոթուար... Ժպիտ մը աշխարհային ունայնութեանց ուղղւած,
ժպիտ մը մարդկային գծուծ ինքնասիրութեան ուղղւած, ժպիտ
մը, որ իր մէջը կը պարտնակէր կեանքի ամբացաւալի իրա-
կան սղբերգութեանց մէկը:

Պարզ էր իւր պատմութիւնը: Նա որբ մ'էր չափաւոր զա-
սակարգին դժբաղդ զաւակը, որ իւր տմունութեան ութե-
սարդ ամսին անողօք ճակատագիրը զայն կը մղեր մահան
սի զիրկը:

Կապոյտ երազներ, վարդապոյն յոյսերը յաւէտ կը խո-

սէին այդ մահարոյր ուրբականէն:

Օ՛հ, նոյն իւր ամենամտերիմներն հեռու հեռու կը խուսափէին դժբաղդին մահճէն, այն վարկեանէն երբ քժիշկը վճռեց թէ «նա-թոքախտ է»:

Լքուած, մոռցւած նա տառապեցաւ և մեռաւ, և աս րոպէիս նորա վերջին հրաժեշտն ալ առնելու կը վարանին կեղծ մտերիմները:

Վերջապէս տեղույն քահանան համբարայլ եկեղեցի կը մտնէ ու մոայլ դէմքով կը մօտենայ դագաղին, կը դիտէ մասնաւոր հետաքրրութեամբ թէ այդ անկոչ հիւրը մը դառկարգին կը պատկանի և... աւելի մոայլ ու անբաւական դէմքով կը հեռանայ:

Հնամկ ապա կը գան մի քանի սգակիր այր ու կին ձեռքերնին մէկ մէկ թաշքինակ ի ցայց մարդկան, որսկ երբեմն չոր աշքերնին կը սրբն։ Եւ աշ մէկի դէմքին վրայ կը տեսնեմ այն անկեղծ վշտի արտայայտութիւնը զոր սրտակից մը պարտ է ունենալ, ուրեմն նա ոչ մի կարեկցող չէ ունեցեր, բացի ամուսնէն, որ այդ անակնկալ հարւածին տակ իշրւած, ընկճւած, վլուսը բաց մազերը ցրիւ, երերուն քայլերով կը մօտենայ, մօլորուն նայւածը սեռելով նորա հիւծեալ, անհանաչ դէմքին... Նա կը հեծկլտայ դէմքը թաշքինակին մէջ ծածկած իւր անորոշ գոյնով մաշւած հագուստէն յայտնի կերկի թէ նրափիսի յետին չրաւորութեան մէջ խորասուզւած է իւր սիրելի հիւանդին պատճառաւ:

Ո՛հ, այդ իրական կեսնքի ցաւագին պատկերը մանրամասն քննեցի, և անբացատրելի թախիծը նարէն զիս պատեց...:

Վերջապէս մի քանի կցկառու աղօթքներ, մահազդ դանդի մի քանի թոյլ, երերուն զօղանչիւն... ապա փութկոտ հապճապ քայլերով դագաղը տարւեցաւ այդ սրբավայրէն, յաձնելու սե՛ որդնալից սառն փոսին...:

Ամսիրման բլ զնուշան բարձրակարգ զնուշան այս լի լրաց

...Մինչ այդ նորատին եկեղեցւոյ նեմին վերջին անգամ կանցէր պէսի իւր յաւիպենական հանգստարանը, հագիւ մի քանի վարկեան յետոյ շրեղ կառքերու երկար տողանցութիւն մը կանգ կառնուր եկեղեցւոյ գուան առաջ:

Սռաջին կիսակառքէն աշխոյժ ու թեթեսն վար սահեց մի գեղանի հարս, իւր խօսեցեալի բազկին յենած. նորա դէմքը անհուն ճառագայթում մ'էր երջանիկ ուրախ տրամադրութեան, նորա ճոխ հարսանեկան զգեստը, թանկագին փայլ-փլուն գոհարեղիները բաւական պերճախօս էին:

Նա կայտառ ժայտ ի շուրջն, յաղթական կը գիմէր եկեղեցւոյ կեղրոնը, հմն, ուր պահ մ'առաջ դժբաղդը հանգչած էր... Պահ մը ես, և ալ հարսը չէր երիէր խումբ մը ընտիր, վլարթագէմ անուշաթոյր հրաւիրելոց շրջապատէն. ո՞հ ինչ ախորժ, կենդանի շշունչով մը լեցւեցաւ այն մահասրառու մթնոլորտը. բոլորի դէմքի վրայ անխառն սրտախութիւն մը կը փայլէր:

Խենճ մարդիկ... Աշերս վեր բարձրացուցի, արդէն բոլոր զահերը կարծես դիւթական գաւազանի մը զօրութեամբ վառած էին:

Քահանայք փութով զգեստաւորեալ եցանիկ ամոլները խորան կառաջնորդէին:

Ամբողջ մի զամբիւլ հրաշագեղ ծաղկունք սփոեցին երջանիկ զոյգի անցքով, ու օրհներգութեաց վեհ և աշխոյժ ալիքները եկեղեցւոյ կամարներուն տակ տարածւեցան:

Օրհնութիւն, մաղթանը, շնորհաւորութիւն մարդարտի նման թափւեցաւ նորապսակներու վրայ:

Հանդիսի թագուհին՝ բոլորվին վարդապոյն վարձած և աւելի ապատ շարժումներով իրեն շոայլւած մեծարանքներն ու շնորհաւորութիւնները սիրուն նազանքով կընզունէր, մինոյն ժամանակ անուշագիր կիսուելով այն քնրոյշ ծաղիկները,

որոնք դատապարտւած էին իրենց մահամբ այդ հանգիսին
փայլ մը տալու:

Օ՛... ունայնութիւնն...

Կառքերու շարքը շարժւեցաւ առաջնորդելով նորատիւն
բաղկաւոր հարսը դէպի իւր ոսկէզօծ երազներու իրականա-
ցումը:

Առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը մշտուն
այս համեմատակ պահպանով ուժ առաջ նորատիւնը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը մշտուն

Զ. Ալեանաք

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը

Երազնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը
առաջնորդութիւնը ու նրան մէջութեանը ու նրան մշտունը



Այս են ենայի գլուխով մէ ոչը մնդրան քառով
մարտով ով ունե մողերան լուսով զուս և

մարտուն մայս այլով գլուխով
ունե մէ ունե մողերան լուսով միջով և

ՊԵՏԵՎԻՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԵ

(Սիրավեա) արական կանոն ունեալ
ունեալ մասն մարտ ունեալ ունեալ
Երկան պուրնուղմ՝ ձրգած իր լայն ուսերուն,
Ոտքը բոպիկ արագ արագ կը գընայ.
Աչ ձեռքն պահած մէջ պուրնուղմն ծալքերուն,
Չախովն՝ ջրդուտ շարժէ եղէզ մը հսկայ:

Աշրեմն յառած անթարիթ կէտի մ'անորոշ,
Աննուշագիր ու երազուն նա կ'անցնի
Թւի լսել իրեն ծանօթ ձայն մ'անուշ
Որ կը խօսի անտառներին հայրենի...

Եւ ավ գիտէ... ինչեր կանցնին իր մտրէն.
Երբեմն ուժգին կը սեղմէ բունն եղէզին,
Ու կ'երեի սև նայւածքին կրակէն
Դառն գաղտնիր մը թագւած կայ խորն իր կեանրին...:

Գեղեցիկ է անապատի այդ որդին
Բարձր հասակով հըպարտ նունոյ մը հանգոյն.
Խոշոր աշքերն ունին նայւածք խոր, մըթին
Որ սարսափի գող մը կուտայ րեղ իսկայն...:

Իր պուրնուղմն կէս մը բացւած ծալքերէն
Կ'եղեայ թուլս, հուժկու, մաղոտ կուրծը լայն,

Գլուռվազ մազերն զուրս են կախւեր փաթթողին
ի' անոր ճերմակ ծոպերուն հետ կը խաղան:

Խորհրդաւոր երկու նըշան աստղածե
Վըզին մօտիկ՝ աղօտ հետքեր են թօղեր.
Եւ արևէն խանձած դէմքին վրայ սի
Նոր են ծըլեր մօրւաց ցանցառ նուբը թեյեր.

Թուխ զանգուրներն հովուն տւած փայքենին
Չեռը պահած միշտ պողբնուզին ծալըն տակ,
Նըման այն կոյս անտառներու առփածինալից
Կրծտէ կատղած մերթ ակռաներն պալիտարչ. : զան
Անդպատ մէջ տուզու զն ճանար մզուն զն
Հային զն բնա* * եցաւ արարչ միասնա

Ժամանակ մը չեռացած դեւ երկրէն
Կ'ապրէր անհոգ այդ բնութեան բէլ տըլան,
Հըպարտ ու բազ սիրւած երկրին բաշերէն
Երեն ցեղին փառը, պարձանքն էր իր տան...:

Լարած աղեղն, ձգած կապարճն ոսերուն,
....իր նըժոյզին վրայ ճերմակ կը սուբար
Պատերազմի վեհ աստուածի մը հանդայն
Եւ անտառաց քաջին յաղթած կր դամնար...:

Եւ իր երկրին զեղուհիներն ելազուն բարձր կը նայէին իրենի լոռնաւ աշքերով, Կոյս սրտերնէն կ'ենէր հառաշ մը թագուն երբ կ'երեէր ան իր կրրակ նայւածքով....

Բայց ինք կանցնէր, արբայի մը պէս հըպարտ Անտարբեր այդ հորիներու պչառնեին.

Ճերմակ ճիռն վրայ վլսեմ ու հանդարտ
Կերպէր մեղմիւ տրատում երգերն իր երկրին...:

Եկաւ օր մը հեշեց իրեն ալ ժամը...
Մարմինն ամբողջ խոր սարսուռով մը դողաց...
Երկրին այրող արենուն պէս ազդիկ մը
իսկ նրա սիրած մարդը շարունակում է վայելել հասարակու-
թեան յարգանքը և մինչև անզամ ումեն մի նոր յաղթութիւն
բարձրացնում է նրան շատերի տշրում։ Ո՞ւր է արդարու-

թիւնը, ինչու դուք պէտք է վայելէք կեանքի բոլոր առաւելութիւնները։ Մինչի երբ մենք պէտք է ծառայենք Զեր հաճոյրին, մինչի երբ դուք պէտք խախաէք մեր մարդկային արժանաւորութիւնը։ Թող ես լինեմ առաջինը, որ բողոքում է այդ ամօթալի ստրկութեան գէմ։ Ես հեռանում եմ ձեր տանից, ուր ամեն ինչ յիշեցնում է ինձ իմ իսյատառակութիւնը։ Ես այլ հս չեմ կարող տանել . . . շհմ կարող տանել . . .

Զարուհի

Զարուհին Սէրգէյ Իվանիչի կինն էր։

Երկու թէ երեք տարի էր նրանց ամուսնութիւնը և հազիւ 21-22 տարեկան լինէր Զարուհին։

Նա մի քանի տարի առաջ, երբ զիմնազիան նոր էր տարտել, ուզեց զնալ ուսումը շարունակելու, բայց Սէրգէյ Իվանիչը տեսաւ ու հաւանեց։

Այդ միջոցներին օրիորդի հօր առետրական գործերը շատ վատ էին։ Սէրգէյ Իվանիչը ստրի կանգնեցրեց հօրը և խընդրեց աղջկայ ձեռքը։

Իր ժամանակին շատ խօսել են նրանց ամուսնութեան մասին։ Թէ հայրը աղջկանը ծախեց, զահել 18—19 տարեկան ուսումն առած աղջկանը 45—50 տարեկան տղէտ վաճառականին . . . թէ մեր զարգացած օրիորդները չզիտեն խարութիւն զնել փեսացուների մէջ, կարելի է փողով զնել նրանց սէրը . . . բայց այդ ասէկօսները անցել եին, նրանք ապրում էին միասին, և ահա, յանկարծ . . .

—Այս ինչ է նշանակում, դարձայ ես Սէրգէյ Իվանիչին, նամակը վերջացնելուց յիտոյ։

Նա տարակուսած ուսերը վեր քաշեց ու չէր խմանում ինչ առէ։ Ի՞նչ կարող է առած լինել Սէրգէյ Իվանիչը, մտածում էի ես։ Նա, ինչպէս բոլոր պատւառը բաղաբացիք, այս, կլուրում թուզի է խոպում դիշերները։

Բայց կնոջը ի՞նչ . . . նա շոայլ ու ցոփ զահելութիւն է ունեցել . . . այս էլ անսովոր բան չէ։ Նա կնոջը կտրել էր ժամանակին ինտելիգենտներից շրջաններից, որոնց միշտ ծաղրում էր . . . այդ էլ շատ հառականալի է մի պատւառը վաճառականի համար և վերջապէս կինը կարող էր իր տանը լողալ Սէրգէյ Իվանիչի հարստութեան մէջ . . .

Բայց նամակը գրած էր առաջն և ես կարգում էի վերցին տաղերը—«Ես չեմ կարող տանել . . .»։



Մ Ի Ր Ա Պ Ե . . .

Հեռնւ, հեռնւ մի բանտում նստած էր ծերունի բանտարկալը: Նորա զունատ, նիհար մարմինը կորացած էր, խոկ աղիզարդ մազերը անկարդ խճիճ ներով թափւել էին ուսերին: Բայց նա զարձեալ զվթայակապ էր, զարձեալ նեղիկ լուսամուտի երկաթ ձողերը ճնշում էին նորա բազմատանջ հոգին...

Զատիկ զիշեր . . . երկնիքը պարդ էր և առազազարդ զեփիւով թեթե սօսափիւնը շոյեց երկաթի ձողերը, ներս ընկաւ լուսամուտից, լիզեց հաստ զիթոն ու սկսեց խազալ ճերմակ մազերի հետ: Բանտարկեալի որտից մի խոր ախ թռատ, նորա կորացած մարմնովը անցաւ կենսալից ցնցում: տկար սիրտը առոյգ թռափաց նեղ կրծքում, ուզեց զուրս թռչել, գնալ . . . հեռնւ, հեռնւ . . .

«Լսիր պահապան, . . . ձայն տւեց ծերունին զողդուն, բարձրացրու շզթաս, մօտեցրու ինձ լուսամուտին . . . հոգիս ուզում է մի բոպէ . . . ծծել ազատ օդը, տչրերս—մի բոպէ նայել անծայր պայծառ երկնիքին, այն հեռնւ երեացող հապարտ լեռներին, նայել, երկար, նայել ու յիշել մոռացած անցեալս: Թնդ մեկ անդտոմ էլ մազերիս հետ արձակ խսզայ նուրբ զեփիւով, մեկ անդտամ էլ նայեմ այն անուշ զաշտերին, նայեմ ու յիշեմ հայրենիքու: Ես ընութեան զաւակ էի . . . կուրծքս ամրացրիլ է առողջ լիոնային քամին, ինձ միծացրել են այն հարազատ զաշտերը . . . բարձրացրու շզթաս, տուր հոգուու մարել ազատութիւն մտորելով»:

Լսեց ծերունին. նորա մարտծ տչրերը վառւեցին պա-

տանեկական կրակով, նիհար կուրծքը ուժգին փոթորկեց բուռն զգացմունքի ճնշումից. նա կլանում էր հայեացըով երկացող աստղագարդ երկնիքը, հոգով թռչում էր դէպի արդատ, անուշ հեռուն . . . զգթայի ձայնը խառնեցաւ բանտարկեալի հրճալից աղազակի հետ; ծերունուն մօտեցրին լուսամուտին:

Զգացմունքի բուռն, երջանիկ վրդովմունքով նա սեղմեց երկաթը իր թոյլ գալուկ ձեռքերով, երեսը դէմ արեց քամուն, բաշեց, երկար բաշեց իր մէջ անուշ օդը, քաշեց . . . և թերելով սպիտակ գլամուք յուզւած կրծքին, խուլ, վշտարիկ հեկեկաց . . .

Ու յիշեց նա իր անցեալը, հեռնւ մոռացւած անցեալը... յիշեց մի ուրիշ այդպիսի սուրբ զիշեր . . . նա ուզում էր մի բոպէ, մի բոպէ միայն թռչել զիալ այս վանդակից, թալուել հոտաւէտ ծաղիկների մէջ, մի բոպէ զգալ իրան տպատ, տպատ . . . հանգչել, ննջել յախտեան բնութեան շրեդ զրկում...

Զեփիւով նուրբ շոյում իր ծերունու մազերը, նորա զունատ մաշւած երեսը . . . շոյում էր նորա տկար հոգին. սիրտը ուզում էր մարել յենւած երկաթին, անուշ հեռնւ տենչալով . . .

Արցունիքի խոշոր կաթիները զլորուում էին նորա զունատ այտերից . . . մի բոպէ բանտարկեալը մոռացաւ շրդան և ամներ . . . թերեց զլուխը երկաթին ու նիրհեց... լեռն ա տեսաւ նա իր հայրենիքը, տեսաւ անուշ դաշտը և հարազատներին: Բախտալից ժպիտ խազաց նորա հրճալից երեսին. նա զգաց մէկի ձեռքերի փափուկ շոյումը, զգաց ճակատին մէկի քնըոյշ համբոյը ու ձեռքը մեկնեց երկաթի վանդամէկի քնըոյշ համբոյը լուսատու երեսիթը . . . որը ժպտամ էր նորան ու անդերջ կանչում իր մօտ . . .

«Քրիստոս յարեաւ . . . շնչաց մօտիկ նորա տկան չին մի հեղ ձայն . . .»

Այդ ձայնիը . . . զորտ մէջ բանտարկեալը լսեց իր մօր

₁₂

բարի ձայնը. մի ուրիշի . . . սիրալից սրտի հնչիմնը:
ծերտնին ցնցուեց. նա մի բռտէ լայն բացեց մուլժ աշ-
քերը ու նայեց շուրջը մարած հայեացքով. ոչ ոք չկար . . .
միայն քամին անսիրջ և նուրբ խաղում էր իր մազերի հետ:
«Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ . . . դարձեալ
լուեցաւ զիփիւոփի քնիոյշ սոսափիւնի հետ, նոյն հեշտալից,
նոյն հեզ ձայնը, վերջը կամաց կամաց մարելավ խառնւեցաւ,
չքացաւ անփորի մթնոլորտի մէջ:

Բանտարկեալը թերւեց, կորացաւ վանդակից. նա ուզում
էր մէկ անգամ էլ լսել այն հարազատ ձայնը, մէկ անգամ
էլ դգալ գուրալի շոյումը . . . աւազ, երեսյթը անցաւ, թր-
ուռն զնաց, տանելով իր հետ ծերտնու յուզւած հոգին, նո-
րա քազգը ցնորքները . . .

«Օքնեալ է Քրիստոսի յարութիւնը, չչնչացին վերջին
անգամ նորա գժգոյն շրթերը . . .

Չչնչացին . . . ու անհման ժպիտ խաղաց նորա նիհար
երեսին. մի բռտէ փոթորկեց տկար կուրծքը, վերջը թերւեց
արեգարդ գլուխը երկաթին, ձեռքերը տարածւեցին վանդա-
կից գէպի հեռուն, գէպի անուշ երեսյթը . . . ու մնացին
անշարժ . . .

Անդորր էր տմենը. քամին մէկ անգամ էլ սիրալից քըն-
իոյշ խաղաց ճերմակ մազերի հետ, մէկ անգամ էլ շոյեց եր-
կաժմը... ու թուաւ գնաց գէպի հեռուն, կանանչ դաշտերը...

Օր. Դայիանէ Կայիալեան



ՄԻ ՊԱՏՄՈՅԹԻՒՆ ՈՐ ԵՐԲԷՔ ԵՂԱՇ ԶԵ

(Թարգմանութիւն ռուսերենից)

Կար չկար մի մեծատուն, չգիտեմ իշխան էր թէ կոմս,
թէ մի յայտնի զինուորակոն էր . . . Գիտեմ միայն, որ աշ-
խարհիս մեծատմեծներիցն էր: Եւ նա տէր էր ահազին հարո-
տութեան:

Չափից գուրս երջանիկ մարդ էր նա: Ամեն բանում
նա բախտաւոր էր: Հարիւրաւոր ծառաներ շրջապատում էին
նրան և նրա ամեն մի թռուցիկ ցանկութիւնը աշխատում իս-
կոյն կատարել: Ճանաչում էին նրան ամենքը՝ ծեր թէ երե-
խայ, իշխան թէ ուսմիկ, և հէնց որ նրան փողոցում տեսնում
էին, բոլորը անմիջապէս գլխարկները վերցնում և նրա առաջ
խորը գլուխ էին խօնհարում: Եւ ինչն համար, յայտնի չէ:
Գուցէ նրա համար, որ նա շատ առատաձեռն մարդ էր և իւր
անհուն հարստութիւնից ազքատներին մասն ու բաժին էր
հանում: Ամենեին ոչ, նա զրա մասին բոլորովին չը էլ մը-
տածում:

Գուցէ մինչև անգամ նա չգիտէր, որ աշխարհում ազքատ-
ներ կան: Եւ որտեղից պէտք է իմանար: Նա նրանց չէր
տեսնում: Վպրում էր միշտ իւր շքեզ ու բարձր պալատներում,
որտեղից աշխարհիս թշւառութիւնը տմենեին չի երկում: Իսկ
երբ նա երկում էր փողոցում, ծառաների ու արբանետների
ամբոխը խիտ առ խիտ պատում էր նրա շարչը և ծածկում
նրա աշրից աշխարհիս խէրն ու շառը:

Բայց և այնպէս բոլորը նրան մեծարում էին և տմեն

լարմուր գէպքում իրանց յարգանը մատուցանում: Դուցէ այդ նրա համար էին անում, որ նա մեծ ոյժ ու կարողութիւն ունէր, և եթէ սպինար կարող էր միշտ մեծամեծ բարիներ անել: Մարդիկ խոնարհում են և այն բարիքի առաջ, որ դեռ չի կատարւած: Ամեն բանում նա բախտաւոր էր, իսկ ընտանիկան կեանքում նրա բախտը այն տատիճան լիակատար էր, որ մի ուրիշ այդպիսի երջանիկ մարդ գժւար էր գտնել աշխարհիս երեսին: Նրա կինը մի կատարեալ հրեշտակ էր և այս սիրում իր ամուսնուն, որ համարեա զերի էր նրա առաջ, իսկ նրա միակ աղջիկը աննման էր իւր գեղեցկութեամբ, խելացի էր և աղիիւ հոգու տէր, և հայրը սիրում էր նրան, ինչպէս մի սրբութիւն: Թէ հայրը և թէ բոլորը, որ շրջապտում էին օրիորդին, աշխատում էին կատարել նրա և այն ցանկաթիւնները, որ նա չէր արայայտում:

Եւ այնքան նա սիրում էր իւր աղջկանը, որ նրանից դուրս ոչինչ չէր տեսնում ու չէր ընդունում, որ աշխարհում կարող է մի աւելի կատարեալ էակ լինել: Մտածում էր միշտ միայն իւր աղջկայ մասին, բոլոր հոգուները միայն նրա համար էին և նրա միակ ցանկութիւնն էր, որ ամբողջ աշտարհը նոյնպէս զլուխ խոնարհի իւր աղջկայ առաջ:

Եւ զրա համար տւեց իւր աղջկանը լաւ կրթութիւն, սովորեց նրան շատ գեղարւեստներ ու զիտութիւններ և տարաւ նրան աշխարհ ցոյց տալու: Երկար տարիներ նրանը ճանապարհորդում էին զանազան կողմեր, ամեն տեղ նրանը հանդիպում էին ողջոյնով և ամեն տեղ նա թանկադին հիւր էր:

Ճանապարհորդում էր նա երկրից երկիր ու ցոյց էր տալիս իւր սիրելի աղջկանը, թէ ինչպէս են ապրում մարդիկ, ինչ տատիճանի է հասել մարդկային խելքի ճարպիկութիւնը, ցոյց էր տալիս նրան մարդկային հանճարի արտադրած հրաշալիքները, զարգացնում էր նրա ընդունակութիւնները և նա այնքան կատարելագործւեց զիտութեան արհետների մէջ, որ ազատ կարող էր մրցել աշխարհիս զիտունների ու իմաստունների հետ:

Եւ նա մտածում էր, հիմա լիբաւի որ ես աշխարհում ամերակատաւոր մարդն եմ, սրովհետև բացի իմ ահազին հարստութիւնից նաև մի այսպիսի աղջիկ ունեմ:

Մի անգամ, երբ նա իւր ընտանիքով և հարիւրաւոր ծառաներով ապլում էր մի ճախ բազարում և գուցէ միայն նրա մասին էր մտածում, թէ սրտեզից որ է կպայ իւր մօտ մի արքայադն և կը խնդրէ իրանից իւր աղջկայ ձեռքը, — հէնց այդ ժամանակ մի համաճարակ ախտ ընկաւ այդ կողմերը և նրա ապրած բազարը: Դող ընկաւ նրա սիրուլ և նա հրամայեց իւր ծառաներին շատութ պատրաստութիւն տեսնել մի ուրիշ երկիր փախչելու համար, և ծառաներն արգէն ամեն ինչ կապել պատրաստել էին և պատրաստ էին ճանապարհ ընկնելու, որ նրա պաշտած աղջիկը յանկարծ հիւանդացաւ այդ ախտով:

Բախտաւոր մարդը հրամայեց ծառաներին թողնել ճանապարհի պատրաստութիւնները, հրաւիրեց իւր մօտ այն երկիրի բոլոր յայտնի բժիշկներին: Եկան, շրջապատեցին հիւանդին բժիշկները և էլ գեղ չմնաց որ չտեղին նրան, բայց աղջիկը չէր լաւանում: Այդ այնպիս մի ախտ էր, որ ում մի անգամ բռնում էր, նա էլ տեղից վեր չէր կննում:

Եւ տեսնում էր այդ գժբախտ հայրը, սաւերի պէս շրջան էր անյօյս իւր բարձր պալաներում, փիտամ էր պլիփ մազերը, ձեռքը գէպի երկինք մէկնում և խօստանում հմուտ բժիշկներին իւր հարստութեան կէսը, միայն թէ փրկեն իւր աղջկանը. իսկ աղջկայ զրութիւնը տեղի վատանում ու վատանում էր:

Իմ կարողութեան երեր բառորդը կամ նրան, ով փրկի իմ աղջկանը, ասում էր նա, բայց աղջիկը չէր լաւանում:

Ինչ ունեմ շունեմ կտամ աղջկանս փրկելու համար, պակաւմ էր նա յուսահատ, համարեա խելագարութեան հասած, բայց ոչինչ չէր օգնում:

Բժիշկները տեղի էին կտսում զլիները, անցաւ մէկ օր, երկու օր, երեք օր, պաշտած աղջիկը հօգին աւանդեց:

Այն ժամանակ ամենաբախտաւոր մարդը դարձաւ աշխարհում ամենաանբախտ մարդը: Մի գիշերւայ մէջ սովորակեցին նրա մետարսէ մազերը, որոնց մէջ առաջ մի հատիկ լսպիտակ մաղ չկար: Մի գիշերւայ մէջ երեսը թոշնեց ու ծածկեց ծերութեան ինձիռներով և մինչեւ այդ օրը առողջ ուժեղ և աշխայժ մարդը յանկարծ դարձաւ թոյլ ու զառամեալ ծերունի:

Թափեց նա իւր աղջկանը: Իզուր էին աշխատում բարեկամներն ու արքանեակիները նրա համար զանազան գւարճութիւններ հնարել: Իզուր էին անցնում նրանց բոլոր ջանքերը այնպիսի մի բան հնարել, որ նա դեռ տեսած չլինէր և որը կարելի էր ձեռք բերել ահագին զումարներ ծախսելով: Ոչ մի բան նրա աշքին չէր երիւմ:

Այդ բոլորը աւելորդ բաներ են, ասում էր նա, ես տեսնում եմ, որ բախտ ասած բան, չկայ աշխարհում:

Եւ նա խոր մտածմունքի մէջ ընկաւ, ոչ ոքի հետ չէր խօսում և կարծես մի բան կատարում էր նրա սրում: Բայց ոչ բնաւ չկիտէր թէ ի՞նչ:

Անցաւ բաւական ժամանակ: Մի անգամ նա հրամայեց իւր ծառաներին ճանապարհի պատրաստութիւն տեսնել և ամեն ինչ պատրաստ էր, նա ուզերւեց ոչ թէ դէպի նորոր, դեռ շտեսած երկիրներ, նորանոր հրաշալիքներով գւարճանալու համար, այլ դէպի իւր հայրենի աշխարհը:

Եկաւ նա այնտեղ և բնակութիւն հաստատեց իւր ճոխ ու բարձր ապարանքում, կանչեց իւր մօտ իւր մտերիմ սենեկաղեաին և ասաց:

—Խաւարել է օրս, տրում է հոգիս: Ուզում եմ մի բարի զործով սիրառ թեթեացնել: Մինչեւ այժմ կեանքումս մի բարի զործ արած չկամ: Այդ միայն ես նորելու զգացի, երբ գլխովս սարսափելի գժբախտութիւն անցաւ: Ես ահագին կարողութիւն ունիմ, որի մի խոշոր մասը ուզում եմ յատկացնել բարի զործերի: Բայց ես երբէք մարդկանց հետ չեմ տպրել, որ ի-

մանամ նրանց կարիքը: Ես չդիտեմ ի՞նչտեսակ կարօտութիւններ կան աշխարհիա երեսին և մը բարի զործը կլինի ամենաարարի զործը: Ես ուզում եմ այնպիսի մի բարի զործ կատարած լինել, որից աւելի բարի զործ չլինի աշխարհում:

Երկար մտածեց սենեկաղեար, որովհետի հեշտ բան չէր այդ հարցին պատասխաները, բայց այդ պէտք էր լաւ ու տեղին պատասխանել, որովհետի հարցնողը աշխարհիս մեծամեծներիցն էր: Նրա զլխով անցնում էին հաղար ու մի բարի զործեր:

Տէր, ասաց նա, կայ մեր բաղարսւմ մի տուն, ուր չնշին վարձով գիշերն ապաստան են գտնում անտում թափառաշրջիկներն ու աղքատները, բայց այդ տունը փոքր է ու անյարմար և խեղճերի համար այնտեղ շատ նեկւածք է: Նրանց թիւը շատ է, իսկ տեղը բիշ: Չեր յատկացրած գումարով կարելի կլինի մի բանի այզպիսի աներ կառաւցանել և այդպիսով այդ խեղճերի վիճակը թեթեացնել:

—2է, ասաց հարուստը, ես չեմ ուզում թափառաշրջիկներին ու աղքատներին օգնած լինել, զրանք ծոյլ, անպիտան մարդիկ են, որ չեն ցանկանում աշխատել: Ես ուզում եմ մի խոկական բարի զործ կատարած լինել, այնպիսի բարի զործ, որից աւելի բարի զործ չլինի:

Սենեկաղեար նորից խորասուլեց մաքերի մէջ:

—Ճատ կան բաղարում ծեր ու պառաւ մարդիկ, որոնք չեն կարող իրանց աշխատանքով ապրել, ասաց նա, կարելի է, նրանց համար մի ապաստանարան հիմնել: Այդ ապաստարանում նունի կանցնեն իրանց կեանքի վերջին օրերը և կօբնին ձեր անունը:

—2է, ասաց հարուստը, ծերիքն ու պառաւերը պէտք է իրանց մահան մասին մտածեն: Պէտք է օգնել այնպիսի մարդկանց, որոնք զեռ են սկսում ապրել և որոնց առաջը կայ կռւի ու աշխատանքի երկար ճանապարհ: 2է, այդ ասուծը էլ ամենաարարի զործը չէ:

Դարձեալ սենեկապետը մտած մունքի մէջ ընկաւ։
—Անչափ երեխաներ թափառում են փողոցներում կի-
սամերկ, գողոցուն ու սոված։ Նրանց ծնողները ահալիտան
մարդիկ են և բոլորովին երեսից զցել են իրանց երեխաներին։
Թափառում են խեղճերը անտէր, անզաշտպան, գուրիկ ապաս-
տարանից ու սիրող սրտից, որ խղճար ու խնամէր նրանց։
Վատ չէր լինի ժողովել այդ երեխաներին, հաց ու օթեան
տալ նրանց և մի որեւէ արհետ սովորեցնել, մի խօսքով նը-
րանցից լաւ մարդիկ պատրաստել։

—Ոչ, ոչ, ասաց հարուստը, այդ էլ մի բան չէ։ Եթէ
մենք այդ երեխաներին հաւաքենք, այն ժամանակ ամեն ծը-
նող, որ կես ինքն է խնամում իւր երեխային, ինքը իւր
ձեռքով հարազատ երեխային կ'չպոտի փողոց, յուսպով որ
իր փոխարէն ուրիշները կը խնամեն, և մենք փոխանակ բա-
րիք՝ շարիք արած կլինենք։ Տէ այդ էլ ամենաբարի գործը չէ։

Իսկ հարուստի այդպէս խօսելու պատճառն այն էր, որ
ինքը երբէք չէր տեսել ոչ թափառաշրջիկ, ոչ աղքատ, ոչ աշխա-
տելու կարողութիւնից զուրկ ծերունիներ ու պառաներ և ոչ
տանէր ու անօդնական երեխաներ, մի խօսքով այն բոլոր զըժ-
բախտներին, որոնց մասին առում էր սենեկապետը։

Հեռացաւ նրանից սենեկապետը առանց կարողանալու
մասնացաց անեւ նրան մի որիէ բարի գործի վրայ։ Իսկ նա
մնաց մենակ և ամբողջ զիշերը ըրջում էր մի սենեկապից միւ-
սը իւր բարձր ապարանքում և շարունակ մտածում էր, ինչ-
պիսի մի բարի գործ կատարի, որ իւր յատկացրած զումարը
ամենաօգտակար եղանակով զործադրած լինի։

Ման էր զալիս նա, մտածում էր ու մտածում, բայց
դրանից ոչինչ չէր գուրս զալիս, որտիհետեւ նա իւր կեան-
քում բացի բախտաւորներից ուրիշ տեսակ մարդ չէր տեսել
և բացի զան և ուրախ կենցաղից ուրիշ տեսակ կեանք երբէք
չէր վարել։ Անցաւ կէս զիշերը, տան մէջ լուսւթիւն էր տի-
րում, փողոցի ազմուկը նոյնպէս դատարել էր, միայն այնտեղ

զրուիր, բուք ու բորանի վզզոցն էր լուսւմ, և մերժ ընդ մերժ
քամին, բարձրացնելով ձիւը հասցնում ու զարկում էր նրա
պալատի բարձր պատուհաններին։

Եւ յանկարծ նա կանգ առաւ սենեկի մէջտեղը։ Նրան
թւաց որպէս թէ դռան ճեղքից, (որովհետեւ բոլոր գաները
փակ էին) ներս մտաւ մի անծանօթ մարդ, բարձրահասակ
ու վայելչակազմ, մեծ ու փառահեղ մօրուքով, հրեշտակի նման
փայլուն երեսով։ Ներս մտաւ նա, կանգ առաւ ու երկար նա-
յց նրան մեծ ու պայծառ աշքերով։

—Ի՞նչ ես ուզում և ով ես զու, հարցրեց հարուստը։

—Ով եմ ես, լաւ նայիր և կտեսնեո, ով եմ ես, պա-
տասխանեց այդ շողզողուն տեսիլը մեզ ու բաղցր ձայնով։

—Բայց ինչու ես եկել, ինչ ես ուզում։

—Եկել եմ քեզ ցոյց տալու թէ որն է ամենաբարի զոր-
ծը։ Ուզում ես զալ իմ յետեից։

—Ախ, ուզում եմ, ուզում իմ տանջւած հոգու բոլոր
զօրութեամբ։

—Ե'կ իմ յետեից։

Եւ նորա զնացին։ Ոչ որ նրանց առաջ զաները բաց շա-
րեց, ոչ որ նրանց հանգերձ շմատուցեց։ Բոլոր ծառաները
ընած էին, նրանք գուրս եկան փողոց և սարսափելի ցրտի
և բրի մէջ նա իւրան այնպէս տար էր զգում, ինչպէս ամառը։

—Ուր զնամ, յետեիցս արի և ինչ որ ցոյց տամ, ու-
շադրութեամբ նայիր։

Եւ նա զնաց։ Անցնում են ահա բազարի լայն փողոց-
ներով, բայց այնտեղ նրանք կանգ չէին առնում, Ահա բարձր
ու զիղեցիկ տներ, մեծ ու պայծառ լուսաւորւած պատու-
հաններով, այդտեղ, այդ տներում, փարթամութեան ու ճո-
խութեան մէջ՝ պճնւած մարդիկ ու կանայք զւարճանում են
կեր ու խումով։ Նրանք շտապ շտապ անցան այդ տների
կողքով։

Բայց ահա բազարը վերջանում է, և ապահովական լոյսը

աւելի ու աւելի ակօտ է գառնում: Այդ ազօտ լոյսով լուսաւորում են խղճակ ու խարխով տնակներ առանց կանոնաւոր պատուհանների ու ավագինների, բամին վզզալով մի կողմից մտնում, միւս կողմից գուրս է գալիս այդ տնակների միջով: Նրանք ներս են մոնում և նրանց առաջը բացւում է զարհուրհելի աղքատութեան տեսարան: Մարդիր կուչ են եկել ցնցոտիների մէջ ցրտից ու խոնաւութիւնից պաշտպանուելու համար: Պատերի ու յատակի վրայ երեսում են խոնաւութեան շարագուշակ հետքեր: Մարդկանց երեսները արտայայտում են քաղց և ամեն տեսակ գրկանքներ:

— Տեսնամ ես այս մարդկանց, հարցնում է լուսաւոր տեսիլը:

— Այս, տեսնում եմ:

— Միրտդ ի՞նչ է զգում:

— Միրտս սաստիկ ցաւից այբում է:

— Կամինում ես խմանալ, ովքեր են որանք և ի՞նչպէս են այս գառն աղքատութեան հասել:

— Ե՞ս, ինչ կարիք կայ խմանալ: Բաւական է, որ զրանք այգպէս գծրախտ են և զրանց գծրախտութիւնը խորը խցուում է իմ սիրաբ:

— Ուրեմն օպնիք նրանց:

Նա հանեց մի բուռը ոսկի և տւեց նրանց: Նրանք առաջ գնացին: Մուժ ու ձիւնապատ հրապարակում, ուր սառը քամին փշում էր ամեն կողմից, ցրտից զողոզացազ կիսամերկ երեխաներ կուչ կուչ էին եկել այս ու այն անկիւնում, որ կարողանան էիթ մի փարք ցրտից պաշտպանուի: Պատառուած հագուստով թափառականներն ու մուրացկանները կուչ էին գալիս գուման տակերին, օպաւելով պահպանների քնից: Նրանց երեսին նայողը պարզ կտեսնէր, որ այդ մարդիկ ինչի ասես ընդունակ են՝ և կողութեան, և կողութեան, և սպանութեան, միայն թէ կարելի լինի ճարել մի տաք անկիւն ցրտից պատսպարւելու համար, տաք շոր իրանց

ցրտածեծ մարմինը տաքացնելու համար և մի կտոր շոր հաց իրանց բաղցը հագեցնելու համար:

— Տեսնամ ես այս մարդկանց, հարցնում է գարձեալ տեսիլը:

— Տեսնում եմ:

— Միրտդ ի՞նչ է զգում:

— Կտրատուում է ցաւից:

— Ուզնամ ես խմանալ, թէ ինչպէս են զրանք այդ օրն իմիկի: Վախենամ ես արդեօք, որ քո օգնութիւնը նրանց աւելի կվատացնի և զու օգնելով նրանց՝ ամենաբարի զործը կտրած չես լինի:

— Զէ, չէ, ես ժամանակ չունեմ զրա մասին մտածելու: Ես չեմ կարող գտառութիւններով զրագել, երբ տեսնում եմ մարդկային անհուն վիշտը:

— Օգնիք նրանց:

Մի բուռը ոսկի ես նա հանեց ու տւեց այդ խեղճերին, նրանք առաջ գնացին: Լուսաւոր տեսիլը ցոյց էր տալիս նրան մուլթ և խոնաւ գետնափորեր, ուր ապաստան են զլոնամ սոված ու աշխատելու անընդունակ զարձած ծերունիներ ու պառաւներ: Ծանք և բազմաչարչար է եղել նրանց կեանիքը և շատ չէր մնում նրանց տանել իրանց կեանիքի բեռը: Չատ թանգ էր նստել այդ մարդկանց վրայ այն չնշին բախտաւորութիւնը, որ նրանք ճեռք էին բերել կատաղի մարառումից յիտոյ:

Իսկապէս կեանիքը նրանց աշրում այլիս ոչ մի զին պետք է չունենար: Կարելի էր կարծել, որ այդ մարդիկ ամենից շատ Աստծոց պէտք է ինքըէին մահ, որ վերջ զնէր նրանց դառն ու անվերջ տանջանքներին:

Բայց ոչ, զիու յոյս և կեանիքի կարօտ էր փայլում նրանց աշքերի մէջ: Նրանց աղերսախառն հայեացրին նայողը պարզ կտեսնէր, որ նրանց միակ իդձը, միակ փափազն այն էր, որ կարողանան գէթ մի օր, մի ժամ ևս աւելի ապրել: Մեկնում

Էին նրանք իրանց զողոզուն ձեռքերը և պղամագին խընդրում մի տար անկիւն և մի կտօր չոր հաց:

—Իոկ այս մարդկանց տեսնմամ ես, հարցրեց լարձեալ լուսաւոր տեսլիքը:

—Այս, հառաշելով ասաց հարուստը:

—Միրտ քեզ ի՞նչ է ասում:

—Մրտից արին է կաթում:

—Չես մտածում արդեօր, որ այլս անօպուտ է օվնել այդպիսի բայրայւագ արարածների, որ նրանք արդէն բաւական ապրել են և այժմ պէտք է միայն մահւան մտածեն:

—Ո՛չ, ո՛չ, նրանք ցանկանում են ապրել և այդ բաւական է որ նրանց օվնեն:

—Օւրեմն օվնիր նրանց:

Նա լիածեւն նրանց օվնութիւն տւեց:

—Այժմ հաշւիր, զու որքան օվնութիւն տւեցիր քո տեսած խեղճերին:

—Հատ ու շատ աւելի, բան որքան ես նշանակել էի օվնութեան համար: Ես իմ կարողութեան մի երրորդ մասը արդէն ծախսել եմ:


—Իսկ եթէ զու ուզինայիր օվնել այն բոլորին, որ օվնութեան կարօտ են, բա հարստութիւնից հազար անզամ տւելի մեծ հարստութիւն չեր բաւականացնի: Դնա և թող այսուհետեւ խաղաղի քո հսկին: Դու այժմ զիտես, թէ որն է ամենաբարի գործը և որտեղ պէտք է որտեղ:

—Ճշմարիտ է, ես այժմ զիտեմ: Ես այժմ շատ լաւ զիտեմ, որ ամենաբարի գործն այն է, որ մարդ օվնի խեղճերին ու թշւառներին առանց հարցնելու թէ ինչն և ինչպէս են նրանք ընկել խեղճութեան ու թշւառութեան մէջ: Ես այժմ զիտեմ նոյնպէս բարի գործ կատարելու տեղը: Դրա համար ցած պէտք է իջնել անզիտութեան բարձունքից, ուր ինձ բազմեցրել էր իմ բախտաւորութիւնը, և տեսնել լիրական կհանքը: Երբ իմ սենեակապետը ինձ առաջարկում էր

զանազան բարի զործեր, նրանք այն ժամանակ ինձ համար լոկ դատարկ հնչիւններ էին, և ես նրանց մասին այնպէս էի դատում, կարծես խօսքը ինձ նման մարդկանց մասին շլմեր, այլ մի այլ մոլորակի վրայ ապրող բնակիչների մասին: Բայց երբ ես իմ աշբով տեսայ այդ խեղճերի խսկական կեանքը, երբ տեսայ անհուն թշւառութեան մէջ գեղերով մարդկանց, զուրկ մի անկիւնից և կարօտ մի կտօր չոր հացի, սիրտ շփմացաւ և երկար ու բարակ զատոզութիւնները մի կտզմ գրի: Եւ այդ բոլորը ես տեսայ ու զզացի քո չնորհիւ, ու պայծառ տեսլիք: Այժմ ես զիտեմ որն է ամենաբարի գործը և ուր պէտք է որտեղ նրան: Այժմ ես միշտ կորսեմ և կրտսեմ այդ գործը:

Եւ այսուհետեւ այդ՝ մի ժամանակ աշխարհին ամենաերջանիկ մարդը, իւր անձն ու կարողութիւնը նորից խեղճերի և թշւառների վիճակը թիթեացնելուն: Վերջը նրա անհուն հարստութիւնից հազիւ մնաց միայն այնքան, որ բաւականացրեց նրա անշուր թազման ծախորիր:

8. Մարիոն



ԱՂՋԿԱՅ ՅՈՒՆԻՏԵՏՐԻՑ*)

Uspn. 12.

Ո՞րքան զուր է գալիս ինձ Լերմոնտովը։ Նրա բոլոր
տիսուր երկերը ինչ որ բան են շարժում մէջո, բայց ես դիմ
համի շեմ կարողանում տալ ինքս ինձ թէ ինչ բան է այդ,
և ինչո՞ւ Լերմոնտովի տիսուր երկերը կարդալուց ես ինձ ինչ
որ օտարութի եմ զգում, ոչ խօսել եմ կարօգանում և ոչ ու-
րիչ բան կարգալ կամ որիկ, բան չինել. խելագարի պէս եմ:
Ինձ զուր է գալիս նրա բնաւորութիւնը, յատիշապէս գէպի
մարդիկն ունեցած նրա վերաբերմունքը, նրա զառնացածու-
թիւնը և այն, որ նա նման չէ բոլոր երկրայիներին։ Նա ինձ
երեսում է Կովկաս սարերից մէկի վրայ կանգնած, ձեռքերը
պարզած վերև միշտ պատրաստ երկինք թռչելու, և այդպէս
շարունակ—մինչեւ որ իրօք երկինք թռաւ։ Նա ինձ մարդկան-
ցից այնքան բարձր է երեսում, ոչ թէ որովհետեւ անմեղ է, ոչ,
այլ իր օտարութեամբ, որով նա շատ է տարրերում մարդ-
կանցից և նոյն իսկ բանաստեղծներից։

Нѣть, вы не поняли поэта,
Чего души печалиный сонъ
Вы небомъ созданы для свѣта,
Но не для свѣта созданъ онъ**)

¹³) տարեկան աղջկայ աշխատութիւն:

^{**}) Ո՛չ, դուք շնասկացաք քերթողին,
Նրա հոգու վշտապին երազը.

Այս տողերին մէջ նա առօւմ է թէ աշխարհի համար չի ստեղծվել ինը, ես հենց այս էլ եմ ուզում տաեմ. նա այնպէս օտարութիւն ու բոլորակին նման չէ մարդկանց, սրովհետեւ նա աշխարհի համար չի ստեղծվել:

«Մեր ժամանակի հերոսը» վէտօւմ նա նկարագրում է իր հոգին, թէ ինչպէս նրա բալոր լու յատկութիւնները մեռն, ինչպէս իւր հոգու կէսը դէն է ձգել և այս բոլորի մեզքին ի հարկի, փորր ժամանակ նրան շրջապատովիների վրայ է ընելիում։ Պրա համար էլ նա այնքան զառնացած է, բարոր մարդկանցից, զրա համար էլ այնքան օտարութի է, ահա նէնց ալդ օտարութիւնն է, որ այնքան զուր է վալիս ինձ և այնպիսի սոսկակի տպաւորութիւն թագիում ինձ վրայ։

Uwun. 27.

Երեկ վերջացրի Նաղսոնի յուշատերը և կարգացի բանառելութիւնները. նա ինձ շատ գուր է, զալիս, բայց և այնպէս Լերմոնտովը չ'էնծ է: Միթե կարող է, ով և է փոխարինել Լերմոնտովին իմ աշքում: Առաջ՝ բանի գեռ բոլորովին ծանօթ չէի Նաղսոնի երկերին, վարդուհին, որ նրա երկրպագուն է, միշտ ասում էր ինձ՝ թէ երբ կարգամ Նաղսոնի զրածքները, այն ժամանակ նա առաջին տեղը կը բռնի ինձ գուր եկող հեղինակների շարքում. իսկ ես հաւատացնում էի, որ ոչ ոք չի կարող փոխարինել Լերմոնտովին: Այդպէս էլ եղաւ:

Հիմի ուղարմ եմ զրեմ թէ ինչով են իրար նման Լերմոնտովը ու Նալբանդը: Նրանք իրար նման են ինչպէս և բոլոր բանաստեղծները, իրանց ձգտումներով գէպի ճշմարիթը, մաքուրը, անկեղծը, գէպի վեհ ուրին ու վեհ զգացմունքները: Եսկ իրարից տարբերւում են իրանց ընաւորութեամբ ու իրանց հոգով: Լերմոնտովը շար ընաւորութիւն ունի թէի նախանից ըիշ է տանջւել, շար է, որովհետեւ մարդիկ այնքան են փշա-

Երկինքը ձեղ աշխարհի համար է ստեղծել,
Բայց նա աշխարհի համար չէր ստեղծւած:

ցել, որ չեն հասկանում նրա հոգին, նրա ձգտումները, նրա վեհ զգացմունքները, որովհետև ծիծաղում են սիրոյ վրայ և այդ մարուր, բարձր, սուրբ զգացմունքը գիմնազական անւանում որովհետև նրա բոլոր լաւ յատկաւթիւնները կորել են մանուկ ժամանակ, և մեղաւոր են այդ բանում ի հարկէ նըրան շրջապատող մարդիկ։ Ահա այդ պատճառով նա զառնացաւ, ամփոփեց ինքնի իր մէջ, և ապրում էր առանց վաղան մասին հոգալու. ինչ լինում է թող լինի. Նալունն աւելի բարի բնաւորաւթիւն ունի. Նա մի մեզմ, բնքոյշ, մաքուր ու սրտացաւ հոգի ունի և բոլորսին շի դառնացած մարդկանց դէմ, թէ ե սրբան շատ է տանջւիլ իր 24 տարւայ կարճ գուլութեան ընթացքում։

ՕՐ. Ե. Հ.



ՎԱՐԴՆ ՈՒ ՄԱՆՈՒԹԱԿԸ

Ամենը ընել էին. Քնել էր երկիրը, քնել էին մարդիկ, ընել էին և զազաններն ու թաշունները. Ոչ ոք չը նկատեց, թէ ինչպէս հինաւորց անտառի ետեից գուրս եկաւ շողազարդ լուսինը և ամեն ինչ ողողեց իր արծաթափայլ լուսով. Լճակի գիմացը երկնակամարով լողալու ժամանակ նա զմայրեց՝ հանդարտ նիրող զրի մէջ արտացոլող իր պատկերը տեսնելով. ապա բարձրացաւ պարտիզի գիմացը և երկար ներշնչում էր ծաղկած շեփորուկի, յառմիկի ու վարդի հրաշագեղ բուրմունքը . . .

Որբան էլ լուսինը կամաց էր լոգում կապոյտ երկնակամարի վրայ, բայց և այնպէս նրա բնքոյշ լոյսը զարթեցրեց սոխակին. Սոխակը սկսեց երգել; Նա երկար երգում էր. և այնքան հաճելի ու սրտագին, որ լուսինն ու աստվերը զգացւեցին ու լացին, —նրանց մարդարտանման արտասուրները թափում էին թնած երկրի, սեղաւէտ մարմանզի, ծառերի ու ծաղիկների վրայ և շողշաղում էին աղամանզի նման։

Սոխակը չարունակ երգում էր ու երգում։

Ահա արթնացաւ և հինաւորց անտառը. Թխտենիները կամացուկ շարժում էին իրանց զանգրազեղ ոստերի կանաչազարդ ու թաւախիտ գլուխները և սոսափում էին միմիանց իրանց երազների մասին, թէ ինչպիսի հրաշալի գիշեր է, ուղարկել երկրին ծաղկափթիթ Մայիսը, ինչպէս զեղեցիկ է երգում սոխակը, ինչպէս մարդ զգացում և մի առանձին շերմութիւն է զգում լսելով նրա երգը, ուզում է լալ, ուզում է ապրել . . .

Ահա ճախրեցին թիթեռնիկները, ինչպէս սպիտակ բըմ-
րուլ բարձրացրին իրանց գլխիկները դաշտային ծաղիկները—
կապոյտ անմոռուկը, արծաթափայլ շոշանը, ուսկիփայլ վար-
դակակաշը, —նրանք ձգուում, գոզգոզում էին իրանց նիհար,
կանաչ ցողոմների վրայ, կարծես ուզում էին թռչել անհող
թիթեռնիկների մօտ, խազալ նրանց հետ, լողալ լուսնի ար-
ծաթափայլ լուսում: Այնտեղ, հովտում, հաւաքւել էին ծգրիտ-
ները, իրանց արծաթազօծ շվիներով, որոնց վրայ նւազում
էին նապելի պարեր, միաժամանակ զրբնկացնելով իրանց ար-
ծաթեայ փոքրիկ բոյս ոժիկները, ծղրիտները զրբնկում ձայնիկ-
ներ էին համում, իսկ թիթեռնիկները թեթէ պտոյտներ էին
տնում օդում, կամ փարուղմ էին միւնահց, կամ կաղմում էին
երկար օդային շղթայ:

Ամենից ուշ արթնացաւ հինաւուրց թխտենու հովանու
տուկ գոնեսդ փոքրիկ Մանուշակը: Նա յուզում լսում էր սո-
խակի երգը և նոյնպէս ուզում էր լալ, —մեզմ, ցնծազին ար-
տասուրներով: Նա զգացում էր, որ այնպէս հրաշալի և զե-
զեցիկ էր հինաւուրց անտառը, որ շուրջը այնքան ջերմու-
թիւն և երջանելութիւն կար և որ այսրան զեղեցիկ էր Աս-
տծոյ տշխարհը . . . Յետոյ նա լսեց ծղրիտների գրաւիչ
նեազը և ընկիրահիների ուրախ քրքիչը, բայց ինը ձայն շըր
հանում . . . Այդ բնաշիցն էր: Այս, նա մի խորհրդաւոր
զաղտնիք ունիր, փոքրիկը մի շատ համարձակ բան է մտա-
ծել, և նշ որ, նշ որ շըպէտք է իմանայ նրա մատգրութիւնը,
մանաւանդ այս հինաւուրց, բարի թխտենին, որը այնպէս
թնրոյշ սիրում է իրան և այնպէս հովատար կերպով պահ-
պանում է իր լայն ճիւղիկի տակ:

Իսկ հինաւուրց թխտենին կացաւ Մանուշակի վրայ և
զգւանրով ասում էր նրան, որ մանկիկը երկար է ընել, որ
սոխակը արգէն վերջացրել է իր երգը, որ ընկերուհիները
վաղաց էն արթնացել:

—Զարթիր, զարթիր,—շնչում էր բարի թխտենին,—

ունս ինչպէս հրաշալի վիշեր է, զմայլւիր, նայիր, ահա այն
պարտիզին,—այնտեղ շատ կան գեղեցիկ ծաղիկներ, բայց
զգոյշ կաց, —իբր ծառիկդ թափես, չմոռանաս բո սեբմերը
կրկին գցելու իմ ատահով ճիւղերի տակ, չթազնես նրանց
զուող պարտիզի ցանկապատի այն կողմը ընկնելու: այնտեղ
հիւրասիրութիւն չեն գտնել նրանք, այնտեղ կվիրաւորեն
բո մանկիկներին:

Մանուշակի թերթիկները համգարաւութեամբ թրթռա-
ցին . . . Զլինի թէ հինաւուրց թխտենին արդին գաշակել
է, թէ ինչի մասին է նա վազուց մտածում, ինչ է նա ցան-
կանում այնքան բուռն կերպով և ինչից է նա այնքան խիստ
վախենում: Հենց այսօր նա վճռւել էր երեխաներից մէկին
ուզարկելու, որ իմանայ, թէ ինչ կայ այն բարձր ցանկապա-
տի յիտերը: Այն ինչ ընազ ծաղիկներ են, որ ծաղկում են
այնտեղ և իրանց շուրջը տարածում են այսպիսի սրանչելի
բարձունքը: Այդ հմայական պարտիզում եղած՝ ծահօթ թի-
թեռնիկները զարմանալի բաներ էին պատմել նրան . . . Այնտեղ
ծաղկում է վարդը, ծաղիկների շընազ թագուհին . . .

Թիթեռնիկները ճախրում էին մանուշակի գլխիկի վրա-
յակ, —ահա մէկը նատեց նրա մօտ, և նա կամացուկ ու զգու-
շաւթեամբ իր փոքրիկ հատիկը զրից նրա թեթեն թիւների վրայ
և շնչաց նրան:

—Գէհ, Աստւած քեզ հետ, թոքր այն պարտէզը, որը
ինձ այնքան հրապարել է, —ես չեմ կարոզ ինրս թռչել, —
թոքր գու և տես, ինչ կայ այնտեղ:

Փոքրիկ հատիկը թռչում էր անհող թիթեռնիկի թիւների
վրայ: Ճուտով թիթեռնիկը նկատեց մանուշակի մանկիկին և
քշիչալով ասաց:

—Պինդ բռնիր, մենք թռչում ենք զեպի այնտեղ:

—Կամաց, կամաց . . . Այս, ևս այնպէս վախենու-
մի, ևս լսեցի, —թխտենին տաց, որ ինձ այնտեղ կվիրա-
ւորեն . . .

—Յիմարութիւն է ասում քո թխտենին, ինձ այնտեղ ոչ
սք չի վիրաւորում: Մի վախենար . . . Մենք շուտ կվերա-
դառնանք, և ոչ որ չի իմանալ, և քո հմտաւորց վիճվնթար-
ցող թխտենին:

Բայց դու այնպիսէ հրաշալիքներ կտեսնես. դու կտես-
նես, առաջինը . . .

—Վարդը, վարդը, ես բել եմ . . . դու ինձ ցոյց կը-
տաս վարդը, ես միայն նրան եմ ուզում տեսնել . . .

—Ծատ լաւ. շատ ուրախ եմ . . . ճիշտ է վարդը ամե-
նից գեղեցիկն է . . . Ինչպէս պայծառ ու գեղեցիկ գիշեր
է: Իսկ լուսնի շողերի տակ պարտէզը պանչելի է: Քու
շատ լաւ կտեսնես վարդը: Միայն երբ մօտ թռչենք նրան,
զգոյց եղիք. նա սուր-սուր փշեր ունի, քեզ կը ծակեն, դժ,
յառաջ. —և թիթեռնիկը նետի պէս սլացաւ:

Փոքրիկ սերմիկը յուզեց և զողովրդ:

Ահա նրանք հասան ցանկապատին, թռան նրա վրայով
և ընկան ցրեղապարդ պարտէզը:

—Ահա նա, —ասաց թիթեռնիկը՝ ցոյց տալով վարդի
թռւիը, որը բատծ էր համարեա պատզամբի առաջ: —Դու
մնա այստեղ, իսկ ես կթռչեմ իմ ծանօթ՝ «Աննիկի աշիկներ»
կոչող ծաղիկների մօտ. նրանք սիրում են ինձ և միշտ հիւ-
րասիրում են ինձ բացը մեղրով:

Թիթեռնիկը թռաւ: Մանուշակի փոքրիկ հունգը իջաւ
շեփորուելի ճիւղի վրայ, հինց վարդենու մօտ:

Զքնաղ էր լուսնի լուսով ամբողջովին ողողւած պարտէ-
զը: Ծատ հազարփաւա անուշաբոյր ծաղիկներ կային, բայց
Մանուշակի սերմիկը չէր նայում նրանց վրայ. նու իր հա-
յեացը չէր կարողանում հեռացնել վարդի դեռ կիսարաց,
սակայն ճոխ կոկոնից:

Վարդը ընած էր:

—Ահա վարդը, —ծաղիկների թագուհին, —շշնչաց սեր-
միկը: —Ճիշտ որ թագուհի. միայն սա կարող է ծաղիկների

թագուհին լինել, որովհետեւ սա ծաղիկների մէջ ամենից գե-
ղեցիկն է: Փոքրիկ սերմիկը յանկարծ յիշեց սոխակի երգը:
Նրան թւաց, թէ կրկին լուսմ է այդ երգը. միայն հիմա նշ
թէ անտառի սաղարթից, այլ իր սրտից, և որ նրա սիրացը լի է այդ
դիմֆական երգով: Նա սնասելի երջանիկ էր զգում իրան . . .

—Այ, եթէ կարելի լինէր այստեղ աճել, —մտածում էր
նա, —շեփորուելի հովանու տակ. թագնւել դալարի մէջ այն-
պէս, որ ոչ սք շտեմնէ ինձ, բայց ես կարողանամ գիշեր ու
ցերեկ շարունակ նայել վարդին և ներշնչել նրա անուշ բար-
մունքը . . . Այս, գա մեծ երջանկութիւն կըլինէր ինձ հա-
մար . . . Ինչպէս ուզում եմ համբուրել նրան, այդ սրան-
շելի քնքոյց էակին . . . Ի՞նչ կլինի, եթէ ես կամացուել
թռչեմ նրա մօտ և համբուրեմ նրա անուշաբոյր թերթիկի
ծայրը, միայն ծայրը . . . Ո՞հ, նշ . . . Բայց միթէ գա
վատ բան է: 2է որ գա նշանակում է, որ ես միայն սիրում
եմ նրան . . . Նա կտեսնէ այդ և ինըն էլ ինձ կըսիրէ, կը-
փայփայէ և կասէ. «Ապրիր, մանկիկս, ինձ մօտ . . .» և
մենք ամեն գիշեր միասին կրնենք սոխակի երգը . . . Ասենք,
նա չի զգալ իմ համբոյրը և երբէք չի խմանալ թէ իրան, այդ
հրաշապեղ վարդին, երբ և է համբուրել է վայրի Մանուշա-
կի փոքրիկ հատիկը, իսկ ես զրանով բաղդաւոր կըլինիմ ամ-
բողջ կեանքում» . . .

Մանուշակի փոքրիկ սերմիկը կամաց, ինչպէս լուսնի
ճառագայթ, թռաւ վարդի մօտ, ուզեց համբուրել նրան, բայց
յանկարծ վարդի սուր փշերից մէկը ծակեց նրան և նա ճաց:

Վարդը արթնացաւ:

—Այս ի՞նչ բան է, —ասաց նա անրաւականութեամբ: —
Ո՞վ էր գաւր:

—Ներկեցէր . . . ես . . . Մանուշակի հատիկն եմ, —շնչաց
նա վախեցած:

—Ո՞ր Մանուշակի: Աղնիւ ցեղի . . . Վերջապէս պարու-
իր Մանուշակի:

—Ռ, հտնարակ . . . անտառային . . . այս հինաւոց անտառից . . .

—Այ քեզ բան, —բարկացաւ վարդը: —Ի՞նչպէս դուք ընկար այտեղ: Այս ինչ կարգեր են տիրում մեղանում: Այս բոլորի պատճառը յիմար պարտիզանն է! Հեռացէք, հեռացէք այստեղից:

—Այս, մի արտաքսէք ինձ. —յուսահատութեամբ ասաց Մանուշակսերմիկը: —Թոյլ տւէք գոնէ հեռուից նայել ձեզ . . . դուք այնքան գեղեցիկ էք, ես այնպէս սիրում եմ ձեզ . . . Ես ամեն ըան կը ժողնիմ ձեզ համար —դալարազեղ անտառը, իմ ընկերուհիներին, նոյն խսկ իմ սիրելի թխտենուն . . . Մի արտաքսէք ինձ: Ես կը մեռնիմ վշտից . . . Թոյլ տւէք ինձ աճել այստեղ, ձեզ մօտ . . . Ես շարունակ ուզում եմ նայել ձեզ:

—Ե՞ս, բաւական է զահլա տանէք, ի սէք Աստուծոյ, թռէք, հեռացէք այստեղից: Մոռանմամ էք թէ ես նվ եմ և դուք նվ էք, —զոռոզութեամբ ասաց վարդը՝ ծածկելով թերթիկները, և երեսը յետ դարձրեց: Հինց այդ ժամանակ հատիկի մօտ թռաւ նրա ընկեր թիթեռնիկը և շշնչաց. —Ի՞նչ է բախտաւոր ես զգում քեզ: Բայց փոքրիկ հատիկը լոփի նետուց նրա թեթե թիկիկի վրայ, և նրանք երկուսով նորից բարձրացան հանդորտ նիրհող օդի մէջ:

Մանուշակի հատիկը՝ ծանր վիրաւուածի նման՝ հանդպարտ թռաւ, ցանկապատից դուրս անցաւ. անցաւ ուրախ պարող ծդրիտների մօտից և կամաց իջաւ իր ցողունի, իր հարազատ ծագիկի վրայ, հինաւուրց թխտենու արմատի մօտ:

Յանկարծ նա ցաւ զգաց, այնպիսից ցաւ, որ կարծես վարդի փուշը ծակել էք նրա սրտիկը և նրանում լոեցրել սոխակի երգը, —նրա սիրու պատեց խաւար և ցուրտ:

—Քոռնդ, զոռնդ, —կամացուկ շշնչաց մանուշակը, —զոռնդ և օտար . . .

Այդ բովէին նա ուզում էք, որ ծպրիտները կադարեն ուրախ պարելուց, որ ընկերուհիները չծիծաղեն այլիս, որով-

հետեւ տեսնելով նրանց սրախութիւնը՝ նա աւելի ևս խիստ ցաւ էք զգում: Նա ուզում էք, որ արծաթափայլ լուսինը հանգչի, և աստղերը թափնին, որ խաւարը պատէ Աստծոյ լոյս աշխարհը, որովհետեւ գեղեցիկ վարդը չի սիրում իրան . . .

Մանուշակը տիրում և լաց էք լինում, արցունքները զըլորելով անշարժ խոտի վրայ:

Հինաւուրց թղտենին նոր հասկացաւ, թէ ուր էք Մանուշակի հատիկներից մէկը, նոր իմացաւ նրա մեծ վիշտը: Նա կռացաւ գէպի Մանուշակը, տարածեց նրա վրայ իր մատղաշ, կանաչ ոստերը և ուզում էք միխթարել վշտացտծ սիրմիկին, նա քշիչում էք այնպէս հանգարտ, որ կարծես զիփիւն է շարժում նրա տերեները. շնչալով ասում էք, թէ, նա առաջանից էլ աւելի էք սիրում իր պստիկ բալիկին, որ շուտով կը մարի լուսնի ազօտ լցուը և կը ծագէ ոսկեփայլ արեգակը, որը վեր կը բաշէ լճի վրայ կախւած խաւար ու պազ մշտւշը, կը լուսաւորէ անտառը և ընրոյշ համբայրով իր փայփայէ նրա վիշտը և կը չորացնէ նրա մարզարտանիման արտասուրները . . .

Փոխաղը. աիկեն Բիսեղ



ունի ու համ ու շընթերվայր պայմանական պահանջման մասէ
ունի ու պահանջման ու ոչ նորու ու առար ու ու առ
տեսակ առար ունակ ու ամերկակ պահանջման և քրթու
ամայ նորու ու պահակ թիմբուր առաջնորդ պահանջման ու ու
ու պահանջման նորու ու պահանջման պահանջման ու



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Ելես	
1.	Կինը և հանրային կարծիքը Մասի Պէլէրեան	3
2.	Տանջւածի բողոքը (Հոգեբանական էտիւդ) Տ. Զանազան Մեհրաբեանց	12
3.	Կղղծաւորը (բանաստեղծութիւն) Մասի Պէլէրեան .	40
4.	Ուտօպիայի և իրականութեան մէջտեղը Տ. Թագուհի Բերբերեան	43
5.	Հայրենի վտակ (բանաստեղծութիւն) Զ. Ալեանար .	64
6.	Իմ ճանապահորդական յիշովսւթիւններից Տիրուհի Կոստանեանց	65
7.	Պօան (Նորավէպ) Միակի	87
8.	* * * Բանաստեղծութիւն Օր. Գայանէ Կայալեան .	96
9.	Երկու հակապատկեր (իրական կեանիք) Զ. Ալեանար	97
10.	Պետէվին՝ արաբական կեանիք (սիրավէպ) Մասի Պէլէրեան	101
11.	Մտտերիալիզմը բնական և հասարակական գիտութիւնների մէջ. (ընդհանուր ակնարկ) Տիկ. եփ. Պալեան	108
12.	Միայն մէկը չ'զջաց (պատկեր իրական կեանիք) Զանազան Մեհրաբեանց	119
13.	Սէլիմ աղան (արաբական կեանիք) Մասի Պէլէրեան	140
14.	Մանջուրական սահմանի վրայ (տուրիստուհու տպաւրութիւններից) Օր. Հ. Մէլիք-Հայկազեան . . .	147
15.	Խոհեր Զ. Ալեանար	175

- | | |
|--|-----|
| 16. Երկու նամակ իշխ. Ա. Վ. Արդութեան-Երկայնաբազուկ | 177 |
| 17. Բաղսք իմինթօ | 188 |
| 18. Մի ըռպէ . . . Օլ. Գայանէ Կայալեան | 192 |
| 19. Մի պատմութիւն, որ երբէք եղած չէ (թարգմանութիւն ռուսերէնից) Տ. Մարիամ | 195 |
| 20. Ազգայ յուշատերից Լիրմօնտովի և Նալբան Օր. Ե. Հ. | 206 |
| 21. Վարդի ու մանուչակը փոխադր. Տիկ. Բիւրեղ . . . | 209 |

କାନ୍ତିମାଳା ରାଜପୁଣ୍ୟ

ՎՐՒՊԱԿՆԵՐ

<i>Եպես</i>	<i>Տաղ.</i>	<i>ՏՊՈՒԾԸՆՔ</i>	<i>ՊԵՏԱԿԱՆ</i>
3	5	ստեծուեր	ստեծուեր
5	2	ծնուղ	ծնուղ
6	7	կնդունին	կընդունին
14	5	ծային	ծայրին
15	13	դարձբաց	դարձբաց
17	13	դահճալ	դարձեալ
18	11	այդ ոսկորները	այտուկորները
19	1	գլաս	նրա
20	6	անտարերն էր	անտարերն էր
21	10	2'զիտեմ	2'զիտեմ,
22	11	ամենքը	ամեն մէկը
»	11	ինչպէս,	ինչպէս
23	7	Աղեքսանդր	Աղեքսանդրը
29	14	ապրի	ապրի
30	13	ծայում	ծառայում
»	14	կային	կար
37	1	տարիերի	տարիների
42	1	իրականթեան	իրականութեան
47	15	օրիրակ	օրինակ
48	2	պէտք	պէտք
50	6	2էք	2է
55	3	ծծակենը	ծծակները
56	13	վաշութիւնը	վարչութիւնը
64	1	չարենի	չայրենի
74	1	լսելայն	լսելեայն
82	12	հետի	հետը
84	16	Անտիերպէնի	Անտվերպէնի
90	4	մենակ . . . էր,	մենակ էր . . .
96	3	գարան	գարնան
115	7	սկզբունքներին են	սկզբունքներին են
117	5	կոնֆլիկտը	կօնֆլիկտը
119	2	կետնքից	կետնքից

125	8	գ.	մոայրում
134	13	հ.	միսր
149	6	ն.	պատոհարի խախալիք
150	2	դ.	Այնգուն
151	16	ն.	մղնէ
153	16	ն.	հասնում
"	10	ն.	փազշել
154	11	ն.	շինաշին
"	5	հ.	justīua-mundus
158	8	դ.	երբորդ
159	13	դ.	գեղերիկ
164	9	ն.	պատրաստած
179	4	ն.	էին
182	13	ն.	նիստ էր անում
"	12	ն.	զօպնէի
183	16	ն.	պէտք է
185	15	դ.	զգաց
188	3	դ.	այլայլած
190	3	դ.	պէտք խախաէք
195	13	ն.	խոնհարում
196	14	ն.	աշարհը
197	2	դ.	ամեխախատը
"	15	ն.	այնպիս
203	8	ն.	պետք է—
206	3	ն.	чего . . . печалъный
213	15	ն.	լոնենք

մոայրում

միսր

պատոհարի խախալիք

Այնգուն

մղնէ

հասնում

փազշել

շինաշին

հասցնում

justīua-mundus

յուստիա-մundi

երկրորդ

գեղերիկ

պատրաստած

էին

նիստ անէր

զօպնէի

չպէտք է

զգաց

այլայլած

պէտք է խախաէք

խոնհարում

աշարհը

ամեխախատը

այնպիս

պետք է—

чего . . . печалъный

լոնենք

մոայրում

միսր

պատոհարի խախալիք

Այնգուն

մանկ

հասցնում

փախչել

շինացին

յուստիա-մundi

երկրորդ

գեղեցիկ

պատրաստած

չպէտք է

Գինն է 70 ԿՈՎ.

Զուտ արդիմարի կեսը Զանշեան որբանոցների օգտին է:

Գրքի պահեստ—Екатеринодаръ, Куб. обл. Книжный
маг. Галладжянца.

ՀՀ Ազգային գրադարան



NL0375597

F2.379

